1002

ԶԱՊԷԼ ՏՕՆԷԼԵԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԳԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

Գ. ԳԻՐՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԷՆ ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1897

ԶԱՊԷԼ ՏՕՆԷԼԵԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

Ա. ԳԻՐՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԷՆ ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ

Կ. ՊՈԼԻՍ
ԴՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԸՆՑ
1897

1002

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Ց. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Թիւ 27, Ֆինճանճըլար Եօղուշու, Կ. Պոլիս։

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ۱۸ ذی‌الحجه ۳۱٤ و ۸ مایس ۳۱۳
تاریخلی و ۱۳۳ نومرولی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Շատ հեռու չեն այն ժամանակները, ուր ազգային վարժարաններու մէջ գրաբար քերականութիւն դաս կը տրուէր անչափահաս մանուկներու, որոնք հազիւ կարդալ ու գրել ուսած էին։ Գրաբարը անհասկնալի լեզու մըն էր իրենց համար, և տարիներ կ'անցընէին զոց սորվելով հոլովումներ ու խոնարհումներ, որոնց նշանակութիւնը գրեթէ չէին ըմբռներ։

Փորձառութիւնը զգացուց թէ ժամավաճառութիւն էր գրաբարի աշխատցնել այդ հասակի տղաքը, իրենց խօսած լեզուն սորվեցնելէ առաջ, և Ուսումնական Խորհուրդը իր ծրագրին մէջ ընդունեցաւ աշխարհաբար քերականութիւնը նախակրթարաններու մէջ աւանդելու դրութիւնը։

Սակայն այս պետքը ճանչցուելէ գրեթէ մէկուկէս դար առաջ՝ 1726ին, Մխիթար Աբբայ մտածած էր արդէն ճշդել մեր գաւառաբարբառին քերականական օրէնքները, և պատրաստած էր քերականութիւն մը, որ դեռ ձեռագիր կը մնայ Ս. Ղազարու վանքը. անոր մէկ համառօտութիւնը միայն տպագրուած է տաճկերէն լեզուով 1727ին։ Յետոյ, 1847ին, Էլիաս Ռիկզ՝ անգլիացի միսիոնար մը, Պոլսոյ և Փոքր-Ասիոյ աշխարհաբարին քերականութիւնը գրած է անգլիերէն լեզուով։ Այս երկու երկերը չենք տեսած. միայն գիտենք թէ գործնական արդիւնք մը ունեցած չեն աշխարհաբարի ուսումը մեր մէջ ծաւալելու տեսակէտով։

Մեր վարժարաններուն մէջ նոր լեզուն աւանդելու նպատակով հրատարակուած առաջին քերականութիւնը՝ *Ուղղախօսութիւն*ն է, 1853ին տպուած. այս գործը, որուն գլխաւոր հեղինակն է Ռուսինեան, կը ներկայացնէ աշխարհաբարը ոչ այնպէս ինչպէս որ է, այլ նորօրինակ ուղղագրութեամբ ու կանոններով, որոնց մէջ մեծ դեր կը կատարէ հեղինակին քմահաճոյքը։

Այնուհետեւ 1861ին Պոլիս տպուած է Բիրէճճեանի քերականութիւնը, որ թէպէտ այժմ մոռցուած՝ սակայն ունի իր յաւ կողմերը, և կրնայ նկատուիլ աշխարհաբարի քերականութեան առաջին դասագիրքը, որ գործնապէս օգտակար եղած ըլլայ։

Յետոյ, բուսականի կարգով, կու գայ Հ. Այտընեանի հոյակապ երկը, *Բնական Բերականութիւն արդի աշխարհաբար լեզուի*, 1866ին տպուած Վիեննայի մէջ։ Այս գիրքը, որ մեր դարուն հայ տաղանդին մեծ արտադրութիւններէն մէկն է, երեւան բերած է աշխարհաբարի գոյութեան իրաւունքը՝ գրաբարէն անջատ։ Իր ընդարձակ յառաջաբանը յիշակերտ մըն է աշխարհաբարի պատմութեան, հին դարերէն մինչեւ մեր ժամանակները. իսկ բուն քերականութեան մէջ Հ. Այտընեան կ'ուսումնասիրէ՝ մանրակրկիտ հետազօտութիւններով՝ Պոլսոյ և Փոքր Ասիոյ գաւառաբարբառը, երեւան կը հանէ անոր բաքուն գանձերը, և կը հշդէ անոր քերականական օրէնքները։

Սակայն Հ. Այտընեանի այս փառաւոր երկասիրութիւնը, դասագիրք մը ջրլլալուն պատճառաւ, բնական էր որ ընդհանրանար մեր վարժարաններուն մէջ. միայն թէ զարմանալի է որ մեր այն ժամանակի աշխարհաբար գրողները, ընդհանրապէս գրաբար քերականութիւններու վրայ լեզուն ուսած, չկրցան կամ չուզեցին օգտուիլ այդ աշխատութենէն, որ ժողովրդին լեզուն կը պատկերացնէր, ու հեռանալով անկէ գացին յարեցան գրաբարին, որուն մէջ ուզեցին ձուլել արդի աշխարհաբարը։

Այս շարժման հետ առաջ կու գան այն բազմագլուխ ձեւերը, զորս աշխարհաբարին տուաւ ամէն գրող իր հաշակին և հմտութեան համեմատ։ Այսպէս տեւեց մինչեւ 1880ի ատենները, ուր նոր գրողներու սերունդ մը, հետեւելով քանի մը հիներու, եկաւ հակազդել այդ ձրկտումին դէմ, և աշխարհաբարը վերստացաւ իր բնական, պարզ, յստակ ու ժողովրդական նկարագիրը, քայլ մը առնելով դէպ ի 1840ի և 50ի գրագէտ սերունդին լեզուն, դէպ ի ետ քայլ մը, որ սակայն յառաջադիմութիւն մըն էր։

Գալով աշխարհաբարի քերականութեան դասագիրքերուն, անոնք արդէն սկսած էին 1880էն ետքը մուտ գտնել մեր վարժարաններուն մէջ. Գարագաշեան, Թէրզեան, Ահմեան, Դաւթեան, Գօզանեան, Պետիկեան հետզհետէ հրատարակեցին իրենց գործերը, զորս քննած, իրարու հետ բաղդատած, և գործադրութեան դնելով անձնական փորձառութեամբ օգտուած ենք անոնցմէ՝ այս քերականութիւնը գրելու համար։ Այս գործին մէջ, ուր աշխատութեան կարեւոր բաժին մը ունեցած է Հրանտ Էֆենտի Ասատուր, գլխաւոր ջանքերնիս եղած է պատկերացնել արդի հայերէնին օրէնքները, քաղելով զանոնք լաւագոյն գրողներու երկերէն, և ներշնչուելով մանաւանդ մեր ժողովրդին գործածած կանոններէն, ադքիւր ունենալով մեզ Պոլսոյ աշխարհաբա-

ը։ Մենք մեր կողմէ բնաւ օրէնք մը հեղինակած չենք, որովհետեւ այդ ձեռնհասութիւնը չենք ճանչցած մեզի, նկատելով որ լեզուին մէջ բան մը հեղինակելու իրաւունքը ժողովրդին կը պատկանի և ոչ անհատներուն։ Այսպէս եղած է ամէն ազգի մէջ և Զօսրբն ու Տանքէն են միայն, երկու հանճարներ, որ բացառութիւն կազմած են անգլիական և իտալական լեզուներուն համար։

Մեր ընդունած կանոնները ամբողջովին ամփոփուած չեն սակայն այս Ա. Գրքին մէջ, որ 9—11 տարեկան մանուկներու սահմանուած տարրական դասընթացք մըն է։ Հոս դրած ենք ինչ որ այս աշխատութեան շրջանակը կը ներէ, և Բ. Գրքին մէջ մանաւանդ պիտի երեւայ արդիւնքը այն հետազօտութեանց, զորս կատարած ենք արդի աշխարհաբարին օրէնքները ճշդելու համար, կարգ մը այնպիսի կէտեր ալ երեւան բերելով, որոնք ցարդ դիտուած չէին։

Մեր քերականութեան համար ընտրած ենք Ֆռէտէռիք Պաքայլի մեթոտը, որ իր մէջ կը պարունակէ ընթերցանութեան և ուղղագրութեան հատուածներ, քերականութեան կանոններ իրենց հրահանգներով, եւ շարադրութեան ու արտասանութեան դասեր։ Բոլոր ոտանաւորները մասնաւորապէս պատրաստուած են այս գրքին համար, մէկ մասը թարգմանութեամբ, մէկ մասը հետեւողութեամբ, և փոքրիկ մաս մըն ալ հեղինակութեամբ։ Իսկ շարադրութեան դասերը ընթերցանութեան ծառայող հատուածներուն վրայ յօրինուած են հարցումներով, որոնց գրաւոր և բերանացի պատասխանները պիտի վարժեցնեն տղաքը՝ գրելու և պատմելու։ Ցիշեալ հատուածներուն՝ ինչպէս բոլոր քերականութեան մէջ՝ խնամք տարած ենք լեզուի միութիւն պահելու, և գործադրած ենք ճշդիւ ինչ որ աւանդած ենք տեսականով։ Ոտանաւորներուն մէջ միայն ընդունած ենք լեզուի աննշան զարտուղութիւններ, գլխաւորաբար յօդերու գործածութեան մասին. այս քերթողական ազատութեան կանոնները, որոնք գրեթէ ամէն լեզուի մէջ նուիրագործուած են, պիտի աւանդենք Բ. Գրքին մէջ։

Մեր դասախօսութեան ընթացքին մէջ՝ անձնական փորձառութեամբ տեսած ենք այս մեթոտին առաւելութիւնները, որովհետեւ մեր քերականութիւնը երկու տարի գործադրելէ ետքը հրապարակ կը հանենք. մասնաւորապէս դիտած ենք որ տղաք դիւրութեամբ և հաճոյքով կը պատրաստեն այս դասագրքին պարտականութիւնները, ինչ որ միակ պայմանն է յաջող դասաւանդութեան։

Բիւրա, 1 Օգոստոս, 1897. Զ. Տ.

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ԲԱՌ ԵՒ ԽՕՍՔ

Ա. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԲԱՌԻ ԱԴՋԻԿԸ

Արսինէ բարի աղջիկ մըն է։ Փողոցները չի պտտիր։ Չար տղայ հետ չի խաղար։ Ուշադրութեամբ իր դասերուն կը զբաղի։ Զբօսանքի ժամուն իր պուպրիկին հետ կը զուարճանայ։ Յետոյ իր պզտիկ եղբայրը կը պտտցնէ պարտէզին մէջ։ Միշտ կը հոգէ որ վտանգ մը չպատահի մանկիկին։ Իր ծնողքը շատ կը սիրեն զինքը։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Օրինակել այս հատուածը, բաժնել բառերը իրարմէ հոլիզոնական գծով, և խօսքերը ուղղահայեաց գծով։

Օրինակ. — *Արսինէ - բարի - աղջիկ - մըն - է։ / Փողոցները, եւայլն։*

2. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

1. *Բառերը ի՞նչ բանի կը ծառայեն։ — Բառերը խօսելու և գրելու կը ծառայեն։*

2. *Խօսքը ի՞նչ է։ — Խօսքը բառերու միացումն է իմաստ մը յայտնելու համար։*

3. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Արսինէ ինչպէս աղջիկ է։ 2. — Փողոցները կը պտտի։ 3. — Զար տղոց հետ կը խաղայ։ 4. — Ի՞նչ բանի կը զբաղի։ 5. — Ի՞նչ կ'ընէ զբօսանքի ժամուն։ 6. — Ուրիշ ինչ կ'ընէ։ 7. — Ինչու կը հսկէ մանկիկին վրայ։ 8. — Ո՞վ կը սիրէ զինքը։

4. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղական, Հայցական	Վտանգ
Սեռական, Տրական	Վտանգ **ի**
Բացառական	Վտանգ **է**
Գործիական	Վտանգ **ով**

Դիտողութիւն. — *Բառի մը վերջաւորութեան այս կերպով փոխուելուն հոլովում կ'ըսուի։*

1. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԲԱՐԻ ԱՂՋԻԿԸ

Փոքրիկ աղջիկ մըն եմ բարի,
Կը խելօքնամ ամէն տարի.
Գիրքերուս հետ կ'ապրիմ մինակ,
Անոնք եղան հաճոյքս հիմակ։

Միրգ, կարկանդակ, սեր եւ շաքար
Հրապոյր չունին ալ ինձ համար։
Գրիչ, կարկին, Թուղթ ու տետրակ
Խաղալիքներս եղան հիմակ։

---

3. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — *Արսինէ ինչպէս աղջիկ է։* 2. — *Փողոցները կը պտտի։* 3. — *Զար տղոց հետ կը խաղայ։* 4. — *Ի՞նչ բանի կը զբաղի։* 5. — *Ի՞նչ կ'ընէ զբօսանքի ժամուն։* 6. — *Ուրիշ ինչ կ'ընէ։* 7. — *Ինչու կը հսկէ մանկիկին վրայ։* 8. — *Ո՞վ կը սիրէ զինքը։*

4. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղական, Հայցական	Վտանգ
Սեռական, Տրական	Վտանգ **ի**
Բացառական	Վտանգ **է**
Գործիական	Վտանգ **ով**

Դիտողութիւն. — *Բառի մը վերջաւորութեան այս կերպով փոխուելուն հոլովում կ'ըսուի։*

1. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՌԱՐԻ ԱՂՋԻԿԸ

Փոքրիկ աղջիկ մըն եմ բարի,
Կը խելօքնամ ամէն տարի.
Գիրքերուս հետ կ'ապրիմ մինակ,
Անոնք եղան հաճոյքս հիմակ։

Միրգ, կարկանդակ, սեր եւ շաքար
Հրապոյր չունին ալ ինձ համար։
Գրիչ, կարկին, Թուղթ ու տետրակ
Խաղալիքներս եղան հիմակ։

ՎԱՆԿ

—

Բ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ԱՌՈՒՆ**

Առուս է։ Աքաղաղները կը խօսին։ Տանը մէջ ամէն մարդ կ'արթննայ։ Հայրիկը կը մեկնի։ Կ'երթայ իր աշխատանոցին մէջ գրաղելու։ Մայրիկը զմեզ կը հագուեցնէ, կը մաքրէ, եւ նախաճաշելս կը պատրաստէ։ Յետոյ ես դպրոց կ'երթամ փոքրիկ եղբօրս հետ։ Մեծ քոյրս տունը կը կենայ մայրիկին օգնելու համար։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

5. Օրինակել այս հատուածը, և գատել անոր վանկերն ու բառերը.

Օրինակ. — *Առ - տու / է։ Ա - քա - ղաղ - նե - ը / կը / խօ - սին։*

6. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

7. Օրինակել մեկ, երկու և աւելի վանկ ունեցող հետեւեալ բառերը գատ գատ սիւնակներու մէջ.

Սեղան, տիրոց, անձեռոց, Թանաման, պնակ, սկաւառակ, դգալ, պատառաքաղ, դանակ, աղցանոց, աղաման, գաւաթ, սրուակ, սրճաման, հաց, գինի, միս, կաթ, կարագ։

ԴԱՍ

3. *Վանկը ի՞նչ է։ — Երբ մէկ կամ աւելի տառեր մէկ հնչումով կ'արտասանուին վանկ մը կը կազմեն, ինչպէս. մարդ, հաց, հո-գի։*

8. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Աքաղաղները ե՞րբ կը խօսին։ 2. — Հայրիկը ո՞ւր կ'երթայ առաւուն։ 3. — Ի՞նչ կ'ընէ աշխատանոցին մէջ։ 4. — Ինչո՞ւ համար կ'աշխատի։ 5. — Մայրիկը ի՞նչ կ'ընէ։ 6. — Ո՞ր ժամուն նախաճաշ կ'ընենք։ 7. — Յորեկուան կերակուրը ի՞նչ կը կոչուի։ 8. — Իրիկունը։ 9. — Դուն որո՞ւն հետ դպրոց կ'երթաս։ 10. — Մեծ քոյրդ ի՞նչ կ'ընէ։

9. Օրինակել և գոց սրվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ. Հայց.	Դպրոց
Սեռ. Տրակ.	Դպրոց ի
Բաց.	Դպրոց է
Գործ.	Դպրոց ով

Այսպէս հոլովել՝ գրաւոր և բերանացի.

Աքաղաղ, աշխատանոց, նախաճաշ, մայրիկ, հայրիկ, կերակուր։

2. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԴԵՂՋՈՒԿԻՆ ՊԱՆԻՐԸ

Դեղջուկն օր մը պանիր գընած՝
Դարանին մէջ կը պահէր,
Երբ ճեղքուածքին մէջէն յանկարծ
Ընդնըշմարեց մուկ մը գէր։
Բերել տուաւ կատու մը լաւ
Որ պահպանէ գոյքն իրեն.
Փիսիկն առաջ մուկը կերաւ,
Պանիրն անոր վըրայէն։

ԼԸ ՊԱՅԵԻ

ԳԻՐ

Գ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԾՆՈՒՈՒԸ

Պզտիկ շուն մը ունիմ։ Մեր տունը ծնած եւ մեր ձեռքը մեծցած է։ Երկու տարու է արդէն, բայց միշտ կլոր եւ պզտիկ է։ Անունը Սէլա է։ Երբոր զինքը կանչեմ, կը վազէ կու գայ։ Դպրոց գացած ատենս՝ սակառս բերանը առած կ'ընկերանայ ինծի։ Ինծի հետ կը խաղայ։ Գիշերները անկողնիս տակ կը պառկի, եւ երբ դուրսէն ձայն մը լսէ, անմիջապէս ականջները վեր կը վերցնէ ու կը հաչէ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

10. Օրինակել այս հատուածը, և ամէն մէկ բառին ձայնաւորներն ու բաղաձայնները գատել.

Օրինակ.— *Պզտիկ բառին մէջ մէկ ձայնաւոր կայ* **ի**, *եւ չորս բաղաձայն* **պ, զ, տ, կ**։

11. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

4. Ի՞նչ է *գիրը*։ — *Գրուած բառերը գիրերէ կը բաղկանան։*

5. Քանի՞ տեսակ գիր կայ։ — *Երկու տեսակ գիր կայ. ձայնաւոր և բաղաձայն։*

6. Ձայնաւորները որո՞նք են։ — *Ձայնաւորները այն գիրերն են որ ինքնին ձայն ունին, և ութ հատ են. ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ։*

7. Բաղաձայնները որո՞նք են։ — *Բաղաձայնները այն գիրերն են, որ ձայնաւորներուն օգնութեամբ միայն կրնան ձայն հանել, և երեսուն հատ են. բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք։*

12. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչ ունիս դուն։ 2. — Ո՞ւր ծնած եւ հոր մեծցած է։ 3. — Քանի՞ տարու է։ 4. — Անունը ի՞նչ է։ 5. — Ի՞նչ կ'ընէ երբ զինքը կանչես։ 6. — Դպրոց գացած ատենդ ի՞նչ կ'ընէր։ 7. — Գիշերները հոր կը պառկի։ 8. — Ինչո՞ւ կը հաչէ։ 9. — Շունը ի՞նչպէս կենդանի է։

13. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ. Հայց.	**Ձայն**
Սեռ. Տրակ.	**Ձայն ի**
Բաց.	**Ձայն է**
Գործ.	**Ձայն ով**

Այսպէս հոլովել՝ գրաւոր և բերանացի.

Բառ, սակառ, ականջ։

3. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՇՆԻԿԸ

Շնիկս իմ սիրուն
Ի՜նչ աղուոր ես դուն,
Ի՜նչ գանգուր վարսեր՝
Գըլխէդ են կախուեր։
Երբ ուրախ ըլլամ,
Ու խընդամ խաղամ,
Ինծի հետ դուն ալ
Կը սիրես խաղալ։
Իսկ երբ սաստեն զիս,
Ու ցաւի հոգիս,
Դուն ալ ինծի պէս
Արցունք կը թափես։

Ե եւ Է ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐԸ

Դ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ՄԱՔՐԱՍԷՐ ՏՂԱՆ**

Պետրոս մաքրասէր տղայ մըն է։ Գիր գրած ատեն երբեք մատները չ'աղտոտեր, եւ հագուստին վրայ թանաքի բիծ մը չի տեսնուիր։ Ճաշի ատեն անձեռոցը միշտ կուրծքին վրայ կը պահէ։ Կերակուրը միշտ զգուշութեամբ կը տանի բերանին որ չթափի։ Վրան գլուխը միշտ կանոնաւոր է եւ մաքուր։ Ամէն մարդ հաճոյքով կը մօտենայ իրեն։ Ամէնուն սիրելի դարձած է։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

14. Օրինակել այս հատուածը և խաչանիշով նշանակել այն բառերը, որոնց մէջ Ե և Է տառերը միեւնոյն հնչումը ունին, իսկ ստորագծել զանոնք, որոնց մէջ այդ տառերը իրենց յատուկ հնչումը կը պահեն։

15. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

8. Ե եւ Է ձայնաւորները ի՞նչ հնչում ունին բառերուն մէջտեղը։ — *Ե և Է ձայնաւորները բառերուն մէջտեղը միեւնոյն հնչումը ունին, ինչպէս. մաքրասէր, իրենց։*

9. Ե եւ Է ձայնաւորները ի՞նչպէս կը հնչուին բառերուն սկիզբը։ — *Ե և Է ձայնաւորները իրենց յատուկ հնչումը կը պահեն բառերուն սկիզբը, ինչպէս. երջանիկ, էակ։*

10. Բառերուն վերջը Ե գիրը կը գործածուի՞։ — *Ե գիրը բնաւ չի գործածուիր բառերուն վերջը։*

16. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչպէս տղայ է Պետրոս։ 2. — Գիր գրած ատեն ձեռքերը կ՚աղտոտէ։ 3. — Սեղանին վրայ անձեռոց կը կրէ։ 4. — Կերակուրը ի՞նչպէս կը տանի բերնին։ 5. — Ինչո՞ւ։ 6. — Վրան գլուխը ի՞նչպէս է։ 7. — Ամէն մարդ կը մտենայ իրեն։ 8. — Ինչո՞ւ հաճոյքով կը մտենայ։ 9. — Ինչո՞ւ սիրելի է ամէնուն։

17. Օրինակել և զոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ. Հայց.	*Զգուշութիւն*
Սեռ. Տրակ.	*Զգուշութեան*
Բաց.	*Զգուշութենէ*
Գործ.	*Զգուշութեամբ*

Այսպէս հոլովել՝ գրաւոր և բերանացի.

Մաքրութիւն, ծուլութիւն, հեզութիւն, չարութիւն։

4. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԱՐԾԻՒՆ ՈՒ ԽՂՈՒՆՋԸ

Արծիւն օր մը՝ տէրն ահարկու
շանթերու,
Ծառի մը ծայրն եկաւ իջաւ
ըշտապաւ.
Եւ խըղունջ մը նըշմարելով
հոն իր քով,
«Զարմանք, ըսաւ, անարգ զեռուն,
ի՞նչպէս դուն
Ելար եղար ինձ դըրացի։»
—«Սողացի։»

ՀԵՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ

16. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչպէս տղայ է Պետրոս։ 2. — Դիր գրած ատեն ձեռքերը կ՚աղտոտէ։ 3. — Սեղանին վրայ անձեռոց կը կրէ։ 4. — Կերակուրը ինչպէս կը տանի բերնին։ 5. — Ինչու։ 6. — Վրան գլուխը ինչպէս է։ 7. — Ամէն մարդ կը մտենայ իրեն։ 8. — Ինչու հաճոյքով կը մտենայ։ 9. — Ինչու սիրելի է ամէնուն։

17. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ. Հայց.	*Զգուշութիւն*
Սեռ. Տրակ.	*Զգուշութ եան*
Բաց.	*Զգուշութ նեն*
Գործ.	*Զգուշութ եամբ*

Այսպէս հոլովել՝ գրաւոր և բերանացի.

Մաքրութիւն, ծուլութիւն, հեզութիւն, չարութիւն։

4. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԱՐԾԻՒՆ ՈՒ ԽՂՈՒՆՋԸ

Արծիւն օր մը՝ տէրն ահարկու
շանթերու,
Ծառի մը ծայրն եկաւ իջաւ
ըշտապաւ.
Եւ խըղունջ մը նըշմարելով
հոն իր քով,
«Զարմանք, ըսաւ, անարգ զեռուն,
Ինչպէս դուն
Ելար եղար ինձ ղըրացիս։»
—«Սողացի։»

ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

Ո եւ Օ ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐԸ

Ե. ԸՆԹԵՐՑՈՒՄ — ՕՐԻՈՐԴ ՎԱԽԿՈՏ

Ես քոյր մը ունիմ Ովսաննա անունով, որուն Օրիորդ Վախկոտ կ'ըսեն տանը մէջ։ Ամէն բանէ կը դողայ։ Գիշեր ատեն չի կրնար ինքնիրեն քովի սենեակը երթալ։ Հովին ձայնէն կը սարսափի։ Պառկած տեղը՝ եթէ դուրսը շշուկ մը լսէ, գլուխը ծածկոցին տակ կը պահէ։ Ով որ կ'իմանայ իր այսչափ վախկոտ ըլլալը կը խնդայ վրան։ Ծնողքս կը յանդիմանեն միշտ զինքը իր այս թերութեանը համար։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

18. Օրինակել այս հատուածը, խաչանիշով ցոյց տալ այն բառերը որոնց մէջ ո և օ ձայնաւորները միեւնոյն կերպով կը հնչուին, և ստորագծել այն բառերը, որոնց մէջ ո գիրը իր յատուկ հնչումը կը պահէ։

19. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

Դ Ա Ս

11. Ո եւ Օ ձայնաւորները ի՞նչպէս կը հընչուին բառերուն մէջտեղը։ — *Ո և Օ ձայնաւորները միեւնոյն կերպով կը հնչուին բառերուն մէջտեղը, ինչպէս. ororng, ապոոng։*

12. Ի՞նչպէս կը հնչուի Ո ձայնաւորը վ բաղաձայնէն առաջ։ — *Ո ձայնաւորը վ բաղաձայնէն առաջ դրուելով Օ ի նման կը հնչուի, ինչպէս. ով, ովկիանոս, եւայլն։*

13. Ո ձայնաւորը ի՞նչպէս կը հնչուի բառերուն սկիզբը։ — *Ո ձայնաւորը իր յատուկ հնչումը կը պահէ բառերուն սկիզբը, ինչպէս. ոսկի, ոսայն։*

20. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Քոյրդ ինչպէս կ'անուանեն տանը մէջ։ 2. — Ինչու՞ համար։ 3. — Գիշերը կրնայ մինակ պտտիլ։ 4. — Ի՞նչ բանէ կը սարսափի։ 5. — Ի՞նչ կը նշանակէ սարսափիլ։ 6. — Եթէ շշուկ մը լսէ, ինչ կ'ընէ։ 7.— Իր վախկոտ ըլլալը լսողը ինչ կ'ըսէ։ 8. — Ինչու՞ համար։ 9. — Ծնողքդ ինչպէս կը վարուին իրեն հետ։ 10. — Ինչու՞ համար կը յանդիմանեն զինքը։ 11. — Ի՞նչ կը նշանակէ թերուբիւն։

21. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ. Հայց.	*Թերութիւն*
Սեռ. Տրակ.	*Թերութ**եան***
Բաց.	*Թերութ**ենէ***
Գործ.	*Թերութ**եամբ***

Այսպէս հոլովել՝ գրաւոր և բերանացի.

Գիտութիւն, զօրութիւն, վատութիւն, քաջութիւն։

5. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՔՐԻԿ ԲԱՐՁԻԿԸ

Փոքրիկ բարձիկ սիրական,
Կակուղ՝ գըլխուս տակ տըկար,
Ճերմակ, տաքուկ, պատուական
Փետրով լեցուած ինձ համար.

Հովին ձայնէն երբ վախնամ,
Գայլն ու մըրրիկ երբ գոռան,
Վըրադ նըստիլ միշտ կու գամ,
Փոքրիկ բարձիկ սիրական։

Կան անթիւ խեղճ մանուկներ
Մերկ, մայր չունին, չունին տուն,
Եւ բարձ մ'անգամ չեն գըտներ
Երբ աչքերնին փակէ քուն։

Ո՜հ, դո՛ռըն բաղդ, միշտ քընատ՝
Կը տառապին երբ այսպէս,
Անուշ մայրիկ, անընդհատ
Արիւն կ'երթայ իմ սըրտէս։

ՏԻԿԻՆ ՏԷՊՕՌՏ ՎԱԼՄՕՌ

ԲԱՂԱԴՐԵԱԼ ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐ

Զ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՆՈՒԱՐԴԻՆ ՊՈՒՊՐԻԿԸ

Նուարդ աղուոր պուպրիկ մը ունի։ Աչքերը կապոյտ եւ մազերը դեղին են։ Այտերուն վրայ պզտիկ փոսիկներ կան, որոնք հիացում կ'ազդեն ամէնուն։ Բերանը կը բացուի ու կը դոցուի ճերմակ ակռաներուն վրայ։ Նուարդ մօր մը պէս կը խնամէ զայն։ Զմեռուան համար վարդագոյն ատուիէ գեղեցիկ շրջազգեստ մը շինեց անոր։ Մուշտակէ պատուական վերարկու մը ալ պիտի կարէ։ Տեսնենք ինչե՛ր պիտի պատրաստէ ամառուան համար։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

22. Օրինակել այս հատուածը, և խաչանիշով ցոյց տալ *բաղադրեալ ձայնաւորներն* ու ստորագծել *երկբարբառները*։

23. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

14. *Բաղադրեալ ձայնաւորները* որո՞նք են։ — *Բաղադրեալ ձայնաւոր կ'ըսուին աւ, այ, եա, եօ, եւ, իւ, ու, ոյ։*

15. *Ու* ի՞նչ ենչում կը ստանայ բառի մը մէջտեղը ձայնաւորէ մը առաջ դրուելով։ — *Ու բառի մը մէջտեղը ձայնաւորէ մը առաջ դրուելով վ ի հնչում կը ստանայ, ինչպէս. կը տարուի պէտք է կարդալ տարվի, Նուարդ պէտք է կարդալ Նրվարդ։*

16. *Երկբարբառները* որո՞նք են։ — *Երկբարբառ կ'ըսուին իա, իէ, իո, իօ, իու, ուի, ուէ, ուա, ուո, էո, էու, էի։*

24. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Նուարդ ինչ ունի։ 2. — Պուպրիկին մազերն ու աչքերը ինչ գոյն ունին։ 3. — Ի՞նչ կայ այտերուն վրայ։ 4. — Ի՞նչ կը նշանակէ հիւացում ազդել։ 5. — Բերանը կը բացուի։ 6. — Նուարդ ինչպէս կը խնամէ զայն։ 7. — Ի՞նչ շինեց անոր ձմեռուան համար։ 8. — Ուրիշ ինչ պիտի կարէ անոր։

25. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ. Հայց.	*Հիւացում*
Սեռ. Տրակ.	*Հիւաց* **մաեն** *կամ Հիւացում* **ի**
Բաց.	*Հիւացում է*
Գործ.	*Հիւացում* **ով** *կամ Հիւաց* **մամբ**

Այսպէս հոլովել՝ գրաւոր և բերանացի.

Մտածում, լուծում, երդում, զգացում, կոչում, զարգացում, յուզում, ուսում։

Ուղղական ընել հետեւեալ բառերը.

Զմայլմամբ, ցայտման, ծագմամբ, ցնծումի, խնդումով, լրման, կծկումով, պրկման, սեղմումէ, ողողման, հոսումէ։

6. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄԱՆՈՒԿԸ

Լոյս ժըպիտովն ինչ գեղեցիկ է տըղան.
Անուշ, անմեղ կուզէ խօսիլ ամէն բան.
Արցունքն իսկոյն կը մարի։
Իր զարմացկոտ աչքն ամէն կողմ կը յածի,
Կեանքին կու տայ իր Թարմ հոգին խաւարծի,
Եւ շըրթունքներն համբոյրի։

Տէր, չտեսնեմ, սիրականներս ալ ինձ պէս,
Ծընողքս, եղբայրս եւ ոսոխներս անգամ վէս,
Որք չարիքով կը յաղթեն,
Թող չը տեսնեն ամառն առանց վարդերու,
Վանդակն անհաւ եւ փեթակներն անմեղու,
Տունն անմանուկ չը տեսնեն։

ՎԻՔԹՕՌ ՀԻՒԳՕ

Յ ԳԻՐԸ

Է. ԸՆԹԵՐՑՈՒՄ — ՁԱՆՈՐՍՈՒԹԵԱՆ ՀԱՃՈՑԸԸ

Յակոբ՝ մեծ եղբայրս նաւակ մը գնեց։ Ամէն իրիկուն զմեզ ծովուն վրայ կը պտտցնէ։ Երբեմն ալ ձուկ որսալու կը տանի զմեզ ծովուն բացերը։ Մեր կարթերը առաջուց կը պատրաստենք։ Խայծերը կեռ ասեղին ծայրը կ'անցնենք, ու մինչեւ ջուրին յատակը կ'երկնցնենք։ Երբ ձուկը գայ խայծը ուտելու, իսկոյն վեր կը քաշենք։ Խատուտիկ ձուկեր նաւուն մէջ կը լեցուին, եւ ասդին անդին կը ցատկռտեն։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

26. Օրինակել այս հատուածը, խաչանիշով ցոյց տալ այն բառերը, որոնց մէջ յ գիրը կը հնչուի, և ստորագծել այն բառերը, որոնց վերջի յ գիրը անձայն կը մնայ։
27. Կրկին օրինակելով այս հատուածը, ստորագծել այն բառերը, որոնց մէջ յ գիրը մեղմ և ի պէս կը հնչուի, և խաչանիշով ցոյց տալ այն բառերը որոց մէջ ի ի հնչումը կը ստանայ։
28. Գտնել տասը բառ., որոնք յ ով վերջանան։
29. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

17. Յ գիրը ի՞նչպէս կը հնչուի բառերուն վերջը։ — *Յ գիրը անձայն կը մնայ բառերուն վերջը, բաց ի կարգ մը միավանկներէ. հայ, բայ, եւն։*

18. Յ գիրը ի՞նչպէս կ'արտասանուի բառերուն սկիզբը։ — *Յ գիրը բառերուն սկիզբը հի պէս կ'արտասանուի, ինչպէս. յուզում, յաւիտեան։*

19. Ի՞նչպէս կը հնչուի Յ գիրը երբ *ի, ո, ա,* ձայնաւորներուն միանայ բառերուն մէջտեղը։ — *Յ գիրը երբ բառերուն մէջտեղն է, ձայնաւորէ մը ետքը՝ կիսաձայն ի ի պէս կը հնչուի, ինչպէս. մայր, ցոյր, իյնալ։*

30. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Յակոբ ի՞նչ գնեց։ 2. — Իրիկունները ո՞ւր կը պտտցնէ զձեզ։ 3. — Ո՞ւր կը տանի զձեզ ձուկ որսալու։ 4. — Ի՞նչ է կարբը։ 5. — Ի՞նչ է խայծը։ 6. — Կեռ որո՞ւ կ'ըսուի։ 7. — Ձեր կարթերը ո՞ւր կ'երկնցնէք։ 8. — Ի՞նչ կ'ընէք երբ ձուկը զայ խայծը ուտելու։ 9. — Ի՞նչ կը նշանակէ խաւտուտիկ։ 10. — Ձուկերը ի՞նչ կ'ընեն նաւուն մէջ։

31. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ. Հայց.	Ծով
Սեռ. Տրակ.	Ծովու
Բաց.	Ծովէ
Գործ.	Ծով ով

Այսպէս հոլովել՝ սա միավանկ բառերը.

Նաւ, հաւ, շահ, զահ, պահ, հայ, ձի, դար, մարդ, արջ, կով, դի, Թի, մանչ։

7. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԶՈՒԱՐԹ ՆԱՒԱՍՏԻՆ

Զուարթ նաւաստին
Ծովերուն վրայ,
Հովին հոսանքին
Դիմագրաւ կ'երթայ։
Զերթ ծովու Թըռչուն
Միշտ ծայրը կայմին,
Իր երգը հընչուն
Կը յանձնէ հովին։
Կ'անցնի վըտանգէն
Աշխոյժ և ուրախ,
Ու չ'ազդեր իրեն
Մըրրիկն անգամ վախ։
Սեւ ամպն ալ վերէն
Երբ իջնէ գըլխուն,
Կը կըրկնէ նորէն
Իր երգը հընչուն։

ԱՆՈՒՆ ԿԱՄ ԳՈՅԱԿԱՆ

ԱՆՁԻ, ԱՆԱՍՈՒՆԻ ԵՒ ԻՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Ը. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԿԱԳԱՆԴԻ ՆՈՒԷՐՆԵՐՍ

Հայր մը, մայր մը, եղբայր մը եւ երկու քոյր ունիմ։ Հայրս եւ մայրս գիս շատ կը սիրեն։ Հայրս այս տարի Կաղանդին աղուոր խաղալիկ մը նուիրեց ինծի։ Այս նուէրը վարակս մըն է, որուն մէջ կայ ձի մը, կով մը, երկու մաքի, այծ մը, շուն մը եւ ուլ մը։ Իսկ մայրս կահաւորուած պզտիկ տուն մը նուիրեց։ Այս տունը ունի սեղանատուն մը, սրահ մը եւ ննջասենեակ մը։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

32. Դրել զատ զատ սիւնակներու մէջ այս հատուածին մէջի անձերուն, անասուններուն և իրերուն անունները։

33. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

34. Մէյ մէկ նախադասութիւն շինել հետեւեալ բառերով.

Վառնակ, մտրուկ, հորթ, ուլ, գառնուկ, Ցոժիւն, գուռակ, կորիւն, եղնորթ, գաւազ, խոնկոր։

Օրինակ. — *Ձիուն ձագը մտրուկ կը կոչուի։*

ԴԱՍ

20. Ի՞նչ է *անունը* կամ *գոյականը։* — *Ամէն անձ, ամէն անասուն, ամէն իր անուն մը ունի, որուն գոյական ալ կ'ըսուի, ինչպէս. հոլիւ (մարդու անուն), կատու (անասունի անուն), տուն (իրի անուն)։*

35. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Քու ընտանիքդ քանի՞ հոգիէ կը բաղկանայ։ 2. — Ծնողքդ զքեզ կը սիրե՞ն։ 3. — Հայրդ ի՞նչ նուիրեց քեզի։ 4. — Ե՞րբ նուէր կու տան իրարու։ 5. — Ի՞նչ է փարախը։ 6. — Փարախիդ մէջ ի՞նչ անասուններ կան։ 7. — Հորթը ի՞նչ է։ 8. — Դառնո՞ւկը։ 9. — Ո՞ւղը։ 10. — Ո՞վ արօտ կը տանի հօտը։ 11. — Ո՞վ կը պահպանէ հօտը։ 12. — Մայրդ ի՞նչ նուէր տուաւ քեզի։

36. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ. Հայց.	Տարի
Սեռ. Տրակ.	Տար ուան
Բաց.	Տար ի՝ կամ Տարու ընէ՝
Գործ.	Տարի ով

Այսպէս հոլովել՝ գրաւոր և բերանացի.

Ամառ, ձմեռ, երէկ, հիմակ, վաղը, ատեն, օր։

Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ. Հայց.	Հայր
Սեռ. Տրակ.	Հայ or
Բաց.	Հայ ոմէ՝
Գործ.	Հայ ոմով

Այսպէս հոլովել.

Մայր, եղբայր, կնքամայր, կնքահայր, մօրեղբայր, հօրեղբայր, սանահայր։

ՆԻՒԹԱԿԱՆ ԵՒ ՎԵՐԱՑԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Թ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՃՆՃՂՈՒԿԸ

Ճնճղուկ մը ագարակի մը պատին վրայ բոյն դրեր էր։ Ամէն օր ագարակին հաւերուն կը նայէր, եւ անոնց մէջ կը նախանձէր. որովհետեւ ինք ձմեռուան մէջ անօթութենէ կը մեռնէր, անոնք աղէկ կ'ուտէին կը խմէին։ Առաւօտ մը չչնկոց մը լսելով արթնցաւ քունէն։ Խառվուրթիւն մը նշմարեց ագարակին հաւերուն մէջ։ Ուշադրութեամբ դիտեց. ագարակին տէրը հաւնոցը մտաւ, երկու վառեակ առաւ ու գլուխնին կտրել տուաւ։ Ճնճղուկը ա՛լ չգանգատեցաւ իր դժբաղդութենէն։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

37. Օրինակել այս հատուածը, ստորագծել *նիւթական* անունները, և խաչանիշով ցոյց տալ *վերացական* անունները։
38. Տասը հատ *նիւթական* և տասը հատ *վերացական* անուն գտնել, ու զատ զատ սիւնակներու մէջ գրել։
39. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

21. Որո՞նք են *նիւթական անուն*ները։ — *Նիւթական կ'ըսուին այն անունները, որոնց ցոյց տուած անձը, իրը կամ անասունը կը տեսնենք կամ կը շօշափենք, ինչպէս. ծաղիկ, օձ, մարդ։*

22. Որո՞նք են *վերացական անուն*ները։ — *Վերացական կ'ըսուին այն անունները, որոնց ցոյց տուած դաղափարը մտքով միայն կ'ըմբռնենք, ինչպէս. եռանդ, զգացում, գիտութիւն։*

23. Ո՞ր բառերը ընդհանրապէս *վերացական* են։ — *Ութիւն և ում վերջաւորող բառերը վերացական են։*

40. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — ՃՆՃՂՈՒԿԸ ՈՒՐ ԲՈՅՆ ԴՐԵՐ ԷՐ։ 2. — Ի՞ՆՉ Է ՃՆՃՂՈՒԿԸ։ 3. — Դեռ ուրիշ ինչ Թռչուններ գիտէք։ 4. — Ի՞նչ է ագարակը։ 5. — ՃՆՃՂՈՒԿԸ ԻՆՉՈՒ ԿԸ ՆԱԽԱՆՁԷՐ ԱԳԱՐԱԿԻՆ ՀԱՒԵՐԷՆ։ 6. — Առտու մը ինչ պատահեցաւ։ 7. — Ի՞նչ նշմարեց ագարակին հաւերուն մէջ։ 8. — Հաւերը ինչՈՒ խռովեր էին։ 9. — Ագարակին տէրը ինչ ընել տուաւ։ 10. — ՃՆՃՂՈՒԿԸ այնուհետեւ զանգատեցաւ իր վիճակէն։ 11. — ԻնչՈՒ չգանգատեցաւ։

41. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղ. Հայց.	Ներ	Բոյր	Կին
Սեռ. Տրակ.	Ներ **ոջ**	Բ **ոջ**	Կ **ոջ**
Բաց.	Ներ **ոջմէ**	Բ **ոջմէ**	Կ **ոջմէ**
Գործ.	Ներ **ոջմով**	Բ **ոջմով**	Կ **ոջմով**

Այսպէս հոլովել՝ գրաւոր և բերանացի.

Տիկին, տալ, տազր, աներ, տէր, տէրտէր, տանտէր։

Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ. Հայց.	Աղջիկ
Սեռ. Տրակ.	Աղջ **կան**
Բաց.	Աղջ **իկէ**
Գործ.	Աղջ **իկով**

Այսպէս հոլովել՝ գրաւոր և բերանացի.

Էրիկ, կնիկ։

ՅԱՏՈՒԿ ԵՒ ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆ

Ժ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՀԱՏԿԻ ՏՕՆԸ

Հատիկը Քրիստոսի յարութեան տօնն է, եւ ուրախութեան օր մը բոլոր Քրիստոնեաներուն համար։ Առտուն կանուխ եկեղեցիին զանգակները կը հնչուին։ Ամէն մարդ իր ամէնէն գեղեցիկ արդուզարդովը հագուած շքուած աղօթելու կ'երթայ Աստուծոյ։ Եկեղեցիին խորանն ալ իր ամէնէն շքեղ զարդարանքովը կը փայլի։ Ճրագներ, շղարշներ, ծաղիկներ լեցուն են տաճարին մէջ։ Քրիստոնեաներուն սեղանը կը զարդարուի կարմիր հաւկիթով եւ ուրիշ ուտելիքներով։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

42. Օրինակել այս հատուածը, ստորագծել *յատուկ* անունները, և խաչանիշով ցոյց տալ *հասարակ* անունները։

43. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

24. Քանի՞ տեսակ է անունը։ — *Անունը երկու տեսակ է. յատուկ և հասարակ։*

25. Ո՞րն է *յատուկ անունը*։ — *Յատուկ անունը մասնաւոր անձի մը կամ առարկայի մը կը տրուի զայն իր նմաններէն զանազանելու համար։ Յատուկ են, զոր օրինակ, մարդոց, ընտանիքներու, լեռներու, ծովերու, քաղաքներու անունները, ինչպէս. Գրիգոր, Պոլիս, Միջերկրական։*

26. Ո՞րն է *հասարակ անունը*։ — *Հասարակ են այն անունները, որոնք միեւնոյն տեսակէ ամէն առարկաներու կրնան տրուիլ, ինչպէս. տուն, քաղաք, տղայ։*

44. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչ է Զատիկը։ 2. — Եկեղեցիին զանգակները երբ կը հնչուին։ 3. — Ամէն մարդ ինչ ընելու կ'երթայ։ 4. — Եկեղեցիին խորանը ինչ կ'ըլլայ։ 5. — Ի՞նչ կայ տաճարին մէջ։ 6. — Ի՞նչ է խորանը։ 7. — Ի՞նչ է տաճարը։ 8. — Քրիստոնեաներուն սեղանին վրայ ինչ մասնաւորութիւնք կը գտնուի Զատկին։

45. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղ. Հայց.	*Աստուած*	*Սէր*
Սեռ. Տրակ.	*Աստու ծոյ*	*Սիրոյ*
Բաց.	*Աստու ծմէ*	*Սէրէ*
Գործ.	*Աստու ծմով*	*Սիրով*

8. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՐՐԻԿ ՎԱՐԺԱԿԱԼԸ

Վանդակիկ մը դրրի աղուոր
Իմ պարտէզիս մէջ սիրուն,
Որ Թռչուն մը գայ ուղեւոր
Առտու մը հոն շինել բոյն։
Ո՜վ քաղցրախօս շիկահաւիկ,
Իմ տունս ընտրէ՛ քեզ բընակ,
Միայն երգ մը կ'ուզեմ փոքրիկ
Տունիս վարժքին փոխանակ։

Եւ երբ ուզես ամառ օրեր
Պուրակին մէջ ապրիլ զատ,
Քու փափաքիդ դէմ չեմ դըներ
Եւ կ'արձակեմ զքեզ ազատ։
Բանտարկելու չունիմ փափաք
Ըզքեզ Թռչնիկս անուշիկ,
Ո՜հ, երգով մը եկուր մինակ
Վարձել տընակս իմ փոքրիկ։

ԱՆՈՒՆԻՆ ԹԻՒԸ

ԺԱ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՄԱՐԴՈՒՍ ՄԱՐՄԻՆԸ

Մարդուս մարմինը ունի գլուխ, բուն եւ անդամներ։ Գլխուն վրայ կայ գանկ, դէմք, ճակատ եւ քունքեր, աչքեր, յօնքեր եւ արտեւանունքներ, ականջներ եւ այտեր, քիթ եւ ռունգեր, բերան եւ շրթունքներ, եւ ծնօտ։ Բունին վրայ են վիզը, կուրծքը, փորը եւ կրունակը։ Անդամներն են՝ բազուկներ եւ ձեռքեր, սրունքներ եւ ոտքեր։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

46. Օրինակել այս հատուածը, և նշանակել *եզակիները* է ով, *յոգնակիները* յ ով։
47. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։
48. Յոքնակի ընել հետեւեալ բառերը։

Բերան	*Մօրուք*	*Լեզու*	*Գանկ*
Ծնօտ	*Պեխ*	*Քիմք*	*Զայն*
Շրթունք	*Կռնակ*	*Կոկորդ*	*Աղաղակ*

ԴԱՍ

27. *Թիւը* քանի՞ է։ — *Թիւը երկուք է. եզակի և յոգնակի։*

28. Անուն մը ե՞րբ եզակի է եւ ե՞րբ յոգնակի։ — *Անուն մը եզակի է երբ մէկ առարկայ մը կը ցուցնէ, յոքնակի է երբ մէկէ աւելի առարկայ կը ցուցնէ։*

29. Միավանկ եզակի բառ մը ի՞նչպէս պէտք է յոգնակի ընել։ — *Միավանկ բառերուն ծայրը պէտք է եր աւելցնել, ինչպէս. այտ եր, քիթ եր, տուն եր։*

49. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — *Որո՞նք են մարդուս մարմնին երեք գլխաւոր մասերը։* 2. — *Մտածումը ուրտեղ կը կեդրոնանայ։* 3. — *Ի՞նչ է մարմնին բունը։* 4. — *Որո՞նք են անդամները։* 5. — *Որո՞նք են գլխուն մասերը։* 6. — *Ի՞նչ է գանկը։* 7. — *Դէ՞մը։* 8. — *Ճակա՞տը։* 9. — *Բունքերը։* 10. — *Ո՞րն է տեսութեան գործարանը։* 11. — *Ի՞նչ բանի կը ծառայեն արտեւանունքները։* 12. — *Յօնքերը։* 13. — *Թարթիչները։* 14. — *Որո՞նք են աչքին գլխաւոր մասերը։* 15. — *Ո՞ւր կը կեդրոնանայ շողոքիւնը։* 16. — *Ի՞նչ բանի կը ծառայէ քիթը։* 17. — *Ի՞նչ է հոտառութիւնը։* 18. — *Որո՞նք են բերնին մասերը։* 19. — *Ի՞նչ բանի կը ծառայեն շրթունքները։* 20. — *Կզա՞կը։* 21. — *Ակռանները։* 22. — *Ի՞նչ բանի կը ծառայէ լեզուն։* 23. — *Ի՞նչ բանի կը ծառայէ խռչափողը։* 24. — *Որո՞նք են բունին մասերը։* 25. — *Ի՞նչ բանի կը ծառայեն թոքերը։* 26. — *Սրտամո՞ւսը։* 27. — *Լեա՞ռը։* 28. — *Ո՞ւր պահուած են աղիները։* 29. — *Որո՞նք են շարժման գործարանները։* 30. — *Որո՞նք են գնդերները։* 31. — *Ի՞նչ բանի կը ծառայեն արունները։* 32. — *Ոսքերը։* 33. — *Ձեռքերը։* 34. — *Ըսէք մեր քին հինգ մատներուն անունները։* 35. — *Որո՞նք են հինգ զգայարանքները։*

ԴԱՍ

30. Բազմավանկ եզակի բառ մը ի՞նչպէս պէտք է յոգնակի ընել։ — *Բազմավանկ բառերուն վերջը պէտք է ներ աւելցնել, ինչպէս. ականջ ներ, ծնոտ ներ։*

31. Անձայն ՅՈՎ վերջացող բառերը ի՞նչպէս յոգնակի կ'ըլլան։ — *Անձայն ՅՈՎ վերջացող բառերը յոքնակի ըլլած ատեննիս՝ պէտք է ծայրի ՅՆ ջնջենք, ինչպէս. սատանայ, սատանա ներ, մեքենայ, մեքենա ներ։*

ՀՈԼՈՎՆԵՐ

—

ԺԲ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԶՈՒԱՐՃԱԼԻ ՊԱՐՏԷԶԸ

Կիրակի օրը Եղբայրս զուարճալի տեղ մը տարաւ զիս։ Նաւակով ծովէն անցանք, եւ ծառերով լեցուն պարտէզ մը գացինք։ Հոն մինչեւ իրիկուն զուարճացանք։ Տեսակ տեսակ կենդանիներ կային։ Մարդու կերպարանքով կապիկներ, նապաստակներ, ծառի պէս եղջիւրներով եղնիկներ, գոյնզգոյն վեճտուրներով սիրամարգներ, աղաւնիներ, ագռաւներ, նաեւ լճակներուն մէջ ճուկեր։ Եղբայրս բնաւ չէր վախնար այդ անասուններէն եւ անոնց քով կ'երթար. ամէնուն անունը գիտէր. անոնց յատկութիւններուն վրայ կը խօսէր ինծի։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

50. Որոշել այս հատուածին մէջի բոլոր հոլովները և զատ զատ սիւնակներու մէջ գրել.

Օրինակ. —	*Ուղղ.*	*Սեռ.*	*Բաց.*	*Գործ.*
	Կիրակի	*Մարդու*	*Ծովէն*	*Նաւակով*

51. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

52. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

	ԵԶԱԿԻ	ՑՈՓՆԱԿԻ	ԵԶԱԿԻ	ՑՈՓՆԱԿԻ
Ուղղ. Հայց.	*Ծառ*	*Ծառեր*	*Ագռաւ*	*Ագռաւներ*
Սեռ. Տրակ.	*Ծառի*	*Ծառերու*	*Ագռաւի*	*Ագռաւներու*
Բաց.	*Ծառէ*	*Ծառերէ*	*Ագռաւէ*	*Ագռաւներէ*
Գործ.	*Ծառով*	*Ծառերով*	*Ագռաւով*	*Ագռաւներով*

53. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Կիրակի օրը եղբայրդ ուր տարաւ զքեզ։ 2. — Մարիէ անցաք նաւակով։ 3. — Ի՞նչ ըրիք այդ պարտէզին մէջ։ 4. — Ի՞նչ կար հոն։ 5. — Զարմուհիի տունն կ'ըսուի։ 6. — Մարը կը պահեն Թռչունները։ 7. — Գապիկը ինչ տեսակ կենդանի է։ 8. — Ագռաւներուը ինչ գոյն ունին։ 9. — Ձուկերը ուր կը գտնուին։

ԳԱՍ

32. Ի՞նչ է հոլովումը։ — *Անունի մը վերջաւորութեան փոխուելուն հոլովում կ'ըսուի։*

33. Հոլովը քանի՞ է։ — *Հոլովը վեց է. ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական։*

34. Այս հոլովները ի՞նչ հարցումներու կը պատասխանեն։ — *Ուղղականը կը պատասխանէ ո՞վ հարցման, հայցականը՝ զո՞վ, սեռականը՝ որո՞ւն, տրականը՝ որո՞ւ, բացառականը՝ որմէ՞, գործիականը՝ որո՞վ։*

35. Հոլովման ընդհանուր կանոնը ո՞րն է։ *Հոլովման ընդհանուր կանոնն է, եզակիի մէջ ի, է, ով, յոքնակիի մէջ՝ եր, երու, երէ, երով կամ ներ, ներու, ներէ, ներով. տես ծառ, սպասաւ։*

ՀՈԼՈՎՆԵՐՈՒՆ ՁԵՒԵՐԸ

ԺԳ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՀԱՅՑ ԳԻՐԵՐԸ

Հայ եկեղեցին տարին անդամ մը կը տօնէ Սահակայ եւ Մեսրոպայ տօնը։ Այդ սուրբ Հայրապետները գտած են մեր լեզուին գիրերը։ Լեզուի մը զարգացման ամէնէն մեծ միջոցը իր գիրն է։ Եթէ գիր չունենայինք, գրականութիւն ալ չպիտի ունենայինք։ Չպիտի կրնայինք իրարու հետ հաղորդակցիլ հեռուէն։ Ուստի երբ տղայ մը կարդալ ու գրել սորվի, պէտք է ճանչնայ մեր գիրերուն հեղինակները, ամէնէն առաջ, եւ երախտագիտութեամբ յիշէ անոնց անունը։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

54. Օրինակել այս հատուածը, և ստորագծել զարտուղի հոլովները։

55. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

36. Հոլովման ընդհանուր կանոնին *բացառութիւնները* որո՞նք են։ — *Հոլովման ընդհանուր կանոնին բացառութիւններն են.*

1. *Ութիւն վերջացող բառերը, ինչպէս. ուրախութիւն, ուրախութեան, եւն.*
2. *Ում վերջացող բառերը, ինչպէս. հիացում, հիացման, եւն.*
3. *Ժամանակ ցուցնող բառերը, ինչպէս. ամիս, ամսուան, եւն.*
4. *Կարգ մը միավանկ բառեր, ինչպէս. ծով, ծովու, եւն.*
5. *Աղգականութեան կապ ցուցնող բառերը, ինչպէս. հայր, հօր, եւն.։*

37. Ասոնցմէ զատ կա՞ն ուրիշ բառեր որոնք զարտուղի կերպով հոլովուին։ — *Կան նաեւ կարգ մը բառեր, որոնց հոլովումը զարտուղի է, ինչպէս. Աստուած, սէր, տղայ, եւն.։*

56. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ո՞ր եկեղեցին կը տօնէ Սահակայ եւ Մեսրոպայ տօնը։ 2. — Ինչո՞ւ համար կը տօնէ։ 3. — Անոնցմէ առաջ Հայերը ի՞նչ գիր կը գործածէին։ 4. — Ո՞րն է լեզուի մը զարգացման միջոցը։ 5. — Ի՞նչ կ'ըլլար եթէ մարդիկ գիր չունենային։ 6. — Տղաք զի՞նչ պէտք է ճանչնան ամէնէն առաջ երբ կարդալ գրել սորվին։ 7. — Ի՞նչպէս պէտք է յիշեն անոնց անունները։

57. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

ՅՈՓՆԱԿԻ

Ուղղ. Հայց.	Գիտութիւն **Գեր**
Սեռ. Տրակ.	Գիտութիւն **Գերու** կամ Գիտութ **եանց**
Բաց.	Գիտութիւն **Գերէ**
Գործ.	Գիտութիւն **Գերով**

Այսպէս հոլովել՝ գրաւոր և բերանացի, հետեւեալ անուններուն յոքնակիները.

Ճշդութիւն, ուղղութիւն, ստութիւն, խարդախութիւն, մոլորութիւն, համեստութիւն, խլութիւն, ժրութիւն, ծերութիւն, մանկութիւն։

Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

ՅՈՓՆԱԿԻ

Ուղղ. Հայց.	Հիացում **Գեր**
Սեռ. Տրակ.	Հիացում **Գերու** կամ Հիաց **մանց**
Բաց.	Հիացում **Գերէ**
Գործ.	Հիացում **Գերով**

Այսպէս հոլովել հետեւեալ բառերուն յոքնակիները.

Զգացում, մտածում, զարգացում, յաւելում։

ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆ

	ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ո. Հ.	Վարդ	Վարդ եր
Ս. Տ.	Վարդ ի	Վարդ երու
Բ.	Վարդ է	Վարդ երէ
Գ.	Վարդ ով	Վարդ երով

ԲԱՑԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

	ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ո. Հ.	Ուրախութիւն	Ուրախութիւն ներ
Ս. Տ.	Ուրախութ եան	Ուրախութիւն ներու կամ Ուրախութ եանց
Բ.	Ուրախութ ենէ	Ուրախութիւն ներէ
Գ.	Ուրախութ եամբ	Ուրախութիւն ներով

Բ.

	ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ո. Հ.	Զարգացում	Զարգացում ներ
Ս. Տ.	Զարգացում ի կամ զարգաց ման	Զարգացում ներու կամ զարգաց մանց
Բ.	Զարգացում է	Զարգացում ներէ
Գ.	Զարգացում ով կամ զարգաց մամբ	Զարգացում ներով

Գ.

	ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ո. Հ.	Տարի	Տարի ներ
Ս. Տ.	Տար ուան	Տարի ներու
Բ.	Տարի է կամ Տար ուքնէ	Տարի ներէ
Գ.	Տարի ով	Տարի ներով

Դ.

ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ծով	Ծով եր
Ծով ու	Ծով երու
Ծով է	Ծով երէ
Ծով ով	Ծով երով

Ե.

	ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ո. Հ.	Հայր	Հայր եր
Ս. Տ.	Հ որ	Հայր երու
Բ.	Հ որմէ	Հայր երէ
Գ.	Հ որմով	Հայր երով

Զ.

	ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ո. Հ.	Ներ	Ներ եր
Ս. Տ.	Ներ ոջ	Ներ երու
Բ.	Ներ ոջմէ	Ներ երէ
Գ.	Ներ ոջմով	Ներ երով

Է.

	ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ո. Հ.	Աղջիկ	Աղջիկ ներ
Ս. Տ.	Աղջ կան	Աղջիկ ներու
Բ.	Աղջիկ է	Աղջիկ ներէ
Գ.	Աղջիկ ով	Աղջիկ ներով

Ը.

	ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ո. Հ.	Սէր	Սէր եր
Ս. Տ.	Ս իրոյ	Սէր երու
Բ.	Սէր է	Սէր երէ
Գ.	Ս իրով	Սէր երով

Թ.

ԵԶԱԿԻ

Ո. Հ.	Աստուած
Ս. Տ.	Աստու ծոյ
Բ.	Աստու ծմէ
Գ.	Աստու ծմով

Ժ.

	ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ո. Հ.	Տղայ	Տղա ք
Ս. Տ.	Տղ ու	Տղ ոց
Բ.	Տղայ է	Տղ ոցմէ
Գ.	Տղայ ով	Տղ ոցմով

ԺԱ.

	ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Ո. Հ.	Մարդ	Մարդ իկ
Ս. Տ.	Մարդ ու	Մարդ ոց
Բ.	Մարդ է	Մարդ ոցմէ
Գ.	Մարդ ով	Մարդ ոցմով

ՅՕԴ

ՈՐՈՇԻՉ ՅՕԴ

ԺԴ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ՍՏԱԽՕՍ ԱԴԱՄԻՆԸ**

Զարուկ աղուոր պզտիկ աղջիկ մըն է։ Բայց մեծ թերութիւն մը ունի։ Միշտ սուտ կը խօսի։ Իր հայրն ու մայրը դժգոհ են այս բանէն։ Կը խրատեն, կը պատժեն զինքը, բայց ան նորէն ճշմարիտը չ'ըսեր։ Այս պատճառաւ մէկը անոր խօսքին չի հաւատար։ Երբ բերանը բանայ բան մը պատմելու համար, իր ընկերները «սո՛ւտ ես» կը պոռան երեսին։ Ի՜նչ զզուելի բան է ստախօսութիւնը։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

58. Օրինակել այս հատուածը, և ստորագծել յօդերը։
59. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

38. Քանի՞ տեսակ *յօդ* կայ։ — *Երկու տեսակ յօդ կայ. որոշիչ և անորոշ։*

39. Ո՞րն է *որոշիչ յօդը*։ — *Որոշիչ յօդ կը կոչուին Ը և Ն դիրքերը, որոնք անուանի մը վրայ կը դրուին անոր խմաստը որոշելու համար։*

40. Ե՞րբ Ը կը գործածուի։ — *Ը կը գործածուի բառի մը վրայ, որուն վերջին դիրը բաղաձայն է, ինչպէս. կաղին, կաղինը։*

41. Ն յօդը ե՞րբ կը դրուի։ — *Ն յօդը կը դրուի, եթէ բառին վերջին դիրը ձայնաւոր է, ինչպէս. կաստ, կաստն, ձի, ձին։*

60. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ո՞վ է Զարուկ։ 2. — Զարուկի մեծ Թերութիւնը ի՞նչ է։ 3.— Ի՞նչ է ստախօսութիւնը։ 4. — Ո՞վ դժգոհ է այս բանէն։ 5. — Զարուկին ի՞նչ կ՚ընեն այս Թերութեանը համար։ 6.—Ինչո՞ւ չեն հաւատար անոր խօսքին։ 7. — Երբ բերանը բանայ, ընկերները ի՞նչ կ՚ընեն։ 8. — Ի՞նչ է ստախօսութեան վնասը։

61. Յարմար յօդեր դնել հետեւեալ բառերուն.

Գաւաթ, սրուակ, նշենի, բարտի, իշխան, շուն ու կատու, գիտութիւն, հաւեր, տղաք ու հայր, մայր իսկ, սպասաւոր ալ, նուագ, խորան, եկեղեցի, կենդանի, ճամբայ, խաբեբայ, ծով, այգի, աղքատ ու ճոխ, սուր, ենթակայ, առարկայ, խորան, քահանայ ու ժողովուրդ, ամառ ու ձմեռ, փոսուռայ ու Թիթեռնիկ, տուներ ալ, գորգ, պատկեր է, մեղու անգամ, փեսայ ու հարս, ձեղուն։

Դ Ա Ս

42. Ն յօդը ուրիշ ե՞րբ կը գործածուի։ — *Ն յօդը կը գործածուի նաեւ ձայնաւորով սկսող հետեւեալ բառերուն առջեւ. ու, ալ, իսկ, անգամ, եմ, ես, է, ենք, էք, են, էի, էիր, էր, էինք, էիք, էին։*

43. Անձայն Յ ով վերջացող բառերուն ծայրը ի՞նչպէս յօդ կը դրուի։ — *Անձայն Յ ով վերջացող բառերուն Յն կը ջնջուի յօդ դրուած ատեն, ինչպէս. սատանայ, սատանան, կաթսայ, կաթսան։*

ԱՆՈՐՈՇ ՅՕԴ

ԺԵ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՆՈՐԱԾԻՆԸ

Այս կիրակի եկեղեցի տարինք ու մկրտեցինք իր նորածին քոյրս։ Անունը Արփինէ դրինք։ Աւազանին մէջ կը պօռար, կը ճչէր, ու ճիւնաթոյր թաթիկները օդին մէջ կ'երերցնէր։ Յետոյ ժանեակէ ճերմակ շրջազգեստ մը հագցուցինք իրեն, փետրազարդ սիրուն գլխակ մը դրինք գլուխը։ Երբ տուն բերինք ու շղարշներուն մէջ պառկեցուցինք զինքը, շատ աղուորցեր էր։ Փոքրիկ անկողնին քով գացի, համբոյր մը այտերէն եւ համբոյր մըն ալ թաթիկներէն առի։ Յետոյ օրօր ըսի որ քնանայ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

62. Օրինակել այս հատուածը, և ստորագծել անորոշ յօդերը։

63. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

44. *Անորոշ յօդը ո՞րն է։ — Անորոշ յօդն է մը կամ մը։*

45. *Մը ե՞րբ կը գործածուի։ — Մը կը գործածուի ամէն անունի քով անորոշ իմաստ մը տալու համար անոր, ինչպէս. մարդ մը (անորոշ մարդ մը), ձի մը, եւն.։*

46. *Մըն ե՞րբ կը գործածուի։ — Մըն կը գործածուի եմ, ես, է, ենք, էք, են, էի, էիր, էր, էինք, էիք, էին և այլ բառերէն առաջ, ինչպէս. մարդ մըն է, վաս մըն էք, ապուշ մըն էր, հիւանդ մըն այլ մեռաւ։*

64. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Այս կիրակի ո՞ւր տարիք փոքրիկ քոյրդ։ 2. — Ինչո՞ւ համար։ 3. — Անունը ի՞նչ դրիք։ 4. — Աւազանին մէջ ի՞նչ կ'ընէր։ 5. — Ի՞նչ հագցուցիք իրեն։ 6. — Գլուխը ի՞նչ դրիք։ 7. — Երբ տուն բերիք ի՞նչ ըրիք։ 8. — Ի՞նչպէս կ'երեւար շղարշներուն մէջ։ 9. — Դուն ի՞նչ ըրիր։ 10. — Ետքը ի՞նչ ըրիր։

65. Անորոշ յօդեր դնել հետեւեալ անուններուն.

Քահանայ . . . եկաւ։ Աշակերտ . . . ալ աւելցաւ։ Քոյր . . . ալ ունեցայ։ Գիրք . . . բերի։ Ծոյլ տղայ . . . ես դուն։ Հօրաքոյր . . . ունիմ։ Դեռ պզտիկ տղայ . . . էր ան։ Մեծ պատկերհան . . . է ան։ Տուն . . . գնեցի։ Տղայ . . . մկրտեցիր։ Մրցանակ . . . ստացայ։ Պատիժ . . . էր սա։

10. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՍՏԱԽՕՍԻՆ ՊԱՏԻԺԸ

Փոքրիկ հովիւ մըն էր Միհրան,
Որ ամէն օր դաշտին վըրան
Արածելու կ'երթար առտուն
Հօտն իր գիւղին ոչխարներուն։
Օր մը նեղուած հոն մենաւոր
Ըսաւ. «Խաղ մը խաղանք աղուոր։»
Եւ ըսկըսաւ պօռալ ուժով.
«Գայլ կայ, գայլ կայ, հասէք շուտով։»
Գիւղացիներ եկան հասան,
Ոչ գայլ գըտան, ոչ ալ գազան։
Քահ քահ խընդաց լաճն անելես
Ըսաւ անոնց. «Խաբեցի զձեզ։»
Գայլեր եկան օր մը իրաւ։
Մարդ իր ձայնին մըտիկ չըրաւ,
Մէկը չեկաւ օգնել անոր,
Հովիւն եղաւ կըտոր կըտոր։

ԱՆՈՒՆԻՆ ԵՒ ՅՕԴԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

ԺԶ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՄԵՐ ՊԱՐՏԷԶԸ

Մեր տունը ընդարձակ պարտէզ մը ունի։ Ածուներով, ծառուղիներով ու լճակներով զարդարուած է պարտէզին ամէն կողմը։ Ճամբաները աւազ ցանուած են, Ցանկին վրայ խիտ տերեւներ կը սողոսկին։ Մայտաներուն մէջ երգեցիկ թռչուններ բոյն դրած են, որոնց ձայնէն առտուները կ'արթննանք։ Ածունները լեցուն են գոյնզգոյն ծաղիկներով, որոնց շուրջը հազարաւոր թիթեռնիկներ ու մեղուներ կը թռչտին։ Պտուղները ծառերէն վար կը կախուին։ Խոշոր աւազան մը կ'ուռոցէ այս պարտէզը իր բազմաթիւ խողովակներով։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

66. Օրինակել այս հատուածը, ստորագծել *անուանները*, և խաչանիշով ցոյց տալ *յօդերը*։
67. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։
68. Օրինակել հետեւեալ լուծումը։

Լճակներով	Հասարակ անուն, յոքնակի գործիական
Պարտէզ	Հասարակ անուն, եզակի ուղղական
Մը	Անորոշ յօդ պարտէզին
Ծառերու Ն	Հասարակ անուն, յոքնակի սեռական (Ն որոշիչ յօդ)
Տերեւներ Ը	Հասարակ անուն, յոքնակի ուղղական (Ը որոշիչ յօդ)

ԴԱՍ

47. Անուն մը ի՞նչպէս կը լուծուի։ — *Անուն մը լուծելու համար պէտք է ըսել թէ յատուկ է կամ հասարակ, եզակի կամ յոքնակի, և պրոշել թէ ինչ հոլով է։*

48. Յօդը ի՞նչպէս կը լուծուի։ — *Յօդը լուծելու համար պէտք է ըսել թէ որոշիչ է կամ անորոշ։*

69. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ձեր տան պարտէզը ինչպէս է։ 2. — Պարտէզին ամէն կողմը ինչպէս զարդարուած է։ 3. — Ի՞նչ ցանուած է ճամբաներուն վրայ։ 4. — Ի՞նչ կը սողոսկի ցանկին վրայ։ 5. — Ի՞նչ կը նշանակէ սողոսկիլ։ 6. — Որո՞նք բոյն դրած են մացառներուն մէջ։ 7. — Ի՞նչ ըսել է բոյն դնել։ 8. — Առտուները որո՞նց ձայնէն կ'արթննաք։ 9. — Ածուները ինչո՞վ լեցուն են։ 10. — Որո՞նք կը թռչտին ծաղիկներուն շուրջը։ 11. — Ի՞նչ կը կախուի ծառերէն վար։ 12. — Ո՞վ կ'ոռոգէ պարտէզը։ 13. — Ինչո՞վ կ'ոռոգէ։ 14. — Ի՞նչ է աւազանը։ 15. — Ի՞նչ է խողովակը։

10. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՏԵՐԵՒԸ

Քու ցօղունէդ զատուած դուն,
Խեղճուկ տերեւ ազազուն,
Ո՞ր կողմ կ'երթաս։ — Չեմ գիտեր.
Մըրրիկն օր մը խորտակեց
Նեցուկս իմին՝ կաղնին մեծ։
Յողդողդ շունչով զեփիւռներ
Եւ հիւսիսակն ալ հըզօր
Զիս այն օրէն կը վարեն
Դէպի դաշտերն անտառէն,
Եւ լեռներէն դէպի ձոր։
Կ'երթամ յաւէտ հովաբախ
Միշտ անտըրտունջ եւ անվախ
Ուր ամէն բան կ'երթայ յար,
Թերթը վարդին հողմավար,
Մուրտին տերեւն ալ մոլար։

ԱՌՆՕԼՏ

ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՑԵԱԼ

—

ԺԷ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՄԵԾ ԴՐԱՑԻՆ ՏՂԱՆ.

Սահակ մեր դրացին տղան է։ Տասներկու տարեկան չի կայ դեռ. բայց դպրոցէն ելած ու կօշկակարի մը խանութը մտած է իրեւ աշակերտ։ Ամէն առաւօտ կանուխ դործին կ'երթայ։ Մինչեւ իրիկուն կը յոգնի, կ'աշխատի փոքրիկ օրական մը շահելու համար, որովհետեւ իր ընտանիքը աղքատ է, եւ կ'ուզէ անոր ապրուստին օգնել։ Իրիկուններն ալ ուսման կը պարապի, որպէս զի մտքը կրթէ։ Ամէն մարդ երանի կու տայ Սահակին մօրը անանկ զաւակ մը ունենալուն համար։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

70. Օրինակել այս հատուածը, ստորագծել *յատկացուցիչ*ները, և խաչանիշով ցոյց տալ *յատկացեալ*ները։

71. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

72. Մէյ մէկ *յատկացուցիչ* գտնել հետեւեալ անուններուն.

. . .	դուռը	. . .	ղեկը	. . .	բանալին
. . .	ապակին	. . .	անիւը	. . .	վանդակը
. . .	ծայրը	. . .	շրջանակը	. . .	ակռան
. . .	կոթը	. . .	ժանեակը	. . .	սիրոցը
. . .	տերեւը	. . .	զօտին	. . .	կօշիկը
. . .	ճիւղը	. . .	ալիքը	. . .	տետրակը

ԴԱՍ

49. *Յատկացուցիչ* որո՞ւ կ'ըսուի։ — *Յատկացուցիչ կը կոչուի այն անունը, որ բանի մը որոն ԸԼԱԼը կը ցուցնէ, ինչպէս.* վարդին *թերթը։*

73. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ո՞վ է Սահակ։ 2. — Քանի՞ տարեկան է Սահակ։ 3. — Դպրոց կ'երթայ։ 4. — Հապա ուր կ'երթայ ամէն առտու։ 5. — Մինչեւ իրիկուն ինչ կ'ընէ հոն։ 6. — Ինչու կ'աշխատի։ 7. — Ինչու դրամ շահիլ կ'ուզէ։ 8. — Իրիկունները ինչ կ'ընէ։ 9. — Ինչու ուսման կը պարապի։ 10. — Ինչու երանի կու տան Սահակին մօրը։ 11. — Ի՞նչ ըսել է երանի տալ։

74. Լուծել հետեւեալ բառերը.

Գլխարկին փետուրը։ — Հարսին պսակը։ — Մարդու մը պարտքը։ — Տիկնոջ հայլին։ — Կատուին թաթիկները։ — Ժամացոյցի մը սլաքը։ — Հաւերուն հաւկիթը։ — Թռչունի մը երգը։ — Տարուան գարունը։ — Կեանքին օրերը։ — Մօր մը խնամքը։ — Ձաւկի մը սէրը։

ԼՈՒԾՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Մարդու	Հասարակ անուն, եզակի սեռական, յատկացուցիչ պարտքին։
Մը	Անորոշ յօդ մարդու ին։
Պարտքը	Հասարակ անուն, եզակի ուղղական, յատկացեալ մարդու ին (ը որոշիչ յօդ)։

ԴԱՍ

50. *Յատկացեալ* որո՞ւ կ'ըսուի։ — *Յատկացուցիչին վերաբերող անունը յատկացեալ կը կոչուի, ինչպէս. վարդին* թերթը։

51. Յատկացուցիչը ի՞նչ հոլով կ'ըլլայ։ — *Յատկացուցիչը սեռական հոլով կ'ըլլայ։*

52. Յատկացուցիչը ի՞նչ հարցման կը պատասխանէ եւ ո՞ւր կը դրուի։ — *Յատկացուցիչը որո՞ւն հարցման կը պատասխանէ և յատկացեալէն առաջ կը դրուի, ինչպէս.* որո՞ւն *թերթը.* — վարդին *թերթը։*

ԱԾԱԿԱՆ

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

ԺԸ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — Ա.ՑԴԻՆ

Երէկ հայրս այդի մը տարաւ զիս։ Ժամերով պարտեցանք խիտ խիտ սրթաբուններուն մէջ։ Կանանչ փոքրիկ բուներէն վար կախուած էին խաղողի լեցուն ողկոյզները. ոմանք դեղին, ոմանք կարմրորակ, եւ ոմանք սեւ։ Տհաս խաղողները կանանչ էին բոլորովին։ Հասունները ոմանք կլորիկ հատիկներ ունէին, ոմանք ալ ձուաձեւ։ Ամէնքը մէկէն այնչափ աղուոր կ'երեւային լայն տերեւներուն մէջտեղէն որ պահ մը զանոնք ուտելու փափաքնիս մոռցանք, ու դիտելով միայն զուարճացանք։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

75. Օրինակել այս հատուածը, ստորագծել *որակական ածականները* և խաչանիշով ցոյց տալ *անունները*։

76. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

53. Ի՞նչ է *ածականը*։ — *Ածականը բառ բառ մը՝ն է որ անունէ մը առաջ կը դրուի, և անոր մէկ հանգամանքը կը ցուցնէ, ինչպէս. աղքատ մարդ, երկու խնձոր։*

54. Ածականները *թիւ* եւ *հոլով* ունի՞ն։ — *Ածականները ոչ թիւ ունին եւ ոչ հոլով, անուններու հետ կը գործածուին, եւ անփոփոխ են։*

55. *Որակական ածականը* ի՞նչ կը ցուցնէ։ — *Որակական ածականը անունի մը ինչպէս ըլլալը կը ցուցնէ, և ի՞նչպէս հարցման կը պատասխանէ, զոր օրինակ. մաքուր, տգեղ, պզտիկ։*

77. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

*1. — Երէկ հայրդ ո՞ւր տարաւ զքեզ։ 2.—Ի՞նչ է այգին։ 3. — Ո՞ւր պտտեցաք։ 4. — Ի՞նչ է որթաբու

՝ 5. — Բուներէն վար ի՞նչ կախուեր էր։ 6. — Ի՞նչ է ողկոյզը։ 7. — Ի՞նչպէս էին տհաս խաղողները։ 8. — Հասունները ի՞նչ ձեւ ունէին։ 9. — Ի՞նչպէս կ'երեւային անոնք։ 10. — Գինին ինչ՞ կը շինուի։ 11. — Ի՞նչպէս կը շինուի։*

78. Օրինակել հետեւեալները, ստորագծելով *ածականները*.

Փոքրիկ տղան, կապոյտ երկինք, սեւ ամպեր, անկեղծ բարեկամը, պարարտ կովերը, հլու աշակերտը, աղուոր խնձոր մը, յստակ ջուր, սուր դանակը։

79. Հետեւեալ անուններուն գոյնը ցոյց տուող յարմար ածականներ գտնել.

Ածուխ, կաւիճ, գինի, մոխիր, նարինջ, խոտ, վարդ, յասմիկ, ծով, տերեւ, խնձոր, խաղող, ոսկի, գրատախտակ, սեր, նուռ, կեռաս, շրջունք, մարգրիտ, յակինթ, զմրուխտ, փերուզակ, սուտակ, սատափ։

II. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԽԱՂՈՂԸ

Տերեւներուն մէջէն բարակ,
Որք սընդուսի կը նմանին,
Կուռ ողկոյզներ սեւ ու ճերմակ
Վար կը կախեն հատիկներնին։

Ոմանք երկայն, ոմանք կլոր,
Մանրիկ, փայլուն եւ լուսանցիկ,
Տերեւներուն վրայ խոշոր՝
Կը կարծըւին բանուած ծաղիկ։

Արցունք են թէ շաղի կաթիլ,
Ամպին ցանցէն ցօղուած շիթ շիթ,
Զըմրուխտ արդեօք, վարդ նորածիլ,
Կամ աստղերէն ինկած ժըպիտ։

Անոնք արցունք չեն, ոչ զոհար,
Ոչ ալ ծաղիկ, ոչ ալ կիտուած.
Անուշ խաղող են զովարար,
Միրգ, զոր միայն օրհնեց Աստուած։

Զայն շինեցին լոյս հրեշտակներ
Նուրբ մատներովն իրենց ճարտար,
Այգիներուն աշնան նըւէր,
Սիրոն տղաք, ձեզի համար։

ՅՈՒՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

—

ԺԲ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԳԻՒՂԱՑԻՆԵՐՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այս տարի ամառը գիւղ գացեր էինք։ Ամէն օր դաշտերը կ'երթայի գիւղացիներուն աշխատանքը դիտելու։ Այդ գործունեայ մարդիկ արտոյտին ձայնէն կ'արթննան առտուն, եւ կանուխ արտ կ'երթան։ Ծարտրդները այն տաքին, արեւուն դիմացը, հնձուած խոտը կը թոթուեն, որ չորնալով խար կը դառնայ։ Հնձողները այն դաշտերուն մէջ հասունցած հասկերը կը քաղեն, եւ խուրձ կը կապեն։ Զուարթ եւ առոյգ ոգեւորութիւն մը կ'երեւայ այդ պարզ մարդոց մէջ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

80. Օրինակել այս հատուածը, ցոյց տալ *որակական ածականները* ստորագծելով, և *ցուցական ածականները* խաչանիշ դնելով։

81. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

56. *Ցուցական ածականները* ի՞նչ ցոյց կու տան։ — *Ցուցական ածականները ցոյց կու տան այն անունները, որոնց վրայ կը խօսուի։*

57. Ցուցական ածականները որո՞նք են։ — *Ցուցական ածականներն են. այս, աս, սա, այդ, աս, այն, ան։*

82. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Այս տարի ամառը ո՞ւր գացեր էիք։ 2. — Ամէն օր ո՞ւր կ'երթայիր։ 3. — Ի՞նչ ընելու համար։ 4. — Ի՞նչ բանէ կ'արթննան այդ գործունեայ մարդիկ։ 5. — Ի՞նչ ըսել է գործունեայ։ 6. — Կանուխ ո՞ւր կ'երթան։ 7. — Ծարորդները ի՞նչ կ'ընեն։ 8. — Խոտը չորնալով ի՞նչ կը դառնայ։ 9. — Հնձողները ի՞նչ կ'ընեն։ 10. — Ո՞ւր կը փոխադրեն խուրձերը։ 11. — Ի՞նչ կը նշանակէ ոգեւորութիւն բառը։

83. Լուծել հետեւեալները.

Այդ մարդուն ճերմակ գտակը։ — Այս անուշ գինին։ — Այդ գորշ ամպերը։ — Այն դեղին մազերը։ — Մարիամին կարմիր գլխարկը։ — Քրոջս ոսկեզօծ գիրքը։ — Հացին փշրանքը։

ԼՈՒԾՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Այդ	Ցուցական ածական մարդուն ին։
Մարդուն	Հասարակ անուն, եզակի սեռական, յատկացուցիչ գՅակ ին։
Ճերմակ	Որակական ածական գՅակ ին։
ԳՅակը	Հասարակ անուն, եզ. ուղղական, յատկացեալ մարդուն ին։

Ծանօթութիւն. — Ածականները լուծելու համար պէտք է ըսել թէ ի՞նչ տեսակ են, եւ որո՞ւ կը վերաբերին։

ԴԱՍ

58. Ի՞նչ պարագայի մէջ կը գործածուին *այս, այդ, այն։ — Այս կը գործածուի մեզի ամէնէն մօտ եղող առարկայի մը համար, այդ՝ քիչ մը հեռու եղողին, և այն՝ ամէնէն հեռու եղողին համար։*

59. Ցուցական ածականէն ետքը եկող անունը յօդ կ'առնէ՞։ — *Ցուցական ածականէն ետքը եկող անունը Ն կամ Ը յօդը կ'առնէ, ինչպէս. այդ մարդը, այն կատուն։*

ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

Ի. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԴԱՀԱՆԶՈՏ ՏՂԱՆ

Մեր դպրոցին մէջ աշակերտ մը կայ Յովսէփ անունով։ Նախանձոտ տղայ մըն է։ Իր դասընկերներուն յաջողութիւնը ցաւ կը պատճառէ իրեն։ Ինք ծոյլ է, եւ փոխանակ ուրիշներէն օրինակ առնելու՝ կ'ուզէ որ անոնք ալ իրեն նմանին։ Մեր տեսրակները կ'աղտոտէ, մեր գիրքերուն վրայ թանաքի բիծեր կը լեցնէ, որպէս զի մենք ալ պատժուինք։ Ես կը ցաւիմ իր վրայ, եւ ձեռքէս եկածը կ'ընեմ համոզելու համար որ իր վարմունքը փոխէ. որովհետեւ եթէ այսպէս շարունակէ, պիտի արտաքսուի դպրոցէն։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

84. Օրինակել այս հատուածը, ստորագծել անունները, և խաչանիշով ցոյց տալ *ստացական ածականները*։

85. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

86. Լուծել այս հատուածին *անուանները* և *ածականները*։

87. Ցարմար ստացական ածականներ դնել կէտերուն տեղ.

Մարիամ . . . բարեկամուհիս այցելութեան եկաւ ինծի, . . . Գարեգին եղբօրը հետ։ . . . մայրն ալ մէկտեղ էր։ Մէկը . . . մատնոցը եւ աղեղը բերեր էր կարիս օգնելու համար, միւսն ալ . . . հոլերը եւ գնդակները։ Ճաշէն ետքը մենք ալ . . . խաղալիկները մէջտեղ հանեցինք, եւ զուարթ խաղերով ժամանակ անցուցինք։

88. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ո՞վ է Ցովսէփ։ 2. — Ի՞նչպէս տղայ է Ցովսէփ։ 3. — Իր դասընկերներուն յաջողութիւնը ի՞նչ կը պատճառէ իրեն։ 4. — Ինք ի՞նչպէս է, եւ ի՞նչպէս կ'ուզէ որ ըլլան ուրիշները։ 5. — Ի՞նչ վնաս կու տայ ձեզի։ 6. — Ինչո՞ւ համար։ 7. — Ի՞նչ կը զգաս դուն իրեն համար։ 8. — Ի՞նչ բանի կը համոզես զինքը։ 9. — Ի՞նչ պիտի պատահի եթէ իր վարմունքը չփոխէ։ 10. — Ո՞ր տղաքը կ'արտաքսեն դպրոցէն։

ԴԱՍ

60. *Ստացական ածականները ի՞նչ կը ցուցընեն։ — Ստացական ածականները բանի մը ուրուն ըլլալը կը ցուցնեն։*

61. Ստացական ածականները որո՞նք են։ — *Ստացական ածականները հետեւեալներն են.*

ԵԶԱԿԻ	ՅՈՓՆԱԿԻ
Իմ կամ իմին	*Մեր կամ մերին*
Քու » քուկին	*Ձեր » ձերին*
Իր » իրեն	*Իրենց*

62. Ստացական ածականին վերաբերող անունները ի՞նչ գիր կ'առնեն իրենց վերջը։ — *Ստացական ածականին վերաբերող անունները իրենց վերջը ա, դ, և կամ ը գիրերը կ'առնեն, ինչպէս. իմ գլխարկս, քու հովանոցդ, իր ձեռնոցը, մեր, ձեր, իրենց զգեստները։*

Ա, Դ, Ն կամ Ը ԳԻՐԵՐԸ ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԻ ՏԵՂ

ԻԱ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ՍԱՐԴԵՐՆ ՈՒ ՇԵՐԱՄԸ**

Սարդերը շերամին ըսին. «Յոգնութիւնդ շատ է, աշխատանքդ երկար է, բայց գործդ շատ պզտիկ։ Նայէ՛, մենք երկու վայրկեանի մէջ որչա՛փ կտաւ կը հիւսենք։ Դուն օրերով կը դառնաս կը դառնաս, եւ հազիւ կրնաս փոքրիկ բժոժդ լեցնել։» Շերամը պատասխանեց. «Գործերնիդ տրտիպ է, բայց անօգուտ։ Բոլոր աշխարհք մեռաքսս ոսկիով կը գնէ, եւ ոտայններնիդ կ'ուլէ կը նետէ։»

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

89. Օրինակել այս հատուածը, և ստորագծել *ստացական ածականի* տեղ գործածուած գիրերը և մասնիկները։

90. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

91. Ստացական ածականներ դնել այս հատուածին մէջ **ս, դ, ն** գիրերը և **նիս, նիդ, նին** մասնիկները ունեցող բառերուն առջեւ։

Օրինակ. — *Սարդերը շերամին ըսին. «Քու յոգնութիւնդ, եւ ն.*

Դ Ա Ս

63. Ո՞r գիրերը կրնան *ստացական ածականին* տեղը բռնել։ — *Եզակիի մէջ՝ ս, դ, և կամ՝ ը գիրերը կրնան ստացական ածականին տեղը բռնել, ինչպէս. գիրքս, հոդդ, մատնին։*

Յոգնակիի մէջ՝ միավանկ բառերու համար՝ երնիս, երնիդ, երնին մասնիկները, ինչպէս. գիրքերնիս, հոդերնիդ, սիրտերնին։

Բազմավանկ բառերու համար՝ նիս, նիդ, նին մասնիկները, ինչպէս. ասեղնիս, գլխարկնիդ, հագուստնին։

BELEDİYE

92. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — *Սարդերը ինչ ըսին շերամին։* 2. — *Ի՞նչպէս կենդանի է սարդը։* 3. — *Ո՞ւր կը գտնուի։* 4. — *Սարդին հիւսած կտաւը ինչ կը կոչուի։* 5. — *Սարդուս օգուտ ունի։* 6. — *Շերամը ինչ պատասխանեց սարդերուն։* 7. — *Ի՞նչ տեսակ կենդանի է շերամը։* 8. — *Շերամը ինչ կը շինէ։* 9. — *Ո՞ւր կը շինէ։* 10. — *Շերամին շինած փոքրիկ բոյնը ինչ կը կոչուի։* 11. — *Շերամը ինչպէս դուրս կ'ելլէ բժժին մէջէն։* 12. — *Շերամը ինչով կը սնի։*

12. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾՈՒԽՆ ՈՒ ԲՈՅԸ

Ծուխը կ'ըսէր բոցին՝ իր մօր լուսավառ.
— Մայրիկ, ըսէ, ինչ է աս
Որ քեզմէ կեանք առի, բայց միշտ եմ խաւար,
Մինչդեռ դուն միշտ կը շողաս։
— Աղջիկս, ըսաւ բոցն անոր,
Անլուսր բան չէ, ոչ ալ նոր,
Եւ դուն ալ փաստ մ'ես հիմակ
Որ հոս մարդ լոկ իր բուն լոյսով է փայլուն։
Բաւական չէ որ տըղաք
Ծընին հօրմէ մեծանուն։

ԼԸ ՊՕՆ ԺԷՆԻ

ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

ԻԲ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՀԻՒԱՆԴ ՌԱՐԵԿԱՄՈՒՀԻՆ

Այսօր տասներորդ անգամ ըլլալով այցելութեան գացի բարեկամուհիս՝ Մաննիկին, որ հիւանդ է հինգ օրէ ի վեր։ Խեղճ աղջիկը սաստիկ տենդէ մը կը տանջուի։ Գիշերները երեք չորս անգամ կ'արթննայ, գլուխը կրակներու մէջ կ'այրի։ Երկու կարող բժիշկներ կը դարմանեն զինքը, չորս հինգ հոգի ալ վրան կը հսկեն։ Ես առաջին անգամ է որ ասանկ ծանր հիւանդ մը կը տեսնեմ, եւ իր չարչարուելը դիտելով՝ շատ կը յուզուիմ։ Աւելի աղէկ էր որ ես տառապէի, քան թէ անոր տառապելը տեսնէի։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

93. Օրինակել այս հատուածը, և ստորագծել *թուական ածականները*։

94. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

95. Լուծել այս հատուածին *անունները* և *ածականները*։

ԴԱՍ

64. Որո՞նք կ'ըսուին *թուական ածական*։ — *Թուական ածական կ'ըսուին այն բառերը, որոնք անունի մը քանի հատ կամ քանիերորդ ըլլալը կը ցուցնեն, ինչպէս. մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութ, ինը, տասը, և ն.։ Առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, և ն.։*

96. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Քանի՞ անգամ այցելութեան գացիր Մաննիկին։ 2. — Ինչո՞ւ գացիր։ 3. — Ի՞նչ է իր հիւանդութիւնը։ 4. — Ի՞նչ կը պատահի իրեն գիշերները։ 5. — Ո՞վ կը դարմանէ զինքը։ 6. — Ո՞վ կը հսկէ վրան։ 7. — Այդպէս հիւանդ տեսած ես ուրիշ անգամ։ 8. — Ի՞նչ կը զգաս անոր չարչարուիլը տեսնելով։

97. Թուական ածականներ դնել կէտերուն տեղ.

Ցակոբ իր տան . . . յարկը վարձու տուաւ։ — Ես . . . տարեկան էի երբ դպրոց մտայ։ . . . տարի աշխատեցայ ուսման շրջանս աւարտելու համար։ — Մայրս . . . տարեկան էր երբ մեռաւ։ — Ցունիս՝ տարուան . . . ամիսն է։ — Պետրոս դպրոցին . . . կարգին աշակերտներէն է։ — Եղբայրս իր ամուսնութեան . . . տարին մեռաւ։

13. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՒՇՆ ՈՒ ՎԱՐԴԸ

— Դուն նոր բացուած տակաւին,
Կ՚ըսէր փուշն օր մը վարդին,
Թերթերդ արդէն կը թափին,
Ո՞վ հէք ծաղիկ գարնային։
— Ես չապրեցայ անանուն,
Պարծանքն եղայ ամէնուն.
Թոռմելուս մի՛ ցաւիր դուն,
Պիտի թողում բոյր մ՚անհուն։

ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆ

ԻԳ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԻՆՔՆԱՀԱՍԱՆ ԱՂՋԻԿ

Լուսիկ անմիտ աղջիկ մըն է։ Ինքզինքը շատ խելացի եւ շատ հմուտ կը կարծէ։ Հպարտութեամբ ամէն մարդու կը պատմէ դպրոցին մէջ իր ստացած գովեստները։ Բոլոր ծանօթները վրան կը խնդան։ Ինքզինքէն զատ՝ ուրիշ մէկուն չի հաւնիր, եւ այնչափ կարեւորութիւն կու տայ իր անձին որ մարդ չի կրնար ծիծաղը զսպել։ Ամէն մէկ խօսքին մէջ իր ինքնահաւանութեան ապացոյցը կայ։ Այս պատճառաւ բնաւ բարեկամ չունի։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

98. Օրինակել այս հատուածը և ստորագծել *անորոշ ածականները*։
99. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։
100. Անորոշ ածականներ դնել կէտերուն տեղ.

. . . տղու խնձոր տուի։ . . . մարդոց հետ բարեկամ ըլլալը անօգուտ է։ . . . անգամ քեզի խօսեցայ։ . . . վարազոյր լուալ տուի։ Այս հագուստս նոր է, բայց . . . հագուստս շատ հին է։ . . . տղայ կար դպրոցին մէջ։ . . . պտուղները կ'ուտուին։

ԴԱՍ

65. *Անորոշ ածականները որո՞նք են։* — *Անորոշ ածականները անունք են որ անորոշ իմաստ մը կու տան անունին, ինչպէս. ամէն, ուրիշ, ամէն մէկ, միւս, նոյն, քանի մը, ասանկ, ատանկ, անանկ, այսչափ, այդչափ, այնչափ, քանի՞, ի՞նչպէս, ո՞ր, ևն.։*

101. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — *Լուսիկ ինչպէս աղջիկ է։* 2. — *Ինքզինքը ինչ կը կարծէ։* 3. — *Ի՞նչ կը պատմէ ամէն մարդու։* 4. — *Ի՞նչպէս կը պատմէ։* 5. — *Ի՞նչ է հպարտութիւնը։* 6. — *Ծանօթները ինչ կ՚ընեն։* 7. — *Որո՞ւ կը հաւնի։* 8. — *Ի՞նչ կայ ամէն մէկ խօսքին մէջ։* 9. — *Ինքնահաւանութիւնը ինչ է։* 10. — *Ապացոյցը ինչ է։* 11. — *Շատ բարեկամ ունի։* 12. — *Ինչո՞ւ բարեկամ չունի։*

102. Որոշել հետեւեալ նախադասութեանց մէջ գտնուած ածականներուն տեսակները.

Բոլոր մեծ օթեակները բռնուած էին այս գիշեր։ — Երկու անգամ ձեզի եկայ, եւ ձեր սպասուհին միայն գտայ։ — Իմ մեծ աղջիկս ճամբորդութիւն պիտի ընէ այս տարի։ — Ամէն ամառ օդափոխութեան կ՚երթամ իմ հօրս հետ։ — Երեք զաւակ ունիմ. երկուքը դպրոց կ՚երթան, մէկն ալ տունը կը կենայ։ — Ո՞ր աղջկան հաւնեցաք։ — Պզտիկ տունները շատ անգամ մեծերէն աւելի սիրուն կ՚ըլլան։

14. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԱՄՈՒՂ ՀԱՍԿԸ ԵՒ ՊԱՐԱՊ ՏԱՂԱՌԸ

— Հասուն հասկեր երբ գլուխնին
Կը խոնարհեն մինչեւ գետին,
Սա մէկն ինչո՞ւ բարձր է այնքան։
— Սին գլխուն մէջ հատեր չի կան։

— Այս տակառն ալ՝ զոր այդպէսան
Կը գլտորէ դէպի հընձան,
Ինչո՞ւ կ՚ընէ աղմուկ այդչափ։
— Որովհետեւ մէջն է պարապ։

ՊՈՒՐԿԷՆ

ԴԵՐԱՆՈՒՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

ԻԴ. ԸՆՁԵՐՑՈՒՄ. — ԾԱՂԻԿՆԵՐԸ ԵՒ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ամէն իրիկուն երբ դպրոցէն դառնամ, քրոջս՝ Ա. Լինէին հետ պարտէզ կ'իջնեմ։ Ես պտուղները շատ կ'սիրեմ, ինքն ալ՝ ծաղիկները։ Ինք ինծի համար դեղ. ձեր, ծիրաններ կը բրցնէ. ես ալ իրեն համար վարդեր, յափուկներ կը ժողվեմ։ Ինք ինձմէ աւելի շուտ կը քալէ. ես ալ կը վազեմ որ իրմէ առաջ անցնիմ։ Այսպէս աղէկ մը զուարճանալէ ետքը՝ մեր կողմերը պտուղներով ու ծաղիկներով կը լեցնենք, եւ կը տանինք մեր մայրիկին, որ շատ կ'ախորժի անոնցմէ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

103. Օրինակել այս հատուածը, ստորագծել անձնական դերանունները, և ա, բ, գ գիրերով ցոյց տալ դէմքերը։

104. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

66. *Դերանունը ի՞նչ է։ — Դերանունը բառն է, որ անունին տեղը կը դրուի զայն չկրկնելու համար, և ունի թիւ, հոլով, դէմք։*

67. *Դէմքը քանի՞ է։ — Դէմքը երեք է. առաջին, երկրորդ, երրորդ։*

68. *Որո՞նք են անձնական դերանուններ։ — Անձնական դերանունները հետեւեալներն են.*

		ԵՆՋ.	ՅՈՒՐ.
Ա.	Դէմք	Ես	Մենք
Բ.	»	Դուն	Դուք
Գ.	»	Ինք	Իրենք

105. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — *Ամէն իրիկուն՝ երբ դպրոցէն դառնաս, ինչ կ'ընես։* 2. — *Դուն ինչ կը սիրես։* 3. — *Ատրինէն ինչ կը սիրէ։* 4. — *Ինք ինչ կը բրցնէ քեզի համար։* 5. — *Դուն ինչ կը ժողվես իրեն համար։* 6. — *Ետքը ինչ կ'ընէք։* 7. — *Ինչու կը տանիք ձեր մայրիկին։*

106. Օրինակել և զոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

	ԵԶԱԿԻ	ՅՈՒՆԱԿԻ
Ուղղ.	*Ես*	*Մենք*
Հայց.	*Զիս*	*Զմեզ*
Սեռ.	*Իմ, իմին*	*Մեր, մերին*
Տրակ.	*Ինձ, ինծի*	*Մեզ, մեզի*
Բաց.	*Ինձմէ, ինէ*	*Մեզմէ, մենէ*
Գործ.	*Ինձմով*	*Մեզմով*

15. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄԱՅՐԸ ԵՒ ԵՐԿՈՒ ՁԱՒԱԿՆԵՐԸ

Մեր Թաղին մէջ խեղճ ադքատ
Մայր մը կար շատ երջանիկ։
Ունէր զաւակ երկու հատ.
Մէկը մեծ՝ միւսն էր փոքրիկ։

Ամենք մէկտեղ կ'ապրէին
Փայփայելով զիրար միշտ.
Կապուած սիրով կաթողին՝
Չէին ճանչցած երբեք վիշտ։

Օր մը մեծը մօրն ըսաւ.
«—Գիտեմ զիս շատ կը սիրես,
Բայց չես կրնար դուն բընաւ
Սիրել, որքան ես ըզքեզ։»

Մայրը հարցուց իր տղուն.
«—Ինչու կ'ըսես ատոնկ բան։
—Երկու զաւակ ունիս դուն,
Դուչեց, ես՝ մայր մը միայն։»

ՀԵՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

—

ԻԵ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ՓՈՔՐԻԿ ԿԱՏՈՒՆԵՐԸ**

Հօրեղբայրս դուրսէն երեք հատ փոքրիկ կատուներ էր ինծի։ Ասոնցմէ մէկը ճերմակ՝ միւսը շէկ՝ երրորդն ալ գորշ է։ Երէկ իրիկուն մեր տան բակին մէջ շատ մը խաղացին։ Ճերմակ կատուն ամէնէն կայտառն է։ Պոչին գնդակ մը կապեցի, ու սկսաւ ինք իր վրայ դառնալ։ Շէկը եռեւէն վազեց, անոր ալ առջին ինձոր մը նետեցի։ Իսկ գորշը՝ ասոնց վազվզելը տեսնելով՝ չփոթած կը նայէր։ Քանի մը ժամ զուարճացայ անոնցմով։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

107. Օրինակել այս հատուածը, ստորագծել *ցուցական ածականները*, և **ա**, **բ**, **գ** գիրերով ցոյց տալ *դիմ*երը։

108. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

69. *Ցուցական դերանուններ*ը որո՞նք են։ — *Ցուցական դերանունները հետեւեալներն են.*

		ԵԶԱԿԻ	ՑՈՓՆԱԿԻ
Ա.	*Դիմ*	*Այս, աս, ասիկա, սա*	*Ասոնք*
Բ.	»	*Այդ, ատ, ատիկա*	*Ատոնք*
Գ.	»	*Այն, ան, անիկա*	*Անոնք*

70. *Ան, անիկա, անոնք* ուրիշ ո՞ր տեսակ դերանունի տեղ կը գործածուին։ — *Ան, անիկա, անոնք իրրեւ անձնական դերանուն ալ կը գործածուին։*

109. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Հօրեղբայրդ ինչ ղրկեր է քեզի։ 2. — Ասոնք ինչպէս են։ 3. — Ի՞նչ ըրին երէկ իրիկուն։ 4. — Ի՞նչ ըրիր ճերմակ կատուին։ 5. — Ան ինչ ըրաւ։ 6. — Շէկը ինչ ըրաւ։ 7. — Դուն ինչ նետեցիր անոր առջին։ 8. — Գորշը ինչ կ'ընէր։ 9. — Կրցար զուարճանալ անոնց հետ։

110. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

	ԵԶԱԿԻ	ՑՈՒՑԱԿԻ
Ուղղ. Հայց.	*Այս, աս, ասիկա*	*Ասոնք*
Սեռ. Տրակ.	*Ասոր*	*Ասոնց*
Բաց.	*Ասկէ*	*Ասոնցմէ*
Գործ.	*Ասով*	*Ասոնցմով*

16. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Հընկէ, հրեշտակ, իմ զարթումիս,
Այնպէս ըսաւ քանի որ Տէր.
Մահճիս մօտիկ պահպանէ զիս
Երբոր ննջեմ ամէն գիշեր։
Գուն ունեցիր անձիս անզօր,
Ու մի թողուր զիս մինաւոր։
Խօսէ ճամբան ինձ շարունակ,
Եւ ունկընդրած պահուս քեզ լուռ,
Որպէս զի վար չիյնամ մինակ,
Բարի հրեշտակ, ձեռքդ ինծի տուր։

ՏԻԿԻՆ ԹԱՍԹԻԻ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՈՒՄԸ

—

Ա. ԴԷՄԲ

	Եզակի	Յոքնակի
Ուղղ.	Ես	Մենք
Հայց.	Զիս	Զմեզ
Սեռ.	Իմ, իմին	Մեր, մերին
Տրակ.	Ինձ, ինծի	Մեզ, մեզի
Բաց.	Ինձմէ, ինէ	Մեզմէ, մենէ
Գործ.	Ինձմով	Մեզմով

Բ. ԴԷՄԲ

	Եզակի	Յոքնակի
Ուղղ.	Դուն	Դուք
Հայց.	Զքեզ	Զձեզ
Սեռ.	Քու, քուկին	Ձեր, ձերին
Տրակ.	Քեզ, քեզի	Ձեզ, ձեզի
Բաց.	Քեզմէ, քենէ	Ձեզմէ
Գործ.	Քեզմով	Ձեզմով

Գ. ԴԷՄԲ

	Եզակի	Յոքնակի
Ուղղ.	Ինք	Իրենք
Հայց.	Զինք	Զիրենք
Սեռ.	Իր, իրեն	Իրենց
Տրակ.	Իրեն	Իրենց
Բաց.	Իրմէ	Իրենցմէ
Գործ.	Իրմով	Իրենցմով

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՈՒՄԸ

—

Ա. Ց Ս

	Եզակի	Յոքնակի
Ուղղ. Հայց.	*Այս , աս , ասիկա*	*Ասոնք*
Սեռ. Տրակ.	*Ասոր*	*Ասոնց*
Բաց.	*Ասկէ*	*Ասոնցմէ*
Գործ.	*Ասով*	*Ասոնցմով*

Ա. Ց Դ

	Եզակի	Յոքնակի
Ուղղ. Հայց.	*Այդ, ատ, ատիկա*	*Ատոնք*
Սեռ. Տրակ.	*Ատոր*	*Ատոնց*
Բաց.	*Ատկէ*	*Ատոնցմէ*
Գործ.	*Ատով*	*Ատոնցմով*

Ա. Ց Ն

	Եզակի	Յոքնակի
Ուղղ. Հայց.	*Այն , ան , անիկա*	*Անոնք*
Սեռ. Տրակ.	*Անոր*	*Անոնց*
Բաց.	*Անկէ*	*Անոնցմէ*
Գործ.	*Անով*	*Անոնցմով*

Դիտողութիւն. — *Երբ ան, անիկա, անոնք իբրեւ անձնական դերանուն գործածուած են, այն ատեն՝ անձնական դերանուններու հոլովման համեմատ՝ հայցականին կ'ըլլայ զայն, զանիկա, զանոնք։*

—

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

ԻԶ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՄԵՐ ՊՈՒՊՐԻԿՆԵՐԸ

Մայրիկը նոր պուպրիկներ գնեց ինձի եւ Անայիսի համար։ Իմինս խարտեաշ է, իրենը թուխ։ Իմինս գորշ աչքեր ունի, իրենը սեւ։ Անայիս իրենը չի սիրեր, խնդ կ'ուզէ։ Այս պատճառաւ վէճը պակաս չէ մեր մէջէն։ Մայրիկը շատ կը վշտանայ այս բանին համար, եւ կ'աշխատի զմեզ հաշտեցնել։ Ես ալ միտքս դրի որ իմս Անայիսին տամ, եւ ամէն կռիւ վերջանայ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

111. Օրինակել այս հատուածը և ստորագծել *ստացական դերանունները*։

112. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

113. Լուծել այս հատուածին բոլոր անունները և դերանունները։

ՕՐԻՆԱԿ

Իմինս	*Ստացական դերանուն, եզակի ուղղական, Ա. Դէմք։*
Իրենը	» » » » Գ. » ։

ԴԱՍ

71. *Ստացական դերանունները ի՞նչ կը ցուցընեն։ — Ստացական դերանունները բանի մը ոք ունենալը կը ցուցնեն, և հետեւեալներն են.*

ԵԶԱԿԻ

Ա. Դէմք	*Իմս, իմինս*	*Մերը, մերինը*
Բ. »	*Քուկդ, քուկինդ*	*Ձերը, ձերինը*
Գ. »	*Իրը, իրենը*	*Իրենցը*

ՅՈՒՆԱԿԻ

Ա. Դէմք	*Իմիններս*	*Մերինները*
Բ. »	*Քուկիններդ*	*Ձերինները*
Գ. »	*Իրենները*	*Իրենցիները*

72. Դերանունները լուծելու համար ի՞նչ պէտք է ըսել։ — *Դերանունները լուծելու համար՝ պէտք է ըսել անոնց տեսակը, թիւը, հոլովը, դեմքը։*

114. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — *Մայրիկը ինչ գնեց քեզի եւ Անայիսին համար։* 2. — *Քուկինդ ինչպէս է։* 3. — *Աչքերնիս ինչպէս են։* 4. — *Գոհ էք ձեր պուպրիկներէն։* 5. — *Վէճ ունիք մէջերնիդ։* 6. — *Ի՞նչ պատճառաւ։* 7. — *Ձեր մայրիկը ինչ կ՚ընէ ձեր վէճը տեսնելով։* 8. — *Դուն միտքդ ինչ դրիր։* 9. — *Ինչու՞ համար։*

17. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՌԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Երկրի վէջ ամէն իր
Ունի մաս արեւէն.
Փուշն ունի վարդ կարմիր,
Եւ գիշերն այգն իրեն։

Լէն տուաւ խոտ մարգին,
Դաշտերուն հունձք բեղուն,
Եւ օդին գոռ արծուին,
Մացառներ բոյներուն։

Ծառն ունի դալարին,
Մեղուն մեղր անուշիկ,
Հոսող ջուրն իր հրծծիւն,
Եւ շիրիմն իր երկինք։

Լաւագոյն կեղրոնի
Իրերն հոս կը ձրկտին.
Ծաղկին պէտք ծիլն ունի,
Եւ սիրտն ալ մտերմին։

ՏԸ ԼՕՆԼԷ

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

ԻԷ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԾՈՑԼ ԱՂՋԻԿԸ

Վարդուհի ծոյլ աղջիկ մըն է, որ առաւօտները աչ կ'ելլէ անկողնէն։ Սենեակը տակնու

116. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչպէս աղջիկ է Վարդուհի։ 2. — Ե՞րբ կ'ելլէ անկողնէն։ 3. — Իր սենեակը ինչպէս կը Թողու։ 4. — Զգեստները ինչ վիճակի մէջ կը ձգէ։ 5. — Ի՞նչ խնամք պէտք է տանիլ զգեստներուն որ մաքուր մնան։ 6. — Կօշիկները ուր կը Թողու։ 7. — Իր փոքրիկ դեղձանիկը կը խնամէ։ 8. — Ի՞նչ է դեղձանիկը։ 9. — Ուրիշ երգեցիկ Թռչուններ գիտէք։

117. Լուծել հետեւեալ դերանունները.

Որոնք, մենք, մեզ, անոնց, մերը, որ, ասոնք, քուկդ, զայն, իրենք, որուն, իմինս, իրենցմէ, անոնք, ատոնցմով, որմէ, ձերինը, ասոնցմէ, քեզի։

18. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՏՂՈՒ ՀԱՅՐՅՈՒՄ

—Հայրիկ, ո՞վ կ'անցնի ամէնէն արագ,
Հովերը արդեօք, գետը սրընԹաց,
Արդեօք ասուպն որ կ'իյնայ վայրահակ
Առկայծ ակօսով բոցի պէս վառուած։

Արդեօք ամպերը, ծուխն եԹերային,
Եւ կամ օդապարը ծիծեռն ուղեւոր,
Բոցածաւալ փոնջն արդեօք հըրԹիռին,
Երկինքին շանԹը Թէ փայլակն անոր։

Աւազը խըլուած եզերքէն ծովուն,
Ճերմակ օճառին պըղպըջակն ոսկի,
Օդապարիկը, տերեւն ազազուն,
Երազը, արդեօք դերձանը կոյսին։

—Իցիւ Թէ անգէտ մընաս միշտ, որդեակ,
Անուշ եւ տըխուր սա փորձառուԹեան,
Թէ ինչ որ կ'անցնի ամէնէն արագ,
Մեր երջանկուԹեան օրերն են միայն։

ՎԻՔՈՆԹ ՏԸ ԺԻՌԷԼ

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

ԻԸ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՄԵԾ ՆՈՐ ՑՈՒՆԸ

Անցեալ տարի մեր տունը այրեցաւ եւ այս տարի հայրս ուրիշ մը չինել տուաւ։ Երկկ եկանք բնակիլ այս տան մէջ։ Սենեակները բոլորն ալ այնչափ աղուոր են որ չեմ գիտեր թէ ո՞րը ընտրեմ ինծի համար։ Մէկը վարդագոյն է, միւսը՝ դեղին, ուրիշ մը կապոյտ, եւ ամէնքն ալ իրարմէ տարբեր նկարներով զարդարուած։ Ամէն մէկուն մէջ իրեն յարմար կարասիներ դնուած են։ Ոմանք անդուսով կահուած են, ոմանք ալ թաւիշով, ամէնքն ալ իրարմէ գեղեցիկ եւ ճաշակաւոր են։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

118. Օրինակել այս հատուածը և ստորագծել *անորոշ դերանունները*։

119. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

120. *Անորոշ դերանուններ* դնել հետեւեալ կէտերուն տեղ.

. . . ալ հոն էին։ . . . կար հոն։ Այս երկուքն ալ . . . են։ . . . կը զես ինձմէ։ Իմ ուզածս սա չէ, . . . է։ . . . բաւական է։ Ասոնցմէ . . . իմս է, . . . քուկդ է։ . . . չունիմ քեզի տալու։

Դ Ա Ս

76. *Անորոշ դերանուն* որո՞ւ կ'ըսուի։ — *Անորոշ կ'ըսուին այն դերանունները որ անորոշ դաղափար մը կ'արթնցնեն մեր մտքին մէջ, ինչպէս. ամէնքը, մէկը, ոմանք, իրար, քան մը, ինչ որ, ոչինչ, ամէն մէկը, ո՛չ մէկը, ուրիշը, միւսը, այլայլը, ո՞րը, ո՞ոչ ապը, ի՞նչ, ևն։*

121. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ձեր տունը ինչ եղաւ անցեալ տարի։ 2. — Հայրդ ինչ ըրաւ այս տարի։ 3. — Ե՞րբ եկաք բնակիլ այդ տան մէջ։ 4. — Ո՞ր սենեակը ընտրեցիր քեզի համար։ 5. — Սենեակները ինչպէս են։ 6. — Ի՞նչ զետեղուած է ամէն մէկուն մէջ։ 7. — Ի՞նչպէս կահուած են անոնք։

122. Մէյմէկ խօսք շինել հետեւեալ դերանուններով.

Ո՞րը, քուկդ, ան, մէկը, ասոնք, բան մը, իրեն, քեզմէ, դուն, մերը, ան, ամէնքը, ատիկա։

Օրինակ. — *Այս գրիչներէն ո՞րը կ'ուզես։*

123. Անուններ դնել հետեւեալ խօսքերուն մէջ գտնուած դերանուններուն տեղ.

Ո՞րը աղուոր է։ — Անիկա ատախօս մարդէն չ'ախորժիր։ — Քովս մէկը չի կայ։ — Քրոջս տուէք ասոնք։ — Բան մը չտեսայ։ — Եղածները պատմեցի իրեն։ — Քեզմէ զատ մէկը չունիմ։ — Դուն իմ բարեկամս ես։ — Մեր տունը երեք սենեակ ունի, ձերը՝ հինգ հատ ունի։ — Ան ուզեց որ դժբաղդ ըլլամ։ — Ամենքը հոն ժողվուեր էին։ — Ես շինած եմ ատիկա։

Օրինակ. — *Սենեակդ աղուոր է։ — Գրիգոր ատախօս մարդէն չ'ախորժիր։*

ԲԱՅ

ԵՆԹԱԿԱՅ

ԻԹ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՀՈՎԻՒՐ

Արեւը ծագելուն պէս՝ հովիւը իր հօտը կ'առնէ, դաշտը կը տանի արածելու համար։ Գառնուկը, ուլը կը ցատկռտեն խոտերուն վրայ, իրենց մոր քով։ Պահպան շունը անոնց վրայ կը հսկէ։ Եւ հովիւը կանանչ մարգին վրայ տարածուած՝ կը նկրտէ ծառի մը հովանիին տակ։ Անուշ հովը կը փչէ։ Սրինգի մը ձայնը կը հնչէ անտառին խորէն, եւ լեռը արձագանգ կու տայ։ Թռչունը կ'երգէ մացառին մէջ, ոչխարը կը մայէ, եւ օդը կը լեցուի այս բնական երաժշտութեամբ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

124. Օրինակել այս հատուածը, և ստորագծել *բայերը*։

125. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

126. Խօսքեր շինել հետեւեալ *ենթականերուն* գործողութիւնը ցուցնող *բայերով*։

Ենթականեր. Տղայ, Թռչուն, ձուկ, զանգակ, ջուր, կրակ, հով։

Օրինակ. — *Տղան կու լայ։*

127. Խօսքեր շինել հետեւեալ *բայերուն յարմար ենթականեր* գտնելով։

Բայեր. Կը բառաչէ, կը հաչէ, կը կտրէ, կը խնդայ, կը փայլի, կը Թռչի, կը հոսի։

Օրինակ. — *Կովը կը բառաչէ։*

128. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Հովիւը երբ իր հօտը արածելու կը տանի։ 2. — Ո՞վ կը ցատկռտէ խոտերուն վրայ։ 3. — Ո՞վ կը հսկէ անոնց վրայ։ 4. — Հովիւը ինչ կ'ընէ։ 5. — Ի՞նչ ձայն կը հնչէ անտառին խորէն։ 6. — Ո՞վ արձագանգ կու տայ։ 7. — Արձագանգը ինչ է։ 8. — Ո՞վ կ'երգէ մացառներուն մէջ։ 9. — Ոչխարները ինչ կ'ընեն։ 10. — Օդը ինչով կը լեցուի։ 11. — Ի՞նչ է բնական երաժշտութիւնը։

129. Օրինակել և գոց սորվիլ հետեւեալ բայը.

Ես կը հսկեմ	Մենք կը հսկենք
Դուն կը հսկես	Դուք կը հսկէք
Ան կը հսկէ	Անոնք կը հսկեն

Դ Ա Ս

77. *Բայը ի՞նչ կը ցուցնէ։ — Բայը բան մը ընել կամ ըլլալ կը ցուցնէ, ինչպէս. տեսնել, մեռնիլ։*

78. *Ենթական ի՞նչ է։ — Ենթական բային գործողութիւնը ընողն է, ինչպէս.* Ես տեսայ, Դոյրս մեռաւ։

79. Ենթական ի՞նչպէս կը գտնուի։ — *Ենթական կը գտնուի ո՞ղ հարցումը ընելով, ինչպէս.* Ո՞վ տեսաւ. — Ես։ — Ո՞վ մեռաւ. — Դոյրս։

80. Ենթական ի՞նչ տեսակ բառ է։ — *Ենթական ընդհանրապէս անուն մը կամ դերանուն մըն է, ինչպէս.* Դոյրս, Ես։

ՍԵՌԻ ԽՆԴԻՐ ԵՒ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Լ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ԿԱՂՆԻՆ ԵՒ ԵՂԷԳԸ**

Օր մը կաղնին եղէգին ըսաւ. «Շատ դժբաղդ ես այդպէս տկար ըլլալուդ համար, եւ ես շատ կը մեղքնամ զքեզ։ Թեթեւ հով մը փչելուն պէս գլուխդ կը խոնարհեցնես, եւ մէջքդ մինչեւ գետին կը ծռես։ Մինչդեռ ես ճակատս հովերուն դէմ բարձր կը բռնեմ, եւ փոթորիկն անգամ չի կրնար զիս ձգել»։ Եղէգը պատասխանեց. «Ես քեզմէ աւելի բարեբաղդ եմ, որովհետեւ կը ծռիմ բայց չեմ կոտրիր»։ Այն միջոցին ուժգին հով մը ելաւ։ Եղէգը ծռեցաւ, եւ անվնաս ազատեցաւ հովին հարուածներէն։ Կաղնին հաստատ կեցաւ, ու կէս մէջքէն կոտրեցաւ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

130. Օրինակել այս հատուածը, ցոյց տալ *սեռի խնդիրները* մեկ գծով և *բնութեան խնդիրները* երկու գծով։

131. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

81. Քանի՞ տեսակ *խնդիր* կայ։ — *Երկու տեսակ խնդիր կայ. սեռի խնդիր և բնութեան խնդիր։*

82. *Սեռի խնդիրը* ի՞նչ հոլով կ'ըլլայ եւ ի՞նչ հարցումով կը գտնուի։ *Սեռի խնդիրը հայցական հոլով կ'ըլլայ և զո՞վ կամ ի՞նչ բանը հարցումով կը գտնուի, ինչպէս. Կատուն ծեծեցի։ — Զո՞վ ծեծեցիր. – Կատուն։*

83. *Բնութեան խնդիրը* ի՞նչ հոլով կ'ըլլայ, եւ ի՞նչ հարցումով կը գտնուի։ — *Բնութեան խնդիրը ընդհանրապէս տրական, բացառական և գործիական կ'ըլլայ, ու կը գտնուի որո՞ւ կամ ի՞նչ բանի, որմե՞ կամ ի՞նչ բանէ, որո՞վ կամ ի՞նչ բանով հարցումներով։*

132. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ո՞րն է ընաւին ենթական։ 2. — Կաղնին ինչ ըսաւ եղէգին։ 3. — Եղէգին բառը բնութեան խնդիր է. ինչո՞ւ համար։ 4. — Ի՞նչ հարցման կը պատասխանէ։ 5. — Ո՞րն է կը մեղմնամ բային ենթական։ 6. — Ես բառը դերանուն է. ինչո՞ւ համար։ 7. — Ո՞րն է կը խոնարհեցնես եւ կը ծռես բայերուն ենթական։ 8. — Ինչո՞ւ եղէգը կը ծռի։ 9. — Ո՞րն է կը բռնեմ բային ենթական։ 10. — Ձակատս բառին պաշտօնը ինչ է։ 11. — Եղէգը ինչ պատասխանեց։ 12. — Բայերը միշտ խնդիր կ'ունենան։ 13. — Այն միջոցին ինչ պատահեցաւ։ 14. — Եղէգը ինչ ըրաւ։ 15. — Կաղնին ինչ ըրաւ։ 16. — Ո՞րն է կոտրեցաւ բային ենթական։

133. Գտէք հետեւեալ բայերուն յարմար անուն խնդիրներ.

Դասատուն . . . կը կրթէ։ Մայրը . . . կը սնուցանէ։ Որդերը . . . կը կրծեն։ Արեւը . . . տաքցուց։ Ատաղձագործը . . . շինեց։ Հովը . . . պիտի խորտակէ։ Կովը . . . կու տայ։ Ոչխարը . . . կ'ուտէ։ Կատուն . . . բռնեց։ Մեղուները . . . կը շինեն։ Քոյրս . . . կորսնցուց։

19. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԲԱՂԵՂՆ ՈՒ ՎԱՐԴԵՆԻՆ

Սողոսկելով բաղեղն ելաւ պատն ի վեր.
Վարդենիին հասակն հոնկէ կը ծաղրէր։
Թուփը փոքրիկ ըսաւ. «Նայէ՛ առանձին
Ես բարձրացայ այս կէտին.
Բայց դուն որ սէգ ես այդքան,
Կը սողայիր առանց պատին օգնութեան։»

ԼԸ ՊԱՅԵՒ

ԲԱՅԵՐՈՒՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

ԼԱ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ԳՈՅԱՌԱՆԵՐԸ**

Մեր պարտէզը լեցուն է փոսուռաներով։ Երբ գիշեր ըլլայ, ծառերուն ճիւղերուն մէջէն երեւան կու գան պզտիկ աստղերու պէս։ Կը ցատկռտեն, կը թռչին, կ'ելլեն, կ'իջնեն, իրարու հետեւէ կը վազեն, ծաղիկներուն շուրջը կը դառնան, եւ երբ մացառներուն վրայ թառին, կարծես իրենք ալ լուսեղէն ծաղիկներ են։ Եղբայրս զանոնք կը բռնէ, եւ տուփի մը մէջ կը պահէ։ Հոն քիչ քիչ լոյսերնին կը մարի ու կը մեռնին։ Այս բանը իմ սրտիս շատ կը դպչի։ Չեմ կրնար մոռնալ այն խեղճ պզտիկ անասուններուն, որոնց տեսքը այնքան հաճոյք կը պատճառէ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

134. Օրինակել այս հատուածը, ցոյց տալ դերանունները իրենց դէմքերովը, և ստորագծել բայերը։

135. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

84. *Ժամանակը* քանի՞ է։ — *Ժամանակը երեք է. ներկայ, անցեալ և ապառնի։*

85. *Ներկան, անցեալը* եւ *ապառնին* քանի՞ տեսակ են։ — *Ներկան մէկ է։ Անցեալը երկուք է. անցեալ անկատար և անցեալ կատարեալ։ Ապառնին երկուք է. բացարձակ ապառնի և անկատար ապառնի։*

136. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ձեր պարտէզը ինչով լեցուն է։ 2. — Ի՞նչ է փոսուռան։ 3. — Ցորեկներն ալ իր լոյսը կ'երեւայ։ 4. — Ինչու՞ չերեւար։ 5. — Դիշերները ինչ կ'ընեն փոսուռանները։ 6. — Եղբայրդ ինչ կ'ընէ անոնց։ 7. — Ի՞նչ կ'ըլլան անոնք այդ տուփին մէջ։ 8. — Այդ բանը որուն սրտին կը դպչի։ 9. — Ինչու՞ համար։ 10. — Պէտք է չարչարենք կենդանիները մեր զուարճութեան համար։

137. Խոնարհել և գոց սորվիլ հետեւեալ բայը.

ԵԶԱԿԻ		ՅՈՓՆԱԿԻ	
Ես	կը վազէի	Մենք	կը վազէինք
Դուն	կը վազէիր	Դուք	կը վազէիք
Ան	կը վազէր	Անոնք	կը վազէին

138. Հետեւեալ բայերը եզակի ընել.

Կը կարդաք։ — Կը փափաքին։ — Պիտի ժպտինք։ — Երգեցինք։ — Կը պարենք։ — Պիտի խնդան։ — Աղաչեցինք։ — Կը յուզուիք։ — Ղրկեցինք։ — Պօռացիք։

20. ԱՐՏՍՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՍՈՒՌԱՆ

Ես կը սիրեմ բացատաններն անտառին
Դիշերուան զով ժամերուն մէջ՝ առանձին.
Ըստուերին մէջ կը գտնեմ լոյս բաւական,
Չի իմ կանթեղս է միշտ ինձմէ անբաժան։

Երբ երկինքին մարին շողերն ու կայծեր
Ճամբուն վրայ, զոր մութ գիշերն է ծածկեր,
Ես ցոյց կու տամ իրեն շաւիղն անցորդին,
Աստղերն երբոր քողի ներքեւ պահուըտին։

Սակայն ցորեկն երբ ճաճանչովն արեւուն
Կ'ըլլան դաշտերն ու բաղաքներն ողողուն,
Ես կը քաշուիմ. ինձմէ մեծեր թող ճրագին
Լուսաւորել թատերաբեմն աշխարհին։

Ժ. ԺԱՔ ԲՕՌՆԱ

ԷԱԿԱՆ ԲԱՅ

Սահմանական եղանակ

ՆԵՐԿԱՅ

	Եզակի		Յոգնակի	
Ա. Դիմ	Ես	եմ	Մենք	ենք
Բ. »	Դուն	ես	Դուք	էք
Գ. »	Ան	է	Անոնք	են

ԱՆՑԵԱԼ, ԱՆԿԱՏԱՐ

	Եզակի		Յոգնակի	
Ա. Դիմ	Ես	էի	Մենք	էինք
Բ. »	Դուն	էիր	Դուք	էիք
Գ. »	Ան	էր	Անոնք	էին

ԱՆՑԵԱԼ, ԿԱՏԱՐԵԱԼ

	Եզակի		Յոգնակի	
Ա. Դիմ	Ես	եղայ	Մենք	եղանք
Բ. »	Դուն	եղար	Դուք	եղաք
Գ. »	Ան	եղաւ	Անոնք	եղան

ԲԱՑԱՐՁԱԿ ԱՊԱՌՆԻ

	Եզակի		Յոգնակի	
Ա. Դիմ	Ես	պիտի ըլլամ	Մենք	պիտի ըլլանք
Բ. »	Դուն	պիտի ըլլաս	Դուք	պիտի ըլլաք
Գ. »	Ան	պիտի ըլլայ	Անոնք	պիտի ըլլան

ԱՆԿԱՏԱՐ ԱՊԱՌՆԻ

	Եզակի		Յոգնակի	
Ա. Դիմ	Ես	պիտի ըլլայի	Մենք	պիտի ըլլայինք
Բ. »	Դուն	պիտի ըլլայիր	Դուք	պիտի ըլլայիք
Գ. »	Ան	պիտի ըլլար	Անոնք	պիտի ըլլային

Հրամայական եղանակ

	Եզակի	Յոգնակի
Ա. Դեմ	——	Մենք ըլա՛ն.ք
Բ. »	Դուն եղի՛ր	Դուք եղէ՛.ք

Ստորադասական եղանակ

ՆԵՐԿԱՅ

	Եզակի	Յոգնակի
Ա. Դեմ	Ես ըլա՛ր	Մենք ըլա՛ն.ք
Բ. »	Դուն ըլա՛ս	Դուք ըլա՛.ք
Գ. »	Ան ըլայ	Անոնք ըլա՛ն

ԱՆԿԱՏԱՐ

	Եզակի	Յոգնակի
Ա. Դեմ	Ես ըլայի	Մենք ըլայի՛ն.ք
Բ. »	Դուն ըլայիր	Դուք ըլայի՛.ք
Գ. »	Ան ըլայր	Անոնք ըլայի՛ն

Անորոշ եղանակ

ԱՆԵՐԵՒՈՅԹ

Ըլալ

ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Եղող

ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Եղած, եղեր

ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Ըլալու

ՍՏՈՐՈԳԵԼԻ

ԼԲ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԼԱԼԿԱՆ ՏՂԱՆ

Սարգիս լալկան տղայ մըն է։ Ոչ կրնաս ըրածին գիտողութիւն ընել, ոչ ալ կատակի ձեւով խօսք մը ըսել իրեն։ Մայրը յուսահատ է անոր կրթութեան մասին, որովհետեւ եթէ իր մէկ յանցանքը երեսին տայ, անմիջապէս աչքերը կը թրջուին, ու կը սկսի լալ։ Դէմքը միշտ կախ է, եւ թարթիչներուն ետին արցունքի կաթիլ մը պատրաստ կը կենայ։ Ես չեմ ուզեր իրեն մոտենալ, վասն զի իր վարմունքը անտանելի է ինծի։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

139. Օրինակել այս հատուածը, և ստորագծել ստորոգելիները։

140. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

141. Գրել հետեւեալ խօսքերը միայն մէկ ենթակայով.

Յակոբ եւ Սարգիս չար են։ Մաննիկ եւ Սօֆիկ հնազանդ են։ Սոխակն ու դեղձանիկը երգիչ են։ Կատուն եւ մուկը գող են։ Ես եւ քոյրս տկար էինք։ Հայրս եւ մայրս դժբաղդ եղան։

Օրինակ. — *Յակոբ չար է։*

ԴԱՍ

86. Ի՞նչ է *ստորոգելին*։ — *Ստորոգելին անուն մը կամ ածական մըն է, որ էական բային հետ կը գործածուի, և ենթակային ինչ կամ ինչպէս ըլլալը կը ցուցնէ։*

87. Ստորոգելին ի՞նչ հոլով եւ ի՞նչ թիւ կ'ունենայ։ — *Ստորոգելին միշտ ուղղական կ'ըլլայ և եզակի կը մնայ։*

142. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչպէս տղայ է Սարգիս։ 2. — Կրնաս դիտողութիւն ընել իր ըրածին։ 3. — Ինչո՞ւ համար։ 4. — Մայրը ինչո՞ւ յուսահատ է իր մասին։ 5. — Ի՞նչ կը նշանակէ յուսահատ ըլլալ։ 6. — Իր դէմքը ինչպէս է։ 7. — Արցունքը ուրկէ կը վազէ։ 8. — Կ'ուզես իրեն մօտենալ։ 9. — Ինչո՞ւ համար։

143. Ստորոգեալներ դնել հետեւեալ կէտերուն տեղ.

Մարդը . . . է։ Օձը . . . է։ Կեանքը . . . է։ Աստղերը . . . են։ Ծաղիկը . . . է։ Ծառերը . . . են։ Օդը . . . է։ Այգին . . . է։ Աղբիւրը . . . է։ Երկինքը . . . է։ Ապակին . . . է։ Հացը . . . է։

21. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՀԱՅԼԻՆ.

Փոքրիկ Աննան հայլին մէջ կը զմայլէր
Իր դէմքին.
«Շուտ տեղը դիր, գոչեց մայրը անհամբեր,
Այդ հայլին։»
—«Իմ պատկերս հոն տեսնել կ'ուզեմ,» պօռաց ան
Վերջապէս.
Ու կը ճըչէր, կու լար, կ'ողբար բարձրաձայն
Խենդի պէս։
«Տեսնել կ'ուզես, մայրիկն հարցուց, նայէ լաւ,»
Եւ Աննան
Իր զայրոյթովն ահռելի դէմք մը տեսաւ.
Ինքն էր ան։

ԼՈՒԻ ՊԱԹԻԶՊՕՆ

ԵՐԵՔ ԼԹՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԳ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԱՐԾԱԹ ԴՐԱՄԸ

Կաղանդին՝ Պօղոսին հայրը արծաթ դրամ մը տուաւ իրեն որ իր քրոջը՝ Նոյեմիին հետ երթայ շաբաթ գնել։ Քոյր եւ եղբայր ճամբան քալած աւեւնին խանութներուն կը նայէին, որոնց ցուցափեղկերուն մէջ շարուած էին գոյնզգոյն շաբաթէ խաղալիկներ, ծաղիկներ, պըտուղներ։ Նոյեմի ամէնուն ալ կը հաւնէր, եւ ամէնքն ալ գնել կը բաղձար։ Իսկ Պօղոս կը խորհէր թէ պէտք չէր դրամը պարապ տեղը վատնել։ Յանկարծ պզտիկ աղքատ աղջիկ մը որ ձեռք չունէր, եւ որուն վիզին պարկ մը կախուած էր, եկաւ քովերնին կայնեցաւ, «Անօթի եմ» ըսաւ։ Պօղոս եւ Նոյեմի իրարու երես նայեցան։ Իրենք կուշտ էին։ Ա՛լ շաբաթ ուտելու ախորժակնին չմնաց։ Պօղոս կամաց մը իր արծաթ դրամը աղջկանը պարկին մէջ նետեց, եւ տուն վերադարձան երկուքն ալ զուարթ ու երջանիկ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

144. Գրել այս հատուածին ամէն մէկ բային ներքեւ որ ցծորդութեան վերաբերիլը։

145. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

146. Այս հատուածին բոլոր բայերը անորեւոյթի վերածել, և ամէն մէկը զատ զատ սիւնակներու մէջ գրել իր ցծորդութեան համեմատ։

ԴԱՍ

88. Քանի՞ *ցծորդութիւն* կայ։ — *Երեք ցծորդութիւն կայ. Ա. եղ վերջաւորող բայերը, ինչպէս. սիրել. Բ. իլ վերջաւորող բայերը, ինչպէս. խօսիլ. Գ. աղ վերջաւորող բայերը, ինչպէս. կարդալ։*

89. Ի՞նչ է *անորեւոյթը։ — Անորեւոյթը՝ եղ, իլ, աղ վերջաւորող բայերուն ձեւն է. բային անունն է։*

147. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Պօղոսին հայրը ինչ տուաւ իրեն Կապանդին օրը։ 2. — Ինչու տուաւ։ 3. — Քոյր եւ եղբայր ինչ կ'ընէին ճամբան քալած ատեններն։ 4. — Ի՞նչ շարուած էր ցուցափեղկերուն մէջ։ 5. — Նոյեմի ինչ կ'ընէր։ 6. — Պօղոս ինչ կը խորհէր։ 7. — Ի՞նչ պատահեցաւ այն միջոցին։ 8. — Աղքատ աղջիկը ինչ ըսաւ։ 9. — Պօղոս եւ Նոյեմի ինչ ըրին։ 10. — Իրենք ալ անօթի էին։ 11. — Պօղոս ինչ ըրաւ։ 12. — Ցետոյ ինչ ըրին։ 13. — Ինչու համար ուրախ եւ երջանիկ էին։

148. Յոքնակիի վերածել ԻԹ. ընթերցումը.

Օրինակ. — Արեւը ծագելուն պէս հովիւները իրենց հօտերը կ'առնեն դաշտերը կը տանին, եւայլն։

22. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՈՐԹԱՏՈՒՆԿԸ ԵՒ ԿՆՋՆԻՆ

Որթատունկը անպտղաբեր կը չորնար,
Խեչակ չունէր, որուն յենլով ելլէր վեր։
Կընձնին նեցուկ եղաւ անոր ու կ'ըսէր.
«Քանի որ ես պտուղ բերել չեմ կրնար,
Թիկունք ըլլամ գէթ այս տունկին բարեբեր։»

ՔԱԲԻԼ.

Ա. ԼԹՈՐԴՈՒԹԻՒՆ. — ՍԻՐԵԼ.

Սահմանական եղանակ

ՆԵՐԿԱՅ

Եզակի	Յոգնակի
Ես կը սիրեմ	*Մենք կը սիրենք*
Դուն կը սիրես	*Դուք կը սիրէք*
Ան կը սիրէ	*Անոնք կը սիրեն*

ԱՆՑԵԱԼ. ԱՆԿԱՏԱՐ

Եզակի	Յոգնակի
Ես կը սիրէի	*Մենք կը սիրէինք*
Դուն կը սիրէիր	*Դուք կը սիրէիք*
Ան կը սիրէր	*Անոնք կը սիրէին*

ԱՆՑԵԱԼ. ԿԱՏԱՐԵԱԼ.

Եզակի	Յոգնակի
Ես սիրեցի	*Մենք սիրեցինք*
Դուն սիրեցիր	*Դուք սիրեցիք*
Ան սիրեց	*Անոնք սիրեցին*

ԲԱՅԱՐՁԱԿ ԱՊԱՌՆԻ

Եզակի	Յոգնակի
Ես պիտի սիրեմ	*Մենք պիտի սիրենք*
Դուն պիտի սիրես	*Դուք պիտի սիրէք*
Ան պիտի սիրէ	*Անոնք պիտի սիրեն*

ԱՆԿԱՏԱՐ ԱՊԱՌՆԻ

Եզակի	Յոգնակի
Ես պիտի սիրէի	*Մենք պիտի սիրէինք*
Դուն պիտի սիրէիր	*Դուք պիտի սիրէիք*
Ան պիտի սիրէր	*Անոնք պիտի սիրէին*

Հրամայական եղանակ

Եզակի	Յոգնակի
— —	*Մենք սիրե՛նք*
Դուն սիրէ՛	*Դուք սիրեցէ՛ք*

Ստորադասական եղանակ

ՆԵՐԿԱՅ

Եզակի	Յոգնակի
Ես սիրեմ	*Մենք սիրենք*
Դուն սիրես	*Դուք սիրէք*
Ան սիրէ	*Անոնք սիրեն*

ԱՆԿԱՏԱՐ

Եզակի	Յոգնակի
Ես սիրէի	*Մենք սիրէինք*
Դուն սիրէիր	*Դուք սիրէիք*
Ան սիրէր	*Անոնք սիրէին*

Անորոշ եղանակ

ԱՆԵՐԵՒՈՅԹ

Սիրել

ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Սիրող

ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Սիրած, սիրեր

ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Սիրելու

Բ. ԼԹՈՐԴՈՒԹԻՒՆ. — ԽՕՍԻԼ.

Սահմանական եղանակ

ՆԵՐԿԱՅ

Եզակի		Յոգնակի	
Ես	կը խօսիմ	Մենք	կը խօսինք
Դուն	կը խօսիս	Դուք	կը խօսիք
Ան	կը խօսի	Անոնք	կը խօսին

ԱՆՑԵԱԼ, ԱՆԿԱՏԱՐ

Եզակի		Յոգնակի	
Ես	կը խօսէի	Մենք	կը խօսէինք
Դուն	կը խօսէիր	Դուք	կը խօսէիք
Ան	կը խօսէր	Անոնք	կը խօսէին

ԱՆՑԵԱԼ, ԿԱՏԱՐԵԱԼ

Եզակի		Յոգնակի	
Ես	խօսեցայ	Մենք	խօսեցանք
Դուն	խօսեցար	Դուք	խօսեցաք
Ան	խօսեցաւ	Անոնք	խօսեցան

ԲԱՑԱՐՁԱԿ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Յոգնակի	
Ես	պիտի խօսիմ	Մենք	պիտի խօսինք
Դուն	պիտի խօսիս	Դուք	պիտի խօսիք
Ան	պիտի խօսի	Անոնք	պիտի խօսին

ԱՆԿԱՏԱՐ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Յոգնակի	
Ես	պիտի խօսէի	Մենք	պիտի խօսէինք
Դուն	պիտի խօսէիր	Դուք	պիտի խօսէիք
Ան	պիտի խօսէր	Անոնք	պիտի խօսէին

Հրամայական եղանակ

Եզակի	Յոգնակի
——	*Մենք խոսին՛ք*
Դուն խոսէ՛	*Դուք խոսեցէ՛ք*

Ստորադասական եղանակ

ՆԵՐԿԱՅ

Եզակի	Յոգնակի
Ես խոսիմ	*Մենք խոսինք*
Դուն խոսիս	*Դուք խոսիք*
Ան խոսի	*Անոնք խոսին*

ԱՆԿԱՏԱՐ

Եզակի	Յոգնակի
Ես խոսէի	*Մենք խոսէինք*
Դուն խոսէիր	*Դուք խոսէիք*
Ան խոսէր	*Անոնք խոսէին*

Անորոշ եղանակ

ԱՆԵՐԵՒՈՅԹ

Խոսիլ

ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Խոսող

ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Խոսած, խոսեր

ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Խոսելու

Գ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ. — ԿԱՐԴԱԼ

Սահմանական եղանակ

ՆԵՐԿԱՅ

Եզակի		Յոգնակի	
Ես	կը կարդամ	Մենք	կը կարդանք
Դուն	կը կարդաս	Դուք	կը կարդաք
Ան	կը կարդայ	Անոնք	կը կարդան

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Եզակի		Յոգնակի	
Ես	կը կարդայի	Մենք	կը կարդայինք
Դուն	կը կարդայիր	Դուք	կը կարդայիք
Ան	կը կարդար	Անոնք	կը կարդային

ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ

Եզակի		Յոգնակի	
Ես	կարդացի	Մենք	կարդայինք
Դուն	կարդացիր	Դուք	կարդայիք
Ան	կարդաց	Անոնք	կարդացին

ԲԱՑԱՐՁԱԿ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Յոգնակի	
Ես	պիտի կարդամ	Մենք	պիտի կարդանք
Դուն	պիտի կարդաս	Դուք	պիտի կարդաք
Ան	պիտի կարդայ	Անոնք	պիտի կարդան

ԱՆԿԱՏԱՐ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Յոգնակի	
Ես	պիտի կարդայի	Մենք	պիտի կարդայինք
Դուն	պիտի կարդայիր	Դուք	պիտի կարդայիք
Ան	պիտի կարդար	Անոնք	պիտի կարդային

Հրամայական եղանակ

Եզակի	Յոգնակի
——	*Մենք կարդա՛նք*
Դուն կարդա՛	*Դուք կարդացէ՛ք*

Ստորադասական եղանակ

ՆԵՐԿԱՅ

Եզակի	Յոգնակի
Ես կարդամ	*Մենք կարդանք*
Դուն կարդաս	*Դուք կարդաք*
Ան կարդայ	*Անոնք կարդան*

ԱՆԿԱՏԱՐ

Եզակի	Յոգնակի
Ես կարդայի	*Մենք կարդայինք*
Դուն կարդայիր	*Դուք կարդայիք*
Ան կարդար	*Անոնք կարդային*

Անորոշ եղանակ

ԱՆԵՐԵՒՈՅԹ

Կարդալ

ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Կարդացող

ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Կարդացած, կարդացեր

ԲԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Կարդալու

ԲԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

—

ԼԴ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ԱԴԼՈՒՈՐ ԾՈՒՆԸ**

Հովիւ մը շուն մը ունէր ծեր եւ աղտոտ. մաղերը կարծր էին ու թափթփած. մորթին տակէն ոսկորները դուրս կը ցցուէին եւ զզուանք կուտային տեսնողին։ Սակայն իր տէրոջը հաւատարիմ էր, ու անոր հօտը կը պահպանէր։ Հովիւը ճանճրացաւ անկէ, եւ ուրիշ մը առաւ, փայլուն ու գանգուր վարսերով կըլորիկ շնիկ մը, որուն քծինքներովը կը զուարճանար մինչեւ իրիկուն։ Օր մը գայլը եկաւ հօտին վրայ յարձակեցաւ. աղուոր շունը ձգեց փախաւ, եւ խեղճ մարդուն բոլոր ոչխարները կորսուեցան։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

149. Խաչանիշով ցոյց տալ *ենթակաները* և ստորագծել *բայերը*։

150. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

151. Ցոքնակի վերածել այս հատուածը։

ԴԱՍ

90. Բայը ի՞նչպէս կը համաձայնի իր ենթակային հետ։ — *Բայը թիւով ու դէմքով կը համաձայնի իր ենթակային հետ։*

91. Բայը ե՞րբ յոքնակի կը դրուի։ — *Բայը յոքնակի կը դրուի երբ իր ենթական յոքնակի է և կամ երբ քանի մը եղակի ենթակայ ունի։*

152. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Հովիւը ինչ ունէր։ 2. — Շանը մազերը ինչպէս էին։ 3. — Ոչխարները ինչպէս էին։ 4. — Շունը ինչպէս էր։ 5. — Հովիւը ինչ ըրաւ։ 6. — Ո՞վ է կը զուարճանար բային ետեւեան։ 7. — Ի՞նչ կը նշանակէ թիթեմ բառը։ 8.— Օր մը ինչ պատահեցաւ։ 9.— Ինչու՞ եկաւ բայը եզակի գրուած է։ 10. — Ո՞վ է ձգեց փախաւ բայերուն ետեւեան։ 11. — Ոչխարները ինչ եղան։ 12. — Ինչու՞ կորուեցան բայը յոգնակի գրուած է։

153. Խոնարհել պահպանել, ցցուիլ, ծանծրանալ բայերը։

23. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՎԱՐԴՆ ՈՒ ՇԻՐԻՄԸ

Շիրիմն ըսաւ օր մը վարդին.
«Ըզքեզ Ծըրջող արցունքն այգուն
Սիրոյ ծաղիկ, ինչ կ՝ընես դուն։»
Վարդն ալ հարցուց գերեզմանին.
«Այն հոգիներն ինչ կ՝ընես դուն
Որ քեզ կու գան, անդադրունդ անհուն։»

Եւ վարդն ըսաւ. «Դամբան խաւար,
Այն արցունքներն ըստուերին խոր
Մեղրի բոյրեր կ՝ընեմ աղուոր։»
Շիրիմն ըսաւ. «Վարդ վըշտահար,
Ինծի եկած ամէն հոգի
Հրեշտակ կ՝ընեմ ես երկինքի։»

ՎԻՏՈՐ ՀԻՒԳՕ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ

ԼԵ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ՄՐՋԻՒՆԸ ԵՒ ԱՂԱՒՆԻՆ**

Մրջիւն մը ջուրը ինկեր էր։ Փիչ մնացեր էր որ խեղդուէր, երբ աղաւնի մը, որ հոն մօտը կը կենար, տեսաւ զայն ու մեղքցաւ։ Անմիջապէս կտուցովը խոտի չիւղ մը առաւ, եւ կամաց մը ջուրին վրայ դրաւ։ Մրջիւնը անոր վրայ ելաւ ու ազատեցաւ։ Աղաւնին ալ թռաւ գնաց ծառի մը վրայ թառեցաւ։ Որսորդ մը որ հոնկէ կ'անցնէր, զայն տեսաւ, հրացանը լեցուց եւ պատրաստուեցաւ զայն սպաննելու։ Բայց մրջիւնը անոր ոտքը խայթեց։ Որսորդը ետին դարձաւ։ Թռչունն ալ թռաւ ու ազատեցաւ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

154. Խաչանիշով ցոյց տալ *ենթակաները* և ստորագծել *բայերը*։
155. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։
156. Օրինակել այս հատուածը, *բայերը սահմանական ներկայի* վերածելով։

ԴԱՍ

92. Բային *թիւը, դէմքը, եղանակը, ժամանակը* ո՞ւրկէ կը հասկցուին։ — *Բային վերջաւորութիւնէն կը հասկցուին իրեն թիւը, դէմքը, եղանակը և ժամանակը։*

93. Բային վերջաւորութիւնները ե՞րբ կը տարբերին իրարմէ։ — *Բային վերջաւորութիւնները ամէն մէկ լծորդութեան մէջ կը տարբերին իրարմէ։*

94. Սահմանական ներկային վերջաւորութիւնները որո՞նք են։ — *Սահմանական ներկային վերջաւորութիւնները հետեւեալներն են.*

Ա. Լծորդութեան մէջ. *եմ, ես, է, ենք, էք, են։*
Բ. „ „ *իմ, իս, ի, ինք, իք, ին։*
Գ. „ „ *ամ, աս, այ, անք, աք, ան։*

157. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1.— Ի՞նչ պատահեր էր մրջիւնին։ 2. — Մրջիւնը ինչ տեսակ կենդանի է։ 3. — Ի՞նչ է ճճին։ 4. — Գրեցէք ձեր գիտցած ճճիներուն անունները։ 5. — Ո՞վ տեսաւ մրջիւնը։ 6. — Ի՞նչ ըրաւ աղաւնին։ 7. — Ի՞նչ է աղաւնոցը։ 8. — Հաւերը հոր կը բնակին։ 9.— Մրջիւնը ինչպէս ազատեցաւ։ 10. — Ո՞ւր թառեցաւ աղաւնին։ 11. — Ո՞վ տեսաւ զայն։ 12. — Որսորդը ինչ ըրաւ։ 13. — Ո՞վ ազատեց աղաւնին։ 14. — Ի՞նչ է երախտագիտութիւնը։ 15. — Ի՞նչ է այս առակին բարոյականը։ 16. — Պէտք է օգնել իրարու։

158. Խոնարհել հետեւեալ բայերը՝ բերանացի և գրաւոր.

Թառիլ, խայթել, ազատիլ, սպաննել, պատրաստուիլ։

24. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ

Երկու թռչիւր հանդիպեցան իրարու.
Թաղում մըն է, սեւ դագաղ մը խեղճ տըղու.
Սեւեր հագած մայրը կ'երթայ ետեւէն,
Տըրտում տըխուր՝ աչքերն անդուլ կ'արտասուեն։

Մանկիկ մըն է միւսն ալ՝ չըքնաղ նորածին.
Բեհեզներու մէջ զայն կընքել կը տանին.
Թըռչունի պէս ճըռւողելով կ'ուտէ կաթ
Իր զըւարթ մօր թեւերուն մէջ խանդակաթ։

Երբ կ'աւարտին թաղման հանդէսն ու կընքումը,
Խաչելութեան պատկերին տակ սըրբաշուք,
Երկու մայրերն հանդիպելով՝ ծընրադիր՝
Իրարու սիրտ կը հասկընան անձկալիր։

Եւ, աղօթքի ազդեցութեամբ հրաշալի,
Զուարթ մայրն ալ յանկարծ կու լայ, կ'այլայլի
Դագաղին մօտ, զոր գերեզման կը տանին.
Իսկ լացող մայրն հոն կը ժըպտի նորածնին։

ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

ԼԶ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ԹՈՒՉՈՒՆՆԵՐՈՒՆ ՌՈՃՆԵՐԸ**

Ամառ օր մը անտառին մէջ կը պտտէի։ Օդը տաք էր։ Ծառի մը տակ նստեցայ, ու կը դիտէի անոր ճիւղերէն կախուած բոյները, որոնց մէջ փոքրիկ թռչունները կը ճլուլլային։ Յանկարծ ծառերուն ետեւէն մէկ քանի տղաք երեւան ելան։ Անոնք ալ սկսան բոյները դիտել. յետոյ մագլցելով ծառը ելան։ Այն ատեն տասկալ տեսարանի մը ներկայ դտնուեցայ։ Այդ տղոյ մէկը բոյները կը քակէր, ուրիշ մը ճտերը դուրս կը քաշէր, միւսը հաւկիթները վար կը նետէր։ Թռչունները միտճայն կ'աղաղակէին, կը ճուայլին. բայց անոնք մտիկ չէին ըներ։ Իսկ ես կը մտածէի խեղճ բացակայ թռչուններուն վրայ, որոնք իրենց դարձին ոչ բոյն պիտի դտնէին ոչ ճտերնին։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

159. Օրինակել այս հատուածը, և ստորագծել բայերուն անկատարները։
160. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։
161. Այս հատուածին անկատար բայերը կատարեալի վերածել։
162. Հետեւեալ բայերը անկատար ընել.

Մն քալել։ — Ես քաշել։ — Դուն աղաղակել։ — Մենք խնդալ։ — Դուք պարել։ — Անոնք սորվիլ։ — Ես յուզուիլ։ — Դուն երգել։

Դ Ա Ս

95. *Անցեալ անկատարին վերջաւորութիւնները որո՞նք են։ — Անցեալ անկատարին վերջաւորութիւնները հետեւեալներն են.*

Ա. Լծորդ. մէջ. էի, էիր, էր, էինք, էիք, էին։
Բ. „ „ էի, էիր, էր, էինք, էիք, էին։
Գ. „ „ այի, այիր, ար, այինք, այիք, ային։

96. *Սահմանական ներկան ե՞նչ մասնիկ կ'առնեն։ — Սահմանական ներկան և անկատարը իրենց սկիզբը կը մասնիկը կ'առնեն։*

163. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ամառ օր մը ինչ կ'ընէիր։ 2. — Ի՞նչ կը դիտէիր։ 3. — Բոյնը ով կը շինէ։ 4. — Ինչով կը շինէ։ 5. — Տղաքը ինչ ըրին։ 6. — Ի՞նչ կը նշանակէ մագլցիլ։ 7. — Ինչու ծառը ելան։ 8. — Թռչունները ինչ կ'ընէին։ 9. — Դուն ինչ կը մտածէիր։ 10. — Ի՞նչ է անգթութիւնը։

164. Ցարմար բայեր դնել հետեւեալ ենթականերուն քով.

Թռչունը եւ աքաղաղը . . . ։ Սագը եւ բադը . . . ։ Ձին եւ ոչխարը . . . ։ Հաւը . . . ։ Տունը . . . ։ Կրակը . . . ։ Հովը . . . ։ Տղաքը . . . ։

165. Գ. դէմքի վերածել հետեւեալ բայերը.

Գրեցինք։ — Խօսեցար։ — Խաղացի։ — Մաշեցայ։ — Մարեցար։ Տաքցանք։ — Գրեցինք։ — Բուժեցի։ — Լուացիր։ — Մսեցաք։ — Պիտի մեռնիմ։ — Կը սխալէիր։ — Կը պօռաս։ — Կը սողաս։

25. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԲՈՑՆԸ

Ի՞նչ կ'ընէիք, անգութ տղաք,
Կը քանդէիք բոյնն այն սիրուն.
Արդեօք բընաւ մայր չունեցա՞ք
Որ կը մոռնաք զայն այս պահուն։

Շիկահաւի բոյն մ'է զբաւթ.
Կակուղ օրրան, տընական քընքուշ,
Ուր հէք մայրիկն այն անհանդարտ
Ձետեղած է իր բեռն անուշ։

Զբքնաղ արդիւնք գորովանքի.
Դիտէք ինչպէս են զայն հիւսեր,
Որչափ Թռչունն այն փանաքի
Վատներ է օր, հընարք ու սէր։

Օրրաններուն էն սըխրալին
Քակել կ'ուզէք, անգութ տղաք,
Դիտէք, ձեզ պէս մայրիկ մ'ունին
Թռչուններն ալ, զոր կը գողնաք։

ԼՈՒԻ ԹՈՒՌՆԻԷ

ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ

ԼԷ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ԱՐԹՈՒՆ ԱՂՋԻԿԸ**

Արուս պատուհանին առջեւ նստած կար կը կարէր։ Տանը կատուն ալ քովը երկնցեր պառկեր էր իր ճագին հետ։ Ցանկարծ ճնճղուկ մը ներս մտաւ, ու սարսափած սկսաւ ասդին անդին թռչտիլ։ Վերջապէս յոգնած գետինը ինկաւ։ Կատուն խսկոյն ճնճղուկին վրայ ցատկեց։ Արուս մտածեց որ վտանգաւոր էր կատուին ճանկէն թռչունը բռնի առնել։ Ուստի գնաց անոր ճագը առաւ ու պատուհանէն վար նետելու ձեւ մը ըրաւ։ Կատուն թռչունը թողուց, եւ իր փիսիկին քով վազեց։ Այն ատեն Արուս ճնճղուկը առաւ ու պատուհանէն դուրս թռցուց։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

166. Օրինակել այս հատուածը և ստորագծել բայերուն կատարեալները։
167. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։
168. Խոնարհել կարել, նստիլ, երկնցնալ բայերը։
169. Հետեւեալ բայերը եզակի ընել.

Կար կարեցին։ — Պիտի պառկինք։ — Կը ցատկէինք։ — Մտածեցիք։ — Վազեցիք։ — Պիտի ընենք։ — Պիտի կոտրենք։ — Կը թռցնէին։

ԴԱՍ

97. Անցեալ կատարեալին վերջաւորութիւնները որո՞նք են. — Անցեալ կատարեալին վերջաւորութիւնները հետեւեալներն են.

Ա. Լծորդ. մէջ. *եցի, եցիր, եց, եցինք, եցիք, եցին։*
Բ. „ „ *եցայ, եցար, եցաւ, եցանք, եցաք, եցան։*
Գ. „ „ *ացի, ացիր, աց, ացինք, ացիք, ացին։*

170. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Արուս ինչ կ'ընէր։ 2. — Կատուն ուր էր։ 3. — Ի՞նչ պատահեցաւ։ 4. — Ցետոյ ճնճղուկը ինչ ըրաւ։ 5. — Ի՞նչ է ճնճղուկը։ 6. — Ի՞նչ կը նշանակէ սարսափած։ 7. — Կատուն ինչ ըրաւ։ 8. — Արուս ինչ մտածեց։ 9. — Ի՞նչ ըրաւ։ 10. — Ինչու համար այդպէս ըրաւ։ 11. — Կատուն ինչ ըրաւ։ 12. — Ճնճղուկը ինչ ըրաւ։ 13. — Ո՞վ ազատեց ճնճղուկը։

171. Տարբեր կերպով մը պատմեցէք ու գրեցէք այս ընթերցումը։

172. Խոնարհել սարսափիլ բայը։

26. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՁԻՆ ԵՒ ՑՈՒԼԸ

Առոյգ ձի մը մանուկ մ'առած իր վրան
Դաշտի մը մէջ ապրին անդին կու գար ման.
Մերթ կը վազէր, կը վազվըզէր ոստոստուն,
Եւ մերթ հազիւ կը դըպչէր թարմ խոտերուն։
«Ի՜նչ, մըռընչեց ցուլն անդիէն զայրացած,
Ըզքեզ վարել՝ պըզտիկ տըղուն այդ մընաց։
Շուտ պատժէ զայն, եւ վըրայէդ նետէ վար,
Երթայ սորվի որ ձիուն հետ չեն խաղար։»
—«Ի՜նչ յաղթանակ, ինչ փառք եւ ինչ մեծ պատիւ,
Ըսաւ ինոր ծիծաղելով ձին ազնիւ.
Ամօթ չէ ինձ, եւ չեն խընդար իմ վըրաս
Երբ վար նետեմ սա խեղճ մանուկն անվընաս։»

ԼԸ ՊԱՅԵՒ

ԲԱՑԱՐՁԱԿ ԱՊԱՌՆԻ ԵՒ ԱՆԿԱՏԱՐ ԱՊԱՌՆԻ

ԼԸ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԵՐՐՈՐ ՄԵԾՆԱՄ

Քանի մը տարիէն ես պիտի մեծնամ։ Դպրոցական շրջանս պիտի աւարտեմ, ու դպրոցէն պիտի ելլեմ։ Այն ատեն պիտի սկսիմ առնը գործերուն աշխատիլ, եւ մօրս պիտի օգնեմ իր բոլոր աշխատութեանց մէջ։ Սեղանը ես պիտի յարդարեմ։ Վեր վար պիտի աւլեմ, անկողինները ես պիտի շտկեմ։ Կարասիներուն փոշիները պիտի մաքրեմ։ Երբ լուացք ընենք, ճերմակեղէնները ես պիտի փռեմ, պիտի ժողվեմ, պիտի ծալլեմ ու պիտի արդկեմ։ Վերջապէս ամէն ջանք պիտի ընեմ որ տուներնիս մաքուր ու կանոնաւոր ըլլայ, եւ մայրս չյոգնի։ Որովհետեւ մայրս շատ կը սիրեմ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

173. Օրինակել և ստորագծել *ապառնիները*։

174. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

175. *Բացարձակ ապառնի* Բ. դէմքի վերածել բոլոր *բայերը*։

Օրինակ. — *Քանի մը տարիէն դուն պիտի մեծնաս, եւ ն։*

176. *Անկատար ապառնի* Դ. դէմքի վերածել բոլոր *բայերը*։

Օրինակ. — *Քանի մը տարիէն ան պիտի մեծնար, եւ ն։*

Դ Ա Ս

98. *Բացարձակ ապառնին* ի՞նչպէս կը շինուի։ — *Բացարձակ ապառնին կը շինուի սահմանական ներկային կը մասնիկին տեղ պիտի դնելով, ինչպէս. կը սիրեմ, պիտի սիրեմ։*

99. *Անկատար ապառնին* ի՞նչպէս կը շինուի։ — *Անկատար ապառնին կը շինուի սահմանական անկատարին տեղ պիտի դնելով, ինչպէս. կը սիրէի, պիտի սիրէի։*

177. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Երբոր մեծնաս ինչ պիտի ընես։ 2. — Ի՞նչ աշխատութիւններ կան տան մէջ։ 3. — Ճերմակեղէնները ինչ խնամքի պէտք ունին լուացքէն ետքը։ 4. — Ինչո՞ւ կ՚արդկեն ճերմակեղէնները։ 5. — Ո՞ր ճերմակեղէնները օսլայով կ՚արդկեն։ 6. — Օսլան ինչ բանի կը ծառայէ։ 7. — Օսլան ինչէ՞ կը շինուի։ 8. — Ինչո՞ւ պիտի ուզես մասնակցիլ այդ աշխատութեանց։

27. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾԱՂԻԿՆ ՈՒ ԹԻԹԵՌՆԻԿԸ

Ծաղիկն ըսաւ Թիթեռնիկին օդաւուլ.
—Մի վախչիր.
Տարբեր կ՚ապրինք. կեցած եմ ես, դուն անդուլ
Կու գաս հիւ։
Բայց կը սիրենք զիրար, կ՚ապրինք մարդէն զատ
Եւ հեռու,
Կ՚ըսեն՝ ծաղիկ ենք երկուքս ալ նրման շատ
Իրարու։
Ծաղիկներուն մէջ կը վազես, կը յածիս
Միշտ արագ,
Ես հոս մինակ կը դիտեմ դարձն ըստուերիս
Ոտքիս տակ։
Կ՚երթաս, կու գաս, նորէն կ՚երթաս փայլիլ դուն
Տեղեր նոր,
Եւ արցունքի մէջ կը զբաղնես զիս առտուն
Ամէն օր։
Մեր սէրն ըլլայ միշտ անվերջորդով եւ անհեռ
Թէ կ՚ուզես,
Արմատ մառ դուն, կամ դէթ ինծի տուր թեւեր
Քեզի պէս։

ՎԻՔԹՈՐ ՀԻՒԿՕ

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

—

ԼԹ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ՄԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԻՆ ԽՐԱՏՆԵՐԸ**

Երէկ դպրոցին մէջ մեր դասախօսակը ըսաւ մեզի. «Ժամանակը մեծ դրամագլուխ մըն է, որմէ ամէնքիդ ալ ունիք. անոր յարգը գիտցէ՛ք. եւ պարապ տեղը մի՛ վատնէք զայն։ Մարդ կրնայ իր դրամը անտուկին մէջ պահել որ չկորսուի. բայց ժամանակը ճեռքերնիս չէ, կ՚անցնի, կ՚երթայ, եւ անցնելէն ետքը ա՛լ ետ չի դառնար։ Ուստի ջանացէ՛ք որ օգուտ քաղէք անկէ։ Աշխատեցէ՛ք որ վայրկեան մը պարապ տեղը չկորսուի, եւ երբեք չպիտի զղջաք։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

178. Ստորագծել այս հատուածին հրամայականները։

179. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

180. Խոնարհել պահել բայը։

ԴԱՍ

100. Որո՞նք են *հրամայականին* վերջաւորութիւնները։ — *Հրամայականին* վերջաւորութիւնները են.

Ա. Լծորդութեան մէջ. *է, եցէ՛ք, է՛նք։*
Բ. „ „ *է՝, եցէ՛ք, ի՛նք։*
Գ. „ „ *ա՛, ացէ՛ք, ա՛նք։*

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

—

ԼԹ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՄԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԻՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Երէկ դպրոցին մէջ մեր դաստխաքակը ըսաւ մեզի. «Ժամանակը մեծ դրամագլուխ մըն է, որմէ ամէնքիդ ալ ունիք. անոր յարգը գիտցէ՛ք. եւ պարապ տեղը մի՛ վատնէք զայն։ Մարդ կրնայ իր դրամը սնտուկին մէջ պահել որ չկորսուի. բայց ժամանակը ձեռքերնիս չէ, կ՚անցնի, կ՚երթայ, եւ անցնելէն ետքը ա՛լ ետ չի դառնար։ Ուստի ջանացէ՛ք որ օգուտ քաղէք անկէ։ Աշխատեցէ՛ք որ վայրկեան մը պարապ տեղը չկորսուի, եւ երբեք չպիտի զղջաք։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

178. Ստորագծել այս հատուածին հրամայականները։

179. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

180. Խոնարհել պահել բայը։

ԴԱՍ

100. Որո՞նք են հրամայականին վերջաւորութիւնները։ — Հրամայականին վերջաւորութիւնները են.

Ա. Լծորդութեան մէջ. է՛, եցէ՛ք, է՛նք։
Բ. „ „ է՛, եցէ՛ք, ի՛նք։
Գ. „ „ ա՛, ացէ՛ք, ա՛նք։

181. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչ է դրամագլուխը։ 2. — Ի՞նչ ըսել է վաստնել։ 3.—Ի՞նչ կը նշանակէ յարգը գիտնալ։ 4. — Վաստնող անձին ինչ անուն կու տան։ 5. — Խնայողութիւն ընողին։ 6. — Ի՞նչ ըսել է օգուտ խաղել։ 7. — Օգուտ բաւին ածականը ինչ է։ 8. — Կորուստի բային գոյականը ինչ է։

182. Խոնարհել վաստնել, կորուստի բայերը։

28. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄԱՆԿԻԿԻՆ ԳՈՒՆԸ

Նիրհէ, մանկիկս իմ սիրուն,
Անուշ քունով նիրհէ դուն։
Օրրանիդ քով եկան հիւր
Արեւն, արծիւն ու զեփիւռ,
Թոռած ծովերն, ամպն ու սար,
Համբոյր բերել քեզ հազար։

Բացաւ արծիւն իր թեւեր
Գըլխուդ վերեւ ոսկեհեր,
Շըրթունքներուդ վըրայ նուռ
Սըրսկեց արփին վարդ եւ հուր,
Ու փայփայեց քամին զով
Այտերդ իր նուրբ բեհեզով։

Նիրհէ, մանկիկս իմ սիրուն,
Անուշ քունով նիրհէ դուն։
Բոյնը դարձաւ զոռ արծուին.
Մարը մըտաւ լոյս արփին.
Թըռաւ գընաց իր մօր քով
Զեփիւռն անհուն նազանքով։

Սիւգին դարձին անձկալիր
Մայրիկն հարցուց. «Ո՞ւր էիր,
Դեւերու հետ կըռուեցար,
Յուզեցիր ծով ու մացառ։»
Իսկ համբոյրով մը ջերմին
Պատասխանեց խօլ քամին.

«Ես ծառ ու ծով չեմ յուզեր,
Դեւ հալածել չեմ ուզեր.
Մանկիկին քով ամէն օր
Ըսի երգեր ու օրօր.
Նիրհէ մանկիկս իմ սիրուն,
Անուշ քունով նիրհէ դուն։»

ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ԵՒ ԱՆԿԱՏԱՐ

Խ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ԱՋ ՁԵՌՔԸ ԵՒ ՁԱԽ ՁԵՌՔԸ**

*Օր մը աջ ձեռքը ձախին ըսաւ. «Դուն աւելորդ բեռ մըն ես մարդուն համար. աւելի ապէկ էր որ բնաւ գոյութիւն չունենայիր. ամէն բանի մէջ ես եմ իրեն ծառայողը։ Եթէ աշխատիլ ուզէ, ես եմ որ կը գրեմ, կը կարեմ, կը յանեմ, կը հնձեմ. եթէ անօթենայ, ես եմ որ վինքը կը կշտացնեմ. եթէ վտանգի մը հանդիպի, ես եմ որ վինքը կը պաշտպանեմ։ Իսկ դուն ի՞նչ կ'ընես»։ — «Ցանցանքը խմն չէ, պատասխանեց ձախ ձեռքը, քեզի չափ գործունեայ չըլլալուս. եթէ մարդիկ քեզի պէս վիս ալ գործածէին, թերեւս ես ալ քու ըրածներդ ընէի։ Սակայն պէտք չէ ուրանաս որ դուն շատ դժուարութիւն պիտի կրէիր առանձին, եթէ ես չըլլայի. որովհետեւ ամէն բանի մէջ ինծի կարօտ ես։ Ուստի անիրաւ մի՛ ըլար ինծի դէմ»։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

183. Օրինակել այս հատուածը և ցոյց տալ *ստորադասական* *ներկա*ները մեկ գծով իսկ *անկատար*ները երկու գծով։

184. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

101. *Ստորադասականը ի՞նչպէս կը շինուի։ Ստորադասականին թէ՛ ներկան թէ՛ անկատարը սահմանականին ներկայէն և անկատարէն կը շինուին անոնց առջեւի կը մասնիկը ջնջելով, ինչպէս։* **Կը գրեմ, գրեմ. կը գրէի, գրէի։**

185. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Աջ ձեռքը ինչ ըսաւ ձախին։ 2. — Աջ ձեռքով ինչ գործեր կրնանք կատարել։ 3. — Ձախ ձեռքը ինչ պատասխանեց։ 4. — Ո՞րը իրաւունք ունէր։ 5. — Ի՞նչ է այս պատմութեան բարոյականը։

186. Խոնարհել, բերանացի և գրաւոր, այս ընթերցումին մէջ գտնուած *ստորադասականներուն* թէ *ներկաները* և թէ *անկատարները*։

187. *Ստորադասական ներկայի*, յետոյ *անկատարի* վերածել հետեւեալ բայերը.

Կը հազամ։ — Կը ջանամ։ — Կը պտտիմ։ — Կը խմեմ։ — Կը հառաչեմ։ — Կը մերժեմ։ — Կը խօսիմ։ — Կը հեւայ։ — Կը ծիծաղի։ — Կը մանէ։ — Կը մեկնինք։ — Կը պարապինք։ — Կը դառնանք։ — Կը քաշեն։ — Կը ներէք։ — Կը շրջին։ — Կը խոստանաք։ — Կը լռեն։

29. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՕՁՆ ՈՒ ՓՈՍՈՒՌԱՆ

Փոսուռայ մը կար Ծափառ
Կընձնիներուն տակ դալար։
Մօտեցաւ օձ մ'անոր խեռ
Եւ զայն խոցեց կարեվեր։
«Ի՞նչ ըրի, օձ նենգաւոր։»
— «Կը փայլէիր լուսաւոր։»

Լ.ԱՅԷ

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ ԿԱՄ ԴԵՐԲԱՅ

—

ԽԱ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ԴՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՑՈՒՆ**

«Կ'ուզէի շատ հարուստ ըլլալ, շատ եկամուտներ ունենալ, որպէս զի կարենայի աղքատներուն օգնել, հիւանդանոցներ հաստատել, դպրոցներ կառուցանել, մատենադարաններ հիմնել։ Մե՛ղք որ ունեցածս չի բաւեր այս փափաքներս գործադրելու», կ'ըսէր հարուստ մարդ մը, որ ընտանիք չունէր։ — «Եթէ այդ ամէնուն չի բաւեր, անշուշտ մէկ հատին կը բաւէ. նախ այդ մէկը ըրէ՛», պատասխանեց բարեկամ մը։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

188. Օրինակել այս հատուածը, ստորագծել *անհրեւոյթ*ները, և *ն*, *ան*, *ապ* գիրերով նշանակել *ներկայ*, *անցեալ* և *ապառնի* ընդունելութիւնները։

189. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

102. *Անհրեւոյթը ինչէ՞ն կը շինուի։ — Անհրեւոյթը կը շինուի սահմանական ներկայի առաջին դէմքէն, առջեւի կրն վերցնելով ու վերջի մ դիրը ղ ի փոխելով, ինչպէս. կը իսամ, իսամ։*

103. *Որո՞նք են ներկայ, անցեալ, ապառնի ընդունելութիւններուն վերջաւորութիւնները։ — Ներկայ ընդունելութեան վերջաւորութիւնն է՝ ող, անցեալին՝ ած, եր, ապառնիին՝ ելու կամ ալու։*

104. *Անհրեւոյթը եւ ընդունելութեան երեք ժամանակները ի՞նչ կը կոչուին։ — Անհրեւոյթը և ընդունելութեան երեք ժամանակները անորոշ եղանակ կամ դերբայ կը կոչուին։*

BELEDİYE

190. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչ կ'ըսէր հարուստ մարդը որ ընտանիք չունէր։ 2. — Ինչու կուզէր շատ հարուստ ըլլալ։ 3. — Փափաք բառին բայը ինչպէս կ'ըլլայ։ 4. — Կը բաւէ բային անորեւոյթը ինչպէս կ'ըլլայ։ 5. — Ինչու հարուստ մարդը չէր կրնար իր փափաքները գործադրել։ 6. — Ի՞նչ պատասխանեց իր բարեկամներէն մէկը։ 7. — Ի՞նչ է այս պատասխանին բարոյականը։

191. Խոնարհել գործադրել բայը։

192. Հետեւեալ բառերուն ամէն մէկովը զատ զատ նախադասութիւններ շինել.

Բարեկամ, բարեկամութիւն, բարեկամանալ, բարեկամական, բարեկամաբար։

193. Լուծել վերոյիշեալ բառերը։

30. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾՆՈՒՆԴԻՆ ՎԱՐԴԵՐԸ

Մէգին մէջէն դեկտեմբերին
Տըրտում վարդեր ալ կը փըթթին,
Նըման աչքին արցունքով լի,
Զոր չի վառեր իղձ մը կեանքի։

Արեւն անոնց բուրում չի տար
Ոչ ալ գոյներ ոսկենըկար.
Բայց սիրտերուն գէթ վըշտաբեկ
Դալուկնին ցաւ չ'ազդեր երբեք։

Եւ քանի որ մատղաշ գարուն
Նորաբողբոջ հոգիներուն
Կը սահմանէ գեղն իր փայլուն,

Տառապողին համար, ով տէր,
Թող որ փըթթին միշտ այդ վարդեր,
Այդ ծընունդի տըժգոյն վարդեր։

ԱՌՆՕԼՏ

ԳՏՆԵԼ, ՄՏՆԵԼ, ԵԼԼԵԼ, ԻՋՆԵԼ, ՀԵԾՆԵԼ ԲԱՅԵՐԸ

ԽԲ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԲԱԳԵՂԸ

Պարտէզի մը մէջ բաղեղ մը կար, որ չկրնալով միանակ կենալ, իր մտեղը գտնուած ցիցի մը փաթթուեցաւ։ Իրենցմէ հեռու՝ դաշտին մէջ՝ եղեւին մըն ալ կար. բաղեղը զայն ցիցին ցոյց տալով ըսաւ. «Սա ծառը ի՞նչ տգեղ կ'երևայ քու քովդ. ի՞նչ ծուռումուռ հասակ, ի՞նչ անհաճոյ գոյն ունի։ Դուն ի՞նչ աղուոր ես, հասակդ ինչպէ՞ս շիտակ ու ճապուկ է։» Քանի մը օրէն պարտիզպանը պարտէզ իջաւ, ցիցը անկէ առաւ տարաւ, եւ եղեւինը գտաւ բերաւ անոր տեղը տնկեց։ Բաղեղը մինակ մնալով՝ այս անգամ ալ ելաւ եղեւինին քով գնաց անոր փաթթուեցաւ, ու ցիցին տուած գովեստները սկսաւ այս անգամ ալ անոր տալ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

194. Օրինակել այս հատուածը և ստորագծել նեղ վերջացող բայերը։

195. Խոնարհել՝ բերանացի և գրաւոր՝ իջնել, գտնել, եղեղ (եղնեղ) բայերը։

ԴԱՍ

105. Գտնել բայը ո՞ր լծորդութեան պէս կը խոնարհուի եւ ի՞նչպէս կ'ըլլան կատարեալն ու հրամայականը։ — Գտնել բայը Ա. Լծորդութեան՝ սիրելին պէս կը խոնարհուի, և կատարեալը կ'ըլլայ. գտայ, գտար, գտաւ, գտանք, գտաք, գտան։ Իսկ հրամայականը կ'ըլլայ. գտի՛ր, գտնե՛նք, գտե՛ք։

106. Ո՞ր բայերը գտնելին պէս կը խոնարհուին։ — Գտնելին պէս կը խոնարհուին մնել՝ եղեղ, իջնել, հեծնել։

196. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Բաղեղը ինչ ըրաւ։ 2. — Բաղեղը ինչու չէր կրնար կանգուն կենալ։ 3. — Բաղեղը ինչ ըսաւ ցիցին։ 4. — Ի՞նչ է ցիցը։ 5. — Ի՞նչ կը նշանակէ ճապուկ բառը։ 6. — Փաթրուեցաւ ինչ ժամանակ է։ 7.— Ի՞նչ է փաթրուեցաւին աներեւոյթը։ 8. — Պարտիզպանը ինչ ըրաւ։ 9. Ի՞նչ է եղեւինը։ 10. — Բաղեղը ինչ ըրաւ եղեւինին։ 11. — Ի՞նչ ըսաւ անոր։ 12. — Ի՞նչ է շողոմոռդուբիւնը։ 13. — Ի՞նչպէս կ'ըլլայ շողոմոռդուբիւն բառին ածականը։ 14. — Ի՞նչպէս կ'ըլլայ բայը։

197. Գտնել հետեւեալ գոյականներուն բայերը.

Մշակ։ — Պատասխան։ — Ծիծաղ։ — Համբերութիւն։ — Ցուզում։ — Լուութիւն։ — Օրինակ։ — Քայլ։ — Կար։ — Անձրեւ։ — Տաքութիւն։ — Տէր։ — Ծառայ։ — Սուտ։ — Խաչ։ — Նաւ։ — Սուր։

31. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԱՆԾԵՂՆ ՈՒ ԽԱՑԻՑԸ

Օր մը ըսաւ շատզբրուց
Անծեղն անուշ խայտիտին.
«Սորվեցո՛ւր երգ մ'ինձ բերնուց
«Դարնան երգէդ, զոր լսողներ կը զմայլին։»
—«Կատակ չ'ուզեր, սիրելիս,
Քու տեսակէդ անձեր բան մը չեն սորվիր։»
—«Պատճառն ըսել կը հաճիս։»
—«Ով որ կ'ուզէ բան մը սորվիլ, այնպիսին
Պէտք է ըլլայ ունկընդիր.
Եւ շաղփաղփն ալ մըտիկ չ'ըներ ուրիշին։»

ՏԻԿԻՆ ՏԸ ԼԱ ՖԷՌԱՆՏԻԷՌ

ԱՌՆԵԼ, ԽԱԾՆԵԼ, ԹՓՆԵԼ, ՊԱԳՆԵԼ ԲԱՅԵՐԸ

ԽԳ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **Ա.ԶՆԻՒ ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ**

Ծերունի մը փոքրիկ թոռանը հետ դուռնէ դուռ կը մուրար։ Խեղճին աչքերը չէին տեսներ, եւ դժբաղդ տղան դիմացը ելլողին կ'աղաչէր, կը պաղատէր որ բան մը տայ իրեն կոյր ծերունին կերակրելու համար։ Որ մը մինչեւ իրիկուն պատեր էին, եւ կտոր մը չոր հաց միայն կրցեր էին ձեռք անցընել։ Օդը ցուրտ էր, եւ ձիւնը իրենց ձեռքերն ու երեսները կը խածնէր։ Ծերունին շատ անօթեցեր էր. «Տղա՛ս, քիչ մը բան ուտե՛նք,» ըսաւ։ Թոռը հանեց հացին կտորը անոր տուաւ։ Մեծ հայրը, առնելով հացը, հարցուց. «Դուն ալ ունի՞ս։» — «Ունիմ, մեծ հայր» պատասխանեց տղան, եւ դլուխը անոր ծունկին վրայ դնելով անօթի քնացաւ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

198. Օրինակել այս հատուածը, և ստորագծել *նել* վերջաւորող բայերը։

199. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

200. Խոնարհել *խածնել*, *պագնել*, *թփնել* բայերը։

ԴԱՍ

107. Ո՞ր լծորդութեան պէս կը խոնարհուի *առնել* բայը, եւ ի՞նչպէս կ'ըլլայ *կատարեալն* ու *հրամայականը*։ — *Առնել* բայը Ա. Լծորդութեան պէս կը խոնարհուի, և *կատարեալը* կ'ըլլայ. *առի*, *առիր*, *առաւ*, *առինք*, *առիք*, *առին*։ Հրամայականը կ'ըլլայ. *ա՛ռ*, *առնե՛նք*, *առէ՛ք*։

108. Ո՞ր բայերը այսպէս կը խոնարհուին։ — Այսպէս կը խոնարհուին *խածնել*, *թփնել*, *պագնել*։

201. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ծերունին ինչ կ'ընէր Թոռանը հետ։ 2.— Ինչու չէին աշխատեր անոնք փոխանակ մուրալու։ 3. — Աչքը չտեսնողին ինչ կ'ըսեն։ 4. — Ականջը չլսողին։ 5. — Զխօսողին։ 6. — Փոքրիկ տղան ինչ կ'ընէր դիմացը եկողին։ 7. — Ինչու համար։ 8.— Օր մը ինչ պատահեցաւ։ 9.— Ի՞նչ կը նշանակէ ձիւնը երեւնիլ կը խածնէր։ 10. — Ծերունին ինչ ըսաւ։ 11.— Տղան ինչ պատասխանեց։ 12.— Ինչու սուտ խօսեցաւ։ 13. — Ի՞նչպէս ուրախութիւն էր այդ։ 14. — Սուտ խօսողին ինչ կ'ըսեն։ 15. — Զարիք գործողին։ 16. — Բարիք գործողին։ 17. — Այդ տղուն ըրածը բարիք էր Թէ չարիք։

32. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ԾՈՎԸ

Անհուն ծովուն մէջ շիթ առ շիթ
Կը կաթէր ջուր մ'ականակիտ,
Երբ շառաչեց ծովն ալեսաստ
Ահեղագոչ. «Ի՞նչ կ'ընես աստ.
Ես ամպրոպն եմ, շանթն ու մրրիկ,
Անսահման եմ, ինչպէս երկինք.
Պէտք ունիմ քեզ, խեղճ աղբերակ,
Մինչ փոքր ես դուն, ես՝ անյատակ։»
Եւ աղբիւրն ալ ըսաւ ծովուն.
«Ես անշուք եմ, դուն ամեհի.
Բայց կը բերեմ քեզ, ծով անհուն,
Կաթիլ մը ջուր, որ կը խրմուի։»

ՎԻՔԹՕՌ ՀԻՒԿՕ

ՆԻԼ, ԵՒ ՉԻԼ, ՎԵՐՋԱՑՈՂ ԲԱՅԵՐԸ

ԽՈՐ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՈՉՆԻՆ

Ոչնի մը անտառին մէջ մինակ կը ճանճրանար։ Այնքան փչոտ էր ոչ տատասկէ գնդակի մը կը նմանէր, եւ ամէնքը վանելով կը մի՛ աչքէին քովէն։ «Բարեկամնե՛ր, ըսաւ անտառին մէջ գենդանիներուն անցնիլ դաւնալը տեսնելով, քիչ մը քովս եկէ՛ք, երկու խօսք ընենք։» Թռչուններուն անոր ձայնը լսելով թռան գացին. իսկ ճագարները, նապաստակները մէկ բերան պատասխանեցին. «Ձենք կրնար քեզի մօտենալ, բարեկա՛մ, որովհետեւ այնքան փչոտ ես որ, եթէ քիչ մը քեզի դպչինք, անմիջապէս կը խայթուինք։»

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

202. Օրինակել այս հատուածը, և ստորագծել *նիլ, չիլ* վերջացող բայերը։

203. Սովրիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

204. Խնամարնել բերանացի և գրաւոր՝ *անցնիլ, դպչիլ* բայերը։

ԴԱՍ

109. Ո՞ր լծորդութեան պէս կը խոնարհուին *հատնիլ* եւ *թռչիլ* բայերը, եւ ի՞նչպէս կ'ըլլայ անոնց կատարեալն ու հրամայականը։ — *Հատնիլ* և *թռչիլ* բայերը Բ. Լծորդութեան՝ *հոսիլին* պէս կը խոնարհուին, բայց կատարեալին կ'ըլլայ. *հատայ, հատար, հատաւ, հատանք, հատաք, հատան։ թռայ, թռար, թռաւ, թռանք, թռաք, թռան։* Իսկ հրամայականին կ'ըլլայ. *հատի՛ր, թռի՛ր։*

110. Ո՞ր բայերը ասոնց պէս կը խոնարհուին։ — Ասոնց պէս կը խոնարհուին *նիլ* և *չիլ* վերջացող բայերը, ինչպէս. *հասնիլ, թռչնիլ, ուռնիլ, անցնիլ, հագնիլ, փախչիլ, փչչիլ, դպչիլ, կպչիլ, փակչիլ։*

205. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ովնին ինչ կ'ընէր անտառին մէջ։ 2. — Ի՞նչպէս կենդանի է ովնին։ 3. — Ինչու կը ձանձրանար։ 4. — Կենդանիները ինչու կը հեռանային իրմէ։ 5. — Ովնին ինչ ըսաւ միւս կենդանիներուն։ 6. — Որո՞նք են միւս կենդանիները։ 7. — Դեռ ուրիշ ինչ կենդանիներ կան անտառին մէջ։ 8. — Անոնք ինչ պատասխանեցին։ 9. — Ի՞նչ է այս պատմութեան բարոյականը։

206. Հետեւեալ պատմութիւնը գրել ընդարձակելով.

Սիմոն ազնիւ տղայ մըն է։ — Ամէնուն հետ քաղաքավարութեամբ կը վարուի։ — Անուշ բնաւորութիւն մը ունի, եւ ամէնքը զինքը կը սիրեն։ — Շատ բարեկամներ ունի, որոնք հաճոյք կը զգան իր ընկերակցութենէն։

207. Այս պատմութեան հակառակը գրել։

Օրինակ. — *Սիմոն կոպիտ տղայ մըն է, եւ չեն։*

33. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԿԱԿԱՉՆ ՈՒ ՄԵԼԽԱԿԸ

Փունջի մը մէջ, ուր ծաղիկներ շատ կային,
Կակաչն օր մը քովն էր ինկեր մեխակին.
Փիլ ատենէն անոր բուրումն էր առեր.
Օգտակար է միշտ ունենալ շատ ընկեր։

ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

ՆԱԼ, ՎԵՐՋԱՑՈՂ ԲԱՅԵՐԸ

ԽԵ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԱՑԾԸ

Աղուէս մը ցամքած հորի մը մէջ ինկեր էր, եւ չէր կրնար դուրս ելլել։ Այծ մը հոնկէ անցնելով մօտեցաւ, կեցաւ եւ մէջը նայեցաւ, ու աղուէսը տեսնելով հարցուց. «Ինչո՞ւ այդ տեղ իջեր ես։» — «Զովանալու համար, պատասխանեց խորամանգ կենդանին. եթէ կ'ուզես, դուն ալ հրամիէ՛, պաղ եւ անուշ ջուր կայ։» Այծը, որ ծարաւ էր եւ արեւուն տաքէն շատ կը նեղուէր, առանց գործը քննելու հասկնալու, խիզոյն հորին մէջ նետուեցաւ։ Այն ատեն աղուէսը անմիջապէս այծին եղջիւրներուն վրայ ցատկեց, հոնկէ ալ վեր ելաւ ու ազատեցաւ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

208. Օրինակել այս հատուածը, և ստորագծել նալ վերջացող բայերը։

209. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

210. Խոնարհել վախնալ, ճանչնալ, տաքնալ, հասկնալ բայերը։

ԴԱՍ

111. Բարկանալ բայը ո՞ր լծորդութեան պէս կը խոնարհուի, եւ ի՞նչպէս կ'ըլլայ կատարեալն ու հրամայականը։ — Բարկանալ բայը Գ. Լծորդութեան՝ կարդալին պէս կը խոնարհուի, բայց կատարեալը կ'ըլլայ. բարկացայ, բարկացար, բարկացաւ, բարկացանք, բարկացաք, բարկացան։ Իսկ հրամայականը կ'ըլլայ. բարկացի՛ր։

112. Ո՞ր բայերը այսպէս կը խոնարհուին։ — Այսպէս կը խոնարհուին նալ վերջացող բայերը, ինչպէս. ճանչնալ, գիտնալ, գողնալ, վախնալ, կենալ, առնալ, տաքնալ, մօտենալ, հասկնալ։

211. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչ պատահեր էր աղուէսին։ 2. — Ինչո՞ւ չէր կրնար դուրս ելլել։ 3. — Ո՞վ անցաւ հոնկէ։ 4. — Ո՞րն է հարցուց բային ենթական։ 5. — Այծը ի՞նչ հարցուց աղուէսին։ 6. — Աղուէսը ի՞նչ պատասխանեց։ 7. — Ինչո՞ւ այդպէս պատասխանեց։ 8. — Այծը ի՞նչ ըրաւ։ 9. — Այծը պէտք էր որ այդպէս վայուէր։ 10.—Ի՞նչ ընելու էր։ 11.—Ո՞վ օգտուեցաւ այծին դիւրահաւանութենէն։ 12. — Ի՞նչ կը նշանակէ դիւրահաւան ըլլալ։ 13. — Աղուէսը ի՞նչպէս օգտուեցաւ։

212. Լուծել վերոգրեալ հատուածին բոլոր բայերը։

ԼՈՒԾՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Յամրած	*Յամրիլ բայ, անցեալ ընդունելութիւն։*
Ինկեր	*Իյնալ բայ, անցեալ ընդունելութիւն։*
Էր	*Էական բայ, անցեալ անկատար, եզակի Գ. Դէմք։*

Դիտողութիւն. — *Բայ մը լուծելու համար պէտք է ըսել թէ ինչ է բային անունը եւ թէ ինչ ժամանակ, ինչ եղանակ, ինչ թիւ, եւ ինչ դէմ է։*

213. Խոնարհել *գողնալ* բայը։

34. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՇՈՏ ԹՈՒՓԸ

Փոքրիկ տըղեկ մը՝ զոր փուշն էր խայթեր,
Իր ցաւն արցունքով հօրը կը պատմէր.
«Ինչո՞ւ գեղեցիկ արտին մէջ մեր տան
Բուսեր է արդեօք այս թուփն անպիտան։»
—«Որպէս զի փորձով սորվիս դուն, տըղա՛ս,
Թէ պէտք է չարէն միշտ հեռու կենաս։»

ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

ԽԶ ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՈՐԿՐԱՄՈՂ ՏՂԱՆ

Երուանդ որկրամոլ տղայ մը էր։ Օր մը խոհանոց երթալով պնակով բան մը նշմարեց դարանի մը վրայ։ Կարծեց որ անուշեղէն մը է։ Բայց դարանը բարձր էր. եւ հարկ եղաւ երկու աթոռ իրարու վրայ դնել, ու ինք ալ անոր վրայ ելլելով, հազիւ կրցաւ ձեռքը պնակին հասցնել։ Ցանկարծ մատները խայթուեցան։ Տղան սարսափած եւ քաշուելու միջոցին՝ աթոռները շարժեցան ու ինք դեռինը ինկաւ։ Պնակին մէջ ողջ խեշտիտաները կայն, որոնք վար թափեցան։ Երուանդ վախէն սկսաւ լալ պոռալ։ Ծառաները վազեցին եկան, եւ անոր որկրամոլ բլլալը դիտնալով՝ վրան խնդացին։ Երուանդ ուրիշ անգամ առանց բան չբրաւ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

214. Օրինակել այս հատուածը, և ստորագծել անկանոն բայերը։

215. Սովրիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

216. Խոնարհել ուտել և բանալ բայերը։

ԴԱՍ

113. *Անկանոն բայերը* որո՞նք են։ — *Անկանոն են այն բայերը, որոնք առանց յատուկ օրէնքի մը կը տարբերին ընդհանուր կանոնէն կատարեալին կամ հրամայականին մէջ, և կամ երկուքին մէջ միանդամայն։*

114. Որո՞նք են *անկանոն բայերը։* — *Անկանոն բայերն են. բերել, դնել, զարնել, ընել, ուտել, տեսնել, տանիլ, գալ, լալ, տալ, երթալ, բանալ, դառնալ, իջնալ, մնալ։*

217. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Երուանդ ինչպէս տղայ է. 2. — Ի՞նչ նշմարեց խոհանոցին մէջ. 3. — Ինչու երկու անոռ դրաւ իրարու վրայ. 4. — Ի՞նչ պատահեցաւ երբ ձեռքը պնակին երկնցուց. 5. — Իյնալ անկանոն բայ է Թէ կանոնաւոր. 6. — Ի՞նչ կոր պնակին մէջ. 7. — Խեչեփառը ինչ է 8.— Ջրոյին կենդանի է Թէ ցամաքային. 9. — Երուանդ ինչու լացաւ պօռաց. 10. — Ծառաները ինչ ըրին. 11. — Ուրիշ անգամ առանկ բան ըրաւ Երուանդ. 12. — Ինչու համար չըրաւ.

218. Խոնարհել դնել և ընել բայերը՝ բերանացի և գրաւոր.

219. Սահմանական անկատարի վերածել հետեւեալ բայերը.

Ես գարնել. — Դուն ուտել. — Ան բանալ. — Մենք լալ. — Դուք գալ. — Անոնք տալ. — Ես գտնալ. — Դուն իյնալ.

Դիտողութիւն. — Լալ, տալ, գալ բայերը փոխանակ կը լի կոռ կ'առնեն խոնարհման մէջ, ինչպէս. կոռ լամ, կոռ տամ, կոռ գամ.

35. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՊԱՐԵՆԵՆԻՈՑ ԱԳՋԻԿԸ

Աղջիկ մը եկած սեղանին վրան.
«Տես, հայրիկ, կ'ըսէր, հասակս է երկայն.»
Հայրն ըսաւ անոր. «Իշխիր ատկէ դուն,
Պիտի կարճըլայ հասակդ ալ իսկոյն.»
Ո՞վ է առակիս աղջիկն անձնագով.
—Ան որ կը պարծի իր սուտ պերճանքով.

ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

—

ԱՆԵՐԵՒՈՅԹ	ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԱԼ	ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
Բերել,	Բերի, բերիր, բերաւ, բերինք, բերիք, բերին,	Բե՛ր։
Դնել,	Դրի, դրիր, դրաւ, դրինք, դրիք, դրին,	Դի՛ր։
Զարնել,	Զարկի, զարկիր, զարկաւ, զարկինք, զարկիք, զարկին,	Զար՛կ։
Ընել,	Ըրի, ըրիր, ըրաւ, ըրինք, ըրիք, ըրին,	Ըրէ՛։
Ասել,	Ասի, ասիր, ասաւ, ասինք, ասիք, ասին,	Ասէ՛։
Ուտել,	Կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան,	Կե՛ր։
Տեսնել,	Տեսայ, տեսար, տեսաւ, տեսանք, տեսաք, տեսան,	Տե՛ս։
Տանիլ,	Տարի, տարիր, տարաւ, տարինք, տարիք, տարին,	Տա՛ր։

ԱՆԵՐԵՒՈՅԹ	ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԱԼ	ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
Գալ,	Եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան,	Եկո՛ւր։
Լալ,	Լացի, լացիր, լացաւ, լացինք, լացիք, լացին,	Լա՛ց։
Տալ,	Տուի, տուիր, տուաւ, տուինք, տուիք, տուին,	Տո՛ւր։
Բանալ,	Բացի, բացիր, բացաւ, բացինք, բացիք, բացին,	Բա՛ց։
Դառնալ,	Դարձայ, դարձար, դարձաւ, դարձանք, դարձաք, դարձան,	Դարձի՛ր։
Երթալ,	Գացի, գացիր, գնաց, գացինք, գացիք, գացին,	Գնա՛։
Իյնալ,	Ինկայ, ինկար, ինկաւ, ինկանք, ինկաք, ինկան,	Ինկի՛ր։
Մնալ,	Մնացի, մնացիր, մնաց, մնացինք, մնացիք, մնացին,	Մնացի՛ր։

ԹՈՂՈՒԼ ԲԱՅԸ

Սահմանական եղանակ

ՆԵՐԿԱՅ

Եզակի		Յոքնակի	
Ես	կը թողում	Մենք	կը թողունք
Դուն	կը թողուս	Դուք	կը թողուք
Ան	կը թողու	Անոնք	կը թողուն

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Եզակի		Յոքնակի	
Ես	կը թողուի	Մենք	կը թողուինք
Դուն	կը թողուիր	Դուք	կը թողուիք
Ան	կը թողուր	Անոնք	կը թողուին

ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ

Եզակի		Յոքնակի	
Ես	թողուցի	Մենք	թողուցինք
Դուն	թողուցիր	Դուք	թողուցիք
Ան	թողուց	Անոնք	թողուցին

ԲԱՅԱՐՁԱԿ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Յոքնակի	
Ես	պիտի թողում	Մենք	պիտի թողունք
Դուն	պիտի թողուս	Դուք	պիտի թողուք
Ան	պիտի թողու	Անոնք	պիտի թողուն

ԱՆԿԱՏԱՐ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Յոքնակի	
Ես	պիտի թողուի	Մենք	պիտի թողուինք
Դուն	պիտի թողուիր	Դուք	պիտի թողուիք
Ան	պիտի թողուր	Անոնք	պիտի թողուին

Հրամայական եղանակ

Եզակի	Յոգնակի
—	*Մենք թողո՛ւնք*
Դուն թո՛ղ	*Դուք թողուցէ՛ք*

Սոորադասական եղանակ

ՆԵՐԿԱՅ

Եզակի	Յոգնակի
Ես թողում	*Մենք թողունք*
Դուն թողուս	*Դուք թողուք*
Ան թողու	*Անոնք թողուն*

ԱՆԿԱՏԱՐ

Եզակի	Յոգնակի
Ես թողուի	*Մենք թողուինք*
Դուն թողուիր	*Դուք թողուիք*
Ան թողուր	*Անոնք թողուին*

Անորոշ եղանակ

ԱՆԵՐԵՒՈՅԹ

Թողուլ

ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Թողող

ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Թողած, Թողեր

ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Թողու

Դիտողութիւն. — *Ոչ վերջացող բայերէն շատ քիչեր կը գործածուին աշխարհաբարի մէջ եւ ընդհանրապէս անկանոն խոնարհում ունին։*

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ՉԵԶՈՔ ԲԱՅԵՐ

ԽԷ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԹՈՒԽՍԸ

Մեր հաւերէն մէկը թուխսի նստեր էր։ Երեք օր առաջ՝ հաւկիթներուն պատեանները ծակելով՝ ճերմակ աղուորիկ վառեակներ դուրս ելան։ Ասոնք դեռ թեթեւ աղուամազով մը հագիւ ծածկուած՝ կը մնին, կը դողդողան։ Մայրերնին զանոնք իր վեռուրներուն ներքեւ կը տաքցնէ, կուռցովը ուտելիք կու տայ անոնց, եւ պտըտած տեղերնին վրանին կը հսկէ որ մէկը չդպչի անոնց։ Եթէ մէկը ճաղերուն մօտենայ, անոր վրայ կը յարձակի։ Զանոնք պաշտպանելու համար իր կեանքը տալու պատրաստ է այդ փոքրիկ մայրը։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

220. Օրինակել այս հատուածը, և սկզբնատառերով որոշել *ներգործական* և *չեզոք* բայերը։

221. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

222. Խոնարհել ծածկել ներգործական բային և մնալ չեզոք բային կատարեալները։

ԴԱՍ

115. *Ներգործական բայ* որո՞ւ կ'ըսուի։ — *Ներգործական կ'ըսուին այն բայերը, որոնց ենթական ուրիշի մը վրայ գործողութիւն մը կը կատարէ, ինչպէս. կը ծեծեմ տղան, կը սիրեմ մայրս։*

116. Ո՞ր բայերը *սեռի խնդիր* կ'առնեն։ — *Միայն ներգործական բայերը սեռի խնդիր կ'առնեն։*

117. *Չեզոք բայ* որո՞ւ կ'ըսուի։ — *Չեզոք կ'ըսուին այն բայերը, որոնց ենթական գործողութիւնը ինք իր վրայ կը կատարէ, ինչպէս. կը խաղամ, կը դողամ։*

223. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1.—Որո՞ւն հաւը Ծուխի նստեր էր։ 2.—Ի՞նչ կը նշանակէ Ծուխի նստիլ։ 3.—Ի՞նչ ելաւ հաւկիթներուն մէջէն։ 4.—Ո՞վ ծակեց պատեանները։ 5.—Ինչո՞վ ծակեցին։ 6.—Ի՞նչ է աղուամազը։ 7.—Մայրը ինչպէս կը տաքցնէ իր ձագերը։ 8.—Ի՞նչպէս կը կերակրէ զանոնք։ 9.—Ի՞նչ կ՚ընէ եթէ մէկը մօտենայ վառեակներուն։

224. Խոնարհել մսիլ չեզոք բային և տևսնել ներգործական բային ապառնիները։

36. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՀՐԵՇՏԱԿՆ ՈՒ ՄԱՆՆԻՒԿԸ

Հրեշտակ մ՚աղուոր լուսահեր,
Օրրանին քով վայրահակ,
Իր պատկերն հոն կը դիտէր՝
Կարծես ջուրի մէջ յստակ։

«Եկուր, կ՚ըսէր, վարդ մանկիկ,
Դուն՝ որ ինծի ես նըման,
Եկուր, ըլլանք երջանիկ.
Երկիրն է քեզ անարժան։

«Ինչո՞ւ կըսկիծ եւ վըրդով
Ձակտիդ խորշում տան քուկին,
Ինչո՞ւ աղի արցունքով
Քու խաժ աչքերդ աղօտին։

«Թող քու տունէդ ոչ ոք լայ,
Հազնի սուգի հագուստներ,
Թող քու վերջին ժամդ ըլլայ
Ծընունդիդ պէս խընդաբեր։

«Զըլլան դէմքերն հոն տըխուր,
Մահուան ողբերն անհետին.
Երբ մարդ քեզ պէս է մաքուր,
Բարեբաղդ է օրն յետին։»

Եւ հրեշտակն առաւ Թիւ,
Թեւերն ուղղեց բացիսքփիկ
Դէպ ի կայանն իր անծիր։
Մեռաւ զաւակդ, հէք մայրիկ։

ՌԸՊՈՒԼ

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԵՒ ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ

ԽԸ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ՈՍԿԻ ԵԶՆԱԿՆԵՐԸ**

Ալիս օր մը պարտէզ ելաւ վարդ քաղելու։ Վարդենի մը մօտեցաւ. բայց յանկարծ կանգ առաւ տերեւներուն մէջ ոսկի եզնակներու բոյն մը նշմարելով, որուն վրայ չորս հատ փոքրիկ ճագեր կային։ Ալիս այնքան յափշտակուեցաւ այս տեսարանէն որ ուզեց քակել տանիլ զանոնք, տուփի մը մէջ պահել, վարդ կերցնել անոնց, եւ ուզած ժամանակը դերձանի մը ծայրը կապել տալով խաղալ հետերնին. բայց վայրկեան մը խորհելէ ետքը հեռացաւ գնաց առանց բանի մը դպչելու։ Մտածեց թէ անգթութիւն էր ասիկա այդ բոյնն ու վարդենին, որոնք այնքան աղուոր յօրինուածք էին Աստուածմէ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

225. Օրինակել այս հատուածը, և ստորագծել *կրաւորական* և *անցողական* բայերը։

226. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

118. *Կրաւորական բայ* որո՞ւ կ'ըսուի։ — *Կրաւորական կ'ըսուին այն բայերը, որոնց գործողութիւնը ուրիշի մը կողմանէ կը կատարուի* ենթական վրայ, *ինչպէս*. շինել, շինուիլ. խաչել, խաչուիլ. ծեծել, ծեծուիլ։

119. *Անցողական բայ* որո՞ւ կ'ըսուի։ — *Անցողական կ'ըսուին այն բայերը, որոնց գործողութիւնը ենթական ուրիշի մը ընել կու տայ, ինչպէս*. կարդամ, կարդացնեմ. հագնիմ, հագցնեմ. գրեմ, գրել տամ. բաժնեմ, բաժնել տամ։

227. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ալիս ինչու պարտէզ գնաց։ 2. — Ինչու յանկարծ կանգ առաւ։ 3. — Ոսկի եզնակները ինչ են։ 4. — Մարդու կը վնասեն։ 5. — Ինչով կը սնին։ 6. — Ալիս ինչ ընել ուզեց։ 7. — Ինչու իր փափաքը չգործադրեց։

37. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՈՍԿԻ ԵԶՆԱԿՆԵՐԸ

Աղարթներուն վրայ ալուոր
Սատափի բոյն մ'է ինկեր.
Վարդերուն մէջ փայլուն, բոսոր,
Լեցուն ոսկի եզնակներ։

Տըզ տըզ Թուփին մէջ կը Թըռին,
Տըզ տըզ կ'ելլեն օդն ի վեր,
Եւ ոստերուն մէջ կը Թառին
Արեւուն դէմ լուսայեռ։

Կանանչ ու բիլ ճանճեր խոշոր
Կը պըտուտկին հոյլ ի հոյլ,
Թոյլ Թեւերնին Թոյր է բոլոր
Եւ ձայներնին Թեթեւ սոյլ։

Ճակատնին լայն, կըռնակնին լայն,
Թաթիկնին հաստ, լերկ ու սուր,
Բայց մանուկներ կը մօտենան
Անոնց անվախ անաղարտուռ։

Կեռ ճանկերէն չըլլայ վախնաք,
Զունին ասեղ ոչ խայթոց.
Գարնան՝ վարդի Թուփերուն տակ,
Մեծ զբօսանքն են տըղոց։

ԿՈՉԱԿԱՆ

—

ԽԹ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՊԱՏԺՈՒԱԾ ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Փոքրիկ Նեկտարը Հարմային ձեռքը ոսկի մը տեսնելով հարցուց. «Եղբա՛յր, ո՞ւրկէ գտար այդ դրամը։» — «Ծառէն բրցուցի,» պատասխանեց։ — «Ի՞նչ կ'ըսես, Հարմա՛, դրամը ծառին վրա՞յ կը բուսնի։» — «Հապա՛, քոյրս, չե՞ս գիտեր. եթէ աս ոսկին տնկես, եկող տարի ոսկիէ ծառ մը կ'ելլայ։» Եւ դրամը գգրոցին մէջ պահելով ելաւ դպրոց գնաց։ Նեկտար, որ անոր խօսքին հաւատացեր էր, վազեց դրամը գգրոցէն առաւ ու պարտէզին մէջ տնկեց։ Իրիկուան Հարմա տուն դառնալով քրոջը ըրածը իմացաւ, ու զայրացած պարտէզ վազեց. բայց փոքրիկ աղջիկը տնկած տեղը մոռցեր էր, եւ ստախօս տղան ամէն կողմ փորեց ու դրամ չգտաւ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

228. Օրինակել այս հատուածը, և ստորագծել *կոչականները*։

229. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

230. Խոնարհել *հաւատալ* բայը։

ԴԱՍ

120. Ի՞նչ է *կոչականը*։ — *Այն անձին անունը, որուն խօսք կ'ուղղենք, կոչական կ'ըսուի։ Ինչպէս. եկո՛ւր, զաւակս, հաւատարիմ զբեզ։*

121. Կոչականը ի՞նչ հոլով կ'ելլայ։ — *Կոչականը միշտ ուղղական հոլով կ'ելլայ։*

231. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Նեկտար ինչ հարցուց եղբօրը։ 2. — Հարմա ինչ պատասխանեց։ 3. — Նեկտար հաւատաց անոր ըսածին։ 4. — Հարմա դպրոց գացած տեղն դրամը ուր պահեց։ 5. — Նեկտար ինչ ըրաւ։ 6. — Երբ Հարմա դպրոցէն դարձաւ, ինչ պատահեցաւ։ 7. — Ի՞նչ է այս պատմութեան բարոյականը։

232. Կոչականներ դնել հետեւեալ կէտերուն տեղ.

. . . եկուր դպրոց երթանք։ — Ներէ իմ յանցանքիս . . . ։ — . . . գնա սուրճ մը բեր ինծի։ — . . . ինչու այդչափ տժգոյն ես։ — Գթա ինծի, ով . . . ։

233. Խոնարհել ցանիլ, բերել, զարնել անկանոն բայերը։

234. Հետեւեալ կոչականներուն ամէն մէկուն յարմար խօսքեր շինել.

Մայր . . . ։ — Ո՜վ Աստուած . . . ։ — Աղջիկս . . . ։ — Տղաք . . . ։ — Բարեկամ . . . ։ — Քոյրեր . . . ։ — Ո՜վ մարդ . . . ։

38. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄԸՋԻՒՆԸ

Եզը դաշտէն վաստակաբեկ կը դառնար
Ցամբաբար,
Մըրջիւն մըն ալ իր եղջիւրին ծայրն ելեր
Թառեր էր։
Երբ գիւղն հասան, ընկերները պօռացին
Մըրջիւնին.
«Քուրիկ մըրջիւն, այդպէս ուրկէ կը դառնաս,
Ի՞նչ է աս։»
—«Կը հարցընէք, ապուշներ,
Ձէք տեսներ,
Հողն հերկեցինք արտերուն
Օրն ի բուն։»

ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

Ծ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — **ԲԱԶԱՍԻՐՏ ԱՐԱՍԻՆ.**

Երէկ գիշեր մեր դրացիին՝ Արեւեանին տունը բռնկեցաւ։ Բոլոր թաղեցիները վազեցին եկան. սակայն տանը տանիքը փլեր էր արդէն, եւ բոլոր սենեակները բոցի մէջ էին։ Արեւեանին պզտիկ քոյրը՝ Սուրբիկը՝ մուխէն մարած դուրս հանեցին։ Խեղճ աղջիկը քիչ մնաց որ պիտի խեղդուէր հոն, եթէ Արսէն՝ մեր քաջ խոհարարը բոցերուն մէջ նետուելով՝ չազատէր զայն։ Սուրբիկին բոլոր ընտանիքը՝ հայրը, մայրը, եղբայրները եւ քոյրը երախտապարտ մնացին Արսէնին։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

235. Օրինակել այս հատուածը, և ստորագծել *բացայայտիչները*, իսկ *բացայայտեալներուն* վրայ խաչանիշ դնել։

236. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

237. Խոնարհել *վազել գալ* և *երախտապարտ մնալ* բայերը։

ԴԱՍ

122. Ի՞նչ է *բացայայտիչը*։ — Այն անունը կամ ածականը որ ուրիշ անունի մը ո՞վ կամ ի՞նչպէս ըլլալը կը բացատրէ, *բացայայտիչ* կ'ըսուի, և միւսը *բացայայտեալ*, *ինչպէս*. Նաբոլէոն՝ Ֆրանսայի *թագաւորը*. Միլտոն՝ *անգլիացի բանաստեղծը*։

238. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Երէկ գիշեր ինչ պատահեցաւ։ 2. — Ի՞նչ կը նշանակէ բը-ռընկեցաւ։ 3. — Թաղեցիները ինչ ըրին։ 4. — Ի՞նչ կը նշանակէ տանիմ։ 5. — Տուն մը ուրիշ ինչ մասերէ կը բաղկանայ։ 6. — Սուրբիկը ինչպէս դուրս հանեցին տունէն։ 7. — Ո՞վ էր Սուրբիկ։ 8. — Ի՞նչ պիտի ըլլար Սուրբիկ, եթէ Արսէն բոցերուն մէջ չնետուէր։ 9. — Ի՞նչ կը նշանակէ հրախտապատ մնալ։

239. Բերանացի պատմել այս պատմութիւնը, յետոյ գրել ինքնիրեն։

240. Խոնարհել շալ, տալ, դառնալ բայերը։

241. Հետեւեալ բայերուն գոյականները գտնել.

Հարցնել։ — Խաղալ։ — Պտտիլ։ — Գրել։ — Երգել։ — Արտասուել։ — Հառաչել։ — Վախնալ։ — Սոսկալ։ — Զարմանալ։ — Տրտմիլ։

242. Հետեւեալ բայերը յոգնակի ընել.

Կը ժողվեմ։ — Կը թղթատես։ — Կը հեգէ։ — Կը գնեմ։ — Կը ծախես։ — Կը նետէ։ — Կը ծեծեմ։ — Կը վանես։ — Կը պահէ։ — Կը կանչեմ։ — Կը ձգես։ — Կը մարի։ — Կը դեղնիմ։ — Կը կարմրիս։ — Կը մսի։

39. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԴԱՒԱՍՏԻՆ

Նաւաստի մը կը մեկնէր
Դէպ ի հեռու երկիրներ։
«Կ'երթաս, ըսաւ մէկն իրեն,
Բայց չես վախնար ծովերէն։
Հայրդ ու մեծ հայրդ ալ գացին,
Եւ զոհ եղան արկածին։»
—«Իսկ քուկին հայրդ ուր մեռաւ։»
—«Իր անկողնին մէջ հարկաւ։»
—«Ուրեմն այնտեղ դուն ինչպէս
Այսչափ գիշեր կը նընջես։»

ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

ՄԱԿԲԱՅ

ԾԱ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԽԵՉԱՓԱՌԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Օր մը խեչափառը իր պզտիկ աղջկան հետ շրջագայութեան ելեր էր։ Օդը աղուոր էր, եւ ալիքներուն տակ, կակուղ աւազին վրայ վեր վար կը պտտէին։ Յանկարծ մայրը իր աղջկան քալուածքը դիտելով ըսաւ. « Զաւա՛կս, ինչո՞ւ չիտակ չես քալեր, եւ շարունակ մէկ քովիդ կը ծռիս. չե՞ս դիտեր որ վայելչութեան դէմ է այդպէս կաղալը »։ — « Մայրի՛կ, պատասխանեց փոքրիկը, քեզմէ ինչ որ տեսնեմ՝ ան կ'ընեմ. եթէ կ'ուզես որ աղէկ քալեմ, առաջ դուն քու քալուածքդ շտկէ՛ »։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

243. Օրինակել այս հատուածը, և ստորագծել մակբայները։

244. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

245. Հետեւեալ մակբայներէն՝ տեղ, ժամանակ, բանակութիւն, հարցում, ժխտում ցուցնողները զատ զատ սիւնակներու մէջ գրել։

Երբեմն, ոչ, հոն, շատ, ետքը, երբեք, առաջ, ինչու, վաղը, այսչափ, քիչ, շատ, վեր, աղէկ, արդեօք, թերեւս։

ԴԱՍ

123. Ի՞նչ է *մակբայը։ — Մակբայ կ'ըսուին այն բառերը, որոնք գործողութեան մը տեղը, ժամանակը, կերպը, բանակութիւնը, եւն. կը ցուցնեն։*

124. Գլխաւոր մակբայները որո՞նք են։ — *Գլխաւոր մակբայներն են. այսօր, վաղը, երէկ, հիմա, ետքը, առաջ, երբեմն, երբեք, վեր, վար, այստեղ, այնտեղ, առջեւ, ետեւ, դիմաց, ինչո՞ւ, ո՞ւր, արդեօ՞ք, թերեւս, շատ, աւելի, քիչ, աղէկ, գեշ, շուտ, կամաց, այո՛, ո՛չ, եւն։*

ՄԱԿԲԱՅ

ԾԱ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԽԵՉԱՓԱՌԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Օր մը խեչափառը իր պզտիկ աղջկան հետ շրջագայութեան ելեր էր։ Օդը աղուոր էր, եւ ալիքներուն տակ, կակուղ աւազին վրայ վեր վար կը պտտէին։ Յանկարծ մայրը իր աղջկան քալուածքը դիտելով ըսաւ. « Զաւա՛կս, ինչո՞ւ չիտակ չես քալեր, եւ շարունակ մէկ քովիդ կը ծռիս. չե՞ս դիտեր որ վայելչութեան դէմ է այդպէս կաղալը »։ — « Մայրի՛կ, պատասխանեց փոքրիկը, քեզմէ ինչ որ տեսնեմ՝ան կ'ընեմ. եթէ կ'ուզես որ աղէկ քալեմ, առաջ դուն քու քալուածքդ շտկէ՛ »։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

243. Օրինակել այս հատուածը, և ստորագծել մակբայները։

244. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

245. Հետեւեալ մակբայներէն՝ տեղ, ժամանակ, բանակութիւն, հարցում, ժխտում ցուցնողները գատ գատ սիւնակներու մէջ գրել։

Երբեմն, ոչ, հոն, շատ, ետքը, երբեք, առաջ, ինչու, վաղը, այսչափ, քիչ, շատ, վեր, աղէկ, արդեօք, Թերեւս։

ԴԱՍ

123. Ի՞նչ է *մակբայը։ — Մակբայ կ'ըսուին այն բառերը, որոնք գործողութեան մը տեղը, ժամանակը, կերպը, բանակութիւնը, եւն. կը ցուցնեն։*

124. Գլխաւոր մակբայները որո՞նք են։ — *Գլխաւոր մակբայներն են. այսօր, վաղը, երէկ, հիմա, ետքը, առաջ, երբեմն, երբեք, վեր, վար, այստեղ, այնտեղ, առջեւ, ետեւ, դիմաց, ինչո՞ւ, ո՞ւր, արդեօ՞ք, թերեւս, շատ, աւելի, քիչ, աղէկ, գեշ, շուտ, կամաց, այո՛, ո՛չ, եւն։*

246. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — *Խեչափառը ո՞ւր կը պտտէր իր աղջկան հետ։* 2. — *Ի՞նչ Թերութիւն նշմարեց իր աղջկան վրայ։* 3. — *Ի՞նչ ըսաւ անոր։* 4. — *Պըզտիկը ինչ պատասխանեց։* 5. — *Ի՞նչ է այս առակին բարոյականը։* 6. — *Որո՞նք են այս հատուածին մէջ չեզոք բայերը։*

247. Խոնարհել *նշմարեալ* ներգործական բայը և *նշմարուիլ* կրաւորական բայը։

40. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԿԱՐՈՒԱԿՆ ՈՒ ՄԵԾԱՏՈՒՆԸ

Կարուակ մը կար ատենօք
Որ՝ Թէպէտ խեղճ, չըքաւոր՝
Կ՝երգէր գըւարթ եւ անհոգ
Աշխատելով ամէն օր։

Դրացի մ՝ունէր մեծատուն
Որ շըքեղ կեանք կը վարէր
Բայց ոչ հանգիստ եւ ոչ քուն
Ունէր ցորեկն ու գիշեր։

Առտուան դէմ երբ նիրհէր,
Կարուակն ելած էր արդէն,
Եւ երգելով միշտ երգեր
Կ՝արթընցընէր զայն քունէն։

Հարուստն ըսաւ օր մ՝իրեն.
«Կուզեմ բարիք մ՝ընել ես.
Հարիւր ոսկի Թող բերեն,
Ա՛ռ, ամէնքն ալ կու տամ քեզ։»

Կարուակն առաւ երբ ոսկին
Ա՛լ աշխարհք իրեն էր կարծես.
Բայց այդ գանձով Թանկագին
Հոգն ալ մըտաւ տունէն ներս։

Դադրեցաւ ձայնն իր երգին,
Քունն ալ փախաւ աչքերէն.
Տանջանքն եղաւ իր բաժին
Խաղաղ կեանքին փոխարէն։

Օր մ՝ալ զընաց հարուստին
Որ ալ հանգիստ էր առտուն.
«Ա՛ռ, ոսկիներդ, ըսաւ, սին,
Տո՛ւր քունս ու երգս ինծի դուն։»

ՀԵՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ԾԲ. ԸՆԹԵՐՑՈՒՄ — ՉՍՐՍԻՐՏ ՏՂԱՆ

Անձրեւոտ օր մը պզտիկ տղայ մը՝ դասագիրքերը առուին տակ՝ կերակուրին սակառն ալ ձեռքը բռնած՝ դժուարութեամբ կը քալէր։ Թրջուած սալայատակները սահուն էին։ Խեղճ տղան հաւասարակշռութիւնը կորսնցնելով՝ ցեխին մէջ ինկաւ, եւ դէմքը բոլորովին աղտոտեցաւ։ Թովմաս, որ ան տեղէն կ'անցնէր, փոխանակ անոր օգնելու՝ սկսաւ վրան խնդալ. «Օ՛, պարոն, այդ ի՛նչ աղուոր ես, պեխերդ ու մօրուքդ շատ շատ բուսեր են,» ոտքաց հեգնութեամբ։ Այս խօսքերը ըսած վայրկեանին՝ յանկարծ իր ոտքն ալ սահեցաւ ու այնպէս ուժգին պառկեցաւ սալայատակին վրայ որ քիթը բերանը արիւնելով՝ իր չարութեան արժանի պատիժը գտաւ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

248. Օրինակել այս հատուածը, և ստորագծել *նախադրութիւնները*։
249. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

ԴԱՍ

125. Ի՞նչ է *նախադրութիւնը*։ — *Նախադրութիւնը բառ մըն է, որ երկու բառեր միացնելու և զանոնք յարաբերութեան մէջ դնելու կը ծառայէ։*

126. Նախադրութեամբ առաջ դրուած բառը ի՞նչ կը կոչուի։ — *Նախադրութեամբ առաջ դրուած բառը անոր խնդիրը կը կոչուի։*

127. Գլխաւոր նախադրութիւնները որո՞նք են։ — *Գլխաւոր նախադրութիւններն են. վրայ, մոլ, տակ, շուրջ, ի վեր, վեր, մօտ, առջեւ, ետեւ, առաջ, ետ, առանց, համար, հետ, վար, դէմ, պէս, զատ, մեկտեղ, վար, եւայլն։*

250. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1.— Անձրեւոտ օր մը փոքրիկ տղան ինչպէս կը քալէր։ 2.— Ի՞նչ ունէր անուշին տակ եւ ձեռքը։ 3.— Ո՞վ տեսաւ զայն։ 4.— Ի՞նչ ըրաւ։ 5.— Ի՞նչ ըսաւ անոր։ 6.— Ինչո՞ւ այդպէս ըսաւ։ 7.— Ի՞նչ պատահեցաւ իրեն։ 8.— Պէտք է խնդալ ուրիշին պատահած դժբաղդութեան վրայ։

251. Նկարագրել թէ ինչպէս պիտի վարուէր բարի տղայ մը այս պարագային մէջ։

252. Խոնարհել *իցնալ* բայը։

41. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԼՈՒՐ ՏՂԱՆ

Գեղեցիկ է, կ'ըսեն, արփին,
Ծաղկին ճիւղերն ալ կը հակին
Գետին վրայ վայելչօրէն.
Թէ պերճախօս Թռչնիկն աղու
Եւ միջատներն այերաչու
Շողշող լոյսին մէջ կը պարեն։

Բոյրը, կ'ըսեն, ծաղիկներուն
Այն Թոյրերուն չափ չէ սիրուն
Որ Թերթերնուն կը ձօնէ լոյս։
Թէ բըլուրներն ալ ու ծորձոր,
Լեռներ, մարգեր, ջուրեր բոլոր,
Եւ պուրակներ եւ այգեր կոյս

Այնքան հրապոյր ունին զողտրիկ
Որ ծունկի գան պէտք է մարդիկ
Այդ պերճութեանց առջեւ շքեղ։
Բայց իմ սրտիս չէ ցաւ ու խոց
Որ չեմ տեսներ ծովն ալեկոծ,
Ոչ ալ ծաղկին գոյներն ու գեղ,

Ոչ երկինքը, ոչ շողն այգուն
Ոչ ալ պուրակն ու միրգն հասուն,
Ոչ Թռչնիկը, լոյսն անսահման . . .
Բոլոր այս պերճ բարիքներէս
Հատ մը, ով Տէր, կ'ըղձայի ես.
Տեսնել մայրիկս իմ սիրական։

ՕՐ. ՍԱՄԷՌՆՕ ՏԸ ԹԻՒՐԷՆ

ՇԱՂԿԱՊ

—

ԾԳ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՃԱՆՃՆ ՈՒ ԹԻԹԵՌՆԻԿԸ

« Անխոհե՛մ կենդանի, թեւե՛ը պիտի այրէ », *կ'ըսէր ճանճ մը՝ թիթեռնիկի մը ճրագին շուրջը թռչտիլը տեսնելով։ Խեղճ կենդանին կը դառնայ, կ'երթայ, կու գայ, վերջապէս բոցին մէջ խնալով կ'այրի։ Բայց ճանճը աւելի խոհեմ չէ. կ'երթայ կաթնամանի մը եզերքը կը թառի, յետոյ կը ծռի խմելու համար, եւ մէջը խնալով կը խեղդուի։ Թէեւ թիթեռնիկին սպառնացող վտանգը տեսեր էր, սակայն չէր նշմարեր թէ ինչ անդունդ կար իր ոտքին տակ։*

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

253. Օրինակել այս հատուածը, և ստորագծել շաղկապները։

254. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

255. Խոնարհել դառնալ, երթալ անկանոն բայերը։

ԴԱՍ

128. Ի՞նչ է շաղկապը։ — *Շաղկապ կ'ըսուին այն բառերը, որոնք բառերը կամ խօսքերը իրարու կը կապեն։*

129. Գլխաւոր շաղկապները որո՞նք են։ — *Գլխաւոր շաղկապները հետեւեալներն են. բայց, կամ, մանաւանդ, եւ, եթէ, թէ, որ, երբ, ոչ թէ, որովհետեւ, թեեւ, իսկ, որպէս զի, այլ եթէ, եւ այլն։*

256. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչ ըսաւ ճանճը Թիթեռնիկը տեսնելով։ 2. — Ի՞նչ պատահեցաւ Թիթեռնիկին։ 3. — Ճանճը անկէ աւելի խոհեմ է։ 4. — Ո՞ւր կը Թռի։ 5. — Ի՞նչ կ'ընէ յետոյ։ 6. — Եւ շաղկապը որ բառերը միացուցած է այդ խօսքին մէջ։ 7.— Սակայն շաղկապը որ խօսքերը միացուցած է իրարու։

257. Պատմեցէք այս առակը ձեր ուզած կերպովը։

258. Խոնարհեցէք այս ընթերցումին բոլոր բայերուն *սահմանական ներկան*։

42. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾԱՂԻԿԸ

Հիւծուած ծաղիկ դուն մենաւոր,
Որ փառքն եղար ծործորին,
Մրրիկներէն ցրուած բոլոր
Թերթերդ վար կը ծորին։

Մենք կ'ըլլանք զոհ նոյն մանգաղին
Եւ նոյն կամքին միշտ հըլու,
Թերթ մը կ'իյնայ քեզմէ հողին,
Եւ բաղդն ըզմեզ կը թողու։

Կորսընցուցած մարդ ցընորքներ՝
Կը հարցընէ տըրտմօրէն.
Ո՞ն աւելի վաղանցուկ էր,
Ծաղիկը թէ կեանքն իրեն։

ՄԻԼՎՈՒԱ

ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ԾԴ. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՄԵԾ ՄՕՐ Ա.ՍԵՂԸ

« Վա՜յ, ա՛լ ճանճրացայ », կըսէր Երանիկ ամէն անգամ որ մեծ մայրը ղինքը կը կանչէր ասեղը անցընելու համար։ Օր մը Երանիկ երազին մէջ տեսաւ որ բոլոր ծովը ասեղ եւ ցամաքը դերձան կտրեր էր, ու ինք միա միանակ մնացեր էր անոնց մէջ տեղը։ Կ'անցընէր, կ'անցընէր զանոնք ու չէին հատներ. թեւերը կը յոգնէին ու լալով կ'ըսէր. « Աւա՜ղ, ինչո՞ւ կը գանգատէի խեղճ մեծ մօրս ասեղէն։ Իցի՜ւ թէ նորէն քովս ըլլար, ու ամէն վայրկեան իր ասեղը միայն անցընէի։ » Երբոր արթնցաւ, երդում ըրաւ այնուհետեւ սիրով ծառայելու իր մեծ մօրը։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

259. Օրինակել այս հատուածը, և ստորագծել *ձայնարկութիւնները*։

260. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը։

261. Խոնարհել *կարդալ* ներգործական բայը և *կարդացնել* անցողական բայը։

ԴԱՍ

130. Ի՞նչ է *ձայնարկութիւնը*։ — *Ձայնարկութիւնը բառ մըն է, որ առանց խօսքին հետ կապ ունենալու՝ վախ, ցաւ, բաղձանք, զղջում և քարկոչութիւն կը յայտնէ։*

131. Գլխաւոր ձայնարկութիւնները որո՞նք են։ — *Գլխաւոր ձայնարկութիւններն են. ա՜խ, աւաղ, վա՜յ, երանի՜ թէ, իցի՜ւ թէ, անէ՜ծք, ո՜հ, ա՜ղաղ, վա՜խ, կեցցէ՛, օ՛ն, ա՜յ, եւայլն։*

262. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր.

1. — Ի՞նչ կ'ըսէր Երանիկ երբ մեծ մայրը զինքը կանչէր։ 2. — Ինչու՞ կը կանչէր։ 3. — Օր մը երազը ի՞նչ տեսաւ Երանիկ։ 4. — Ի՞նչ կ'ըսէր Երանիկ երազին մէջ։ 5. — Ինչու՞ այդպէս կ'ըսէր։ 6. — Երբոր արթնցաւ ի՞նչ ըրաւ։

263. Նկարագրել ինչ որ պիտի ընէր բարի աղջիկ մը Երանիկին տեղ։

264. Որոշել թէ հետեւեալ *ձայնարկութիւնները*ն որը *զղջում*, որը *բարկութիւն*, որը *ուրախութիւն* կը յայտնէ.

Ա՜խ, մեղք, երանի՜ թէ, վա՛յ, ա՛յ, կեցցէ՛, աւա՜ղ։

43. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄԵԾ ՄԱՅՐԸ

«Կը քընանա՞ս, զարթի՛ր, մեծ մա՛յր սիրական։
Յարդ քունիդ մէջ բերանդ ըստէպ կը շարժէր.
Չի աղօթքներդ ալ քու նիւնջիդ են նըման.
Բայց արձանն ես կարծես Կոյսին այս գիշեր.
Շըրթունքդ անշարժ՝ եւ մեղմիկ շունչդ է լըռեր։
Ինչու՞ ճակատդ այդպէս կ'իյնայ վայրահակ.
Մենք ի՞նչ ըրինք որ ա՛լ ըզմեզ չես սիրեր.
Ջահն է տըժգոյն եւ կը մըխայ մեր կըրակ.
Եթէ լըռես, պիտի մեռնինք մենք անտէր,
Մենք, կանթեղնիս, մեր հընոցին հո՛ւսկ կայծեր։
Յուրտ են ձեռքերդ. աչքերըդ շո՛ւտ թող բացուին։
Դուն կ'ըսէիր. աշխարհք մը կայ մեզմէ վեր.
Թէ կայ երկինք եւ դերեզման, կեանքն է սին.
Մահուան վրայ կը խօսէիր անվեհեր.
Ի՞նչ է մահը, մայրիկ, ինչու՞ չես ըսեր։»

Այսպէս ի զուր հեծկըլտացին անյարիր.
Այդն արթընցաւ, կը քընանար դեռ հանին.
Ջանգակն հընչեց խուլ հարուածներ օդային.
Եւ անցորդ մը տեսաւ դըռնէն հիւղակին
Թափուր մահճին, Սուրբ Գըրքին քով լալագին՝
Որբ տըղաքն որ կ'աղօթէին ծընրադիր։

ՎԻԹԹՕՌ ՀԻՒԳՕ

ՎԵՐՋ

ՅԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ

—

	Էջ
Յառաջաբան	5
Նախնական գիտելիք	8
Անուն կամ Գոյական	22
Յօդ	36
Ածական	44
Դերանուն	56
Բայ	68
Մակբայ	124
Նախադրութիւն	126
Շաղկապ	128
Զայնարկութիւն	130

ՅԱՆԿ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՒ

	Էջ
Բարի աղջիկը	8
Առտուն	10
Շնիկը	12
Մաքրասէր տղան	14
Օրիորդ Վ.ախկոտ	16
Նուարդին պուպրիկը	18
Զկնորսութեան հաճոյքը	20
Կաղանդի նուէրները	22
Ձնծղուկը	24
Զատկի տօնը	26
Մարդուս մարմինը	28
Զուարճալի պարտեզը	30
Հայ գիրերը	32
Ստախօս աղջիկը	36
Նորածինը	38
Մեր պարտեզը	40
Մեր դրացիին տղան	42
Այգին	44
Գիւղացիներուն աշխատանքը	46
Նախանձոտ տղան	48
Սարդերն ու շերամը	50
Հիւանդ բարեկամուհիս	52
Ինքնահաւան աղջիկը	54
Ծաղիկները եւ պտուղները	56
Փոքրիկ կատուները	58
Մեր պուպրիկները	62
Ծոյլ աղջիկը	64
Մեր նոր տունը	66
Հովիւը	68
Կաղնին եւ եղեգը	70
Փոսուռները	62
Լալկան տղան	76
Արծաթ դրամը	78
Ադուոր շունը	86

	Էջ
Մրջիւնը եւ աղաւնին	88
Թռչունները բոյները	90
Արքուն աղջիկը	92
Երբոր մեծնամ	94
Մերդաստիարակին խրատները	96
Աջ ձեռքը և ձախ ձեռքը	98
Գործնական խորհրդատուն	100
Բաղեղը	102
Ազնիւ ստախօսութիւն	104
Ոգնին	106
Աղուէսն ու այծը	108
Որկրամոլ տղան	110
Թուխսը	116
Ոսկի եզնակները	118
Պատժուած ստախօսութիւն	120
Բաշասիրտ Արսէն	122
Խեչափառին պատասխանը	124
Զարսիրտ տղան	126
Ճանճն ու թիթեռնիկը	128
Մեծ մօր ասեղը	130

ՅԱՆԿ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐՈՒ

		Էջ
Բարի աղջիկը		9
Գեղջուկին պանիրը	Լը Պայեի	11
Շնիկը		13
Արծիւն ու խղունջը	Հեսեւողութիւն	15
Փոքրիկ բարձիկը	Տիկին Տեպոռ Վալմոն	17
Մանուկը	Վիքթոր Հիւկօ	19
Զուարթ նաւաստին		21
Փոքրիկ վարձակալը	Հեսեւողութիւն	27
Ստախօսին պատիժը		39
Տերեւը	Առնօլտ	41
Խաղողը		45
Ծուխն ու բոցը	Լը Պոն Ժենի	51
Փուշն ու վարդը	Հեսեւողութիւն	53
Ամուլ հասկը եւ պարապ տակառը	Պուոկեն	55
Մայրը եւ երկու զաւակները	Հեսեւողութիւն	57
Պահապան հրեշտակը	Տիկին Թասքիւ	59
Բարեկամութիւնը	Տը Լօնկ	63
Տղու հարցում	Վիքթոր ցը Ժիոռկ	65
Բաղեղն ու վարդենին	Լը Պայեի	71
Փոսուռան	Ժ. Ժամ Բոռշա	73

		Էջ
Հայլին	Լուի Պարիզպօն	77
Որբատունկը եւ կնձնին	Բարկլ	79
Վարդն ու շիրիմը	Վիքտոր Հիւկօ	87
Գաղտնապահութիւն		89
Բոյնը	Լուի Թուռնիէ	91
Ձին եւ ցուլը	Լը Պայեի	93
Ծաղիկն ու թիթեռնիկը	Վիքտոր Հիւկօ	95
Մանկիկին քունը	Հեսեւոդուրիւն	97
Օձն ու փոսուռան	Լայք	99
Ծնունդին վարդերը	Առնիօլտ	101
Անծեղն ու խայտիտը	Տիկին տը լա Ֆեռանտիէռ	103
Աղբիւրն ու ծովը	Վիքտոր Հիւկօ	105
Կակաչն ու մեխակը	Հեսեւոդուրիւն	107
Փշոտ թուփը	»	109
Պարծենկոտ աղջիկը	»	111
Հրեշտակն ու մանկիկը	Ռըպուշ	117
Ոսկի եզնակները		119
Աբջիւնը	Հեսեւոդուրիւն	121
Նաւաստին	»	123
Գարուական ու մեծատունը	»	125
Կոյր տղան	Օր. Սասռնիօ տը Թիւռնեն	127
Ծաղիկը	Միլվուա	129
Մեծ մայրը	Վիքտոր Հիւկօ	131

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi
ERM1002
255.07.02.01.06.00/

ԳՐԱՏՈՒՆ Գ. Պ. ՊԱԼԵՆՑ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

ՏԱՐՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ

Կ. Պոլիս, Զատիկեանք՝ Եօգուշու, Թիւ 20

Մեծբեն. Գաղղ. լեզ Հայ. բացատրութեամբ.	*Դ. Թերզեան*	1	20
Սարուեսց տաղաչափութեան	*Ե. Գուրգեն*	3	
Բանալի ընդարձ. թուաբանութեան		12	
» **Քերականութեան օլիմպիադի**		5	
Բանարան Հայ. Գաղղ.	*Կ. Ոսկեան*	25	
Բանագիտութիւն	*Եղիշէ Ծ. Վ. Դուրեան*	3	
Գեղագրութիւն, Ընդարձակ	*Թանիրանեան*	20	
» Համառօս	»	2	
Ընթացք ի գրոց բարբառ, Ա. Տարի *Եղիշէ Ծ. Վ. Դուրեան*		5	
» » » Բ. » » » »		7	20
Թուաբանութիւն ընդարձակ	*Տ. Պօղանեան*	12	
Իրագիտութիւն, Ընդարձակ	*Ե. Թէյեան*	6	
» Համառօս	»	3	
Ծաղկաքաղ կամ Պատկերազարդ նոր Ընթերցարան.	*Մ. Հ. Ֆէյզկեան*	2	
Նախատարրք Բնագիտական եւ Բնապատմական գիտութեանց, Ա. Տարի	*Ե. Թէյեան*	5	
Նոր քերականութիւն, Հայ. Գրաբ. լեզ.	*Մ. Գաբրամանեան*	7	
Տաղաչափութիւն	*Գասապեան*	2	20
Տարրք Մաթեմատիկեան լեզուի, Ա. Տարի		3	
» » » Բ. »		5	
» » » Գ. »		5	

Գին 3 Ղրշ.

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ۱۸ ذی‌الحجه ۳۱٤ و ۸ مایس ۳۱۳
تاریخلی و ۱۳۳ نومرولی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر